

ՄԱԶԾ «Իրազեկման և հակազդեցության բարելավում Հայաստանում  
կոռուպցիայի բացահայտման գործընթացում» ծրագիր



## ԶԵԿՈՒՅՑ

*ՄԱԿ-ի «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՊԱՅԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ և ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ԳԼՈՒԽ II. ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ*

ԵՐԵՎԱՆ 2007

**Հակակոռուպցիոն հարցերով տեղացի փորձագետ**

Արմեն Խուդավերդյան, տ.գ.թ.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ** .....4  
**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ** .....5  
**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** .....8  
**ՄԱԿ-Ի ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԴԵՄ ԿՈՆՎԵՆՑԻԱ** .....13  
**ԳԼՈՒԽ II. ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ** .....13  
    ՀՈՂՎԱԾ 5. Կանխարգելիչ հակակոռուպցիոն քաղաքականությունը և պրակտիկան ..... 13  
    ՀՈՂՎԱԾ 6. Կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմին կամ մարմիններ ..... 18  
    ՀՈՂՎԱԾ 7. Հանրային հատվածը ..... 23  
    ՀՈՂՎԱԾ 8. Պաշտոնատար անձանց վարքագծի կանոնագրքերը ..... 29  
    ՀՈՂՎԱԾ 9. Հանրային գնումները և պետական ֆինանսների կառավարումը ..... 32  
    ՀՈՂՎԱԾ 10. Հրապարակային հաշվետվությունը ..... 37  
    ՀՈՂՎԱԾ 11. Դատական և դատախազական մարմիններին վերաբերող միջոցներ ..... 40  
    ՀՈՂՎԱԾ 12. Մասնավոր հատված ..... 42  
    ՀՈՂՎԱԾ 13. Հասարակության մասնակցությունը ..... 45  
    ՀՈՂՎԱԾ 14. Փողերի լվացման կանխարգելման միջոցներ ..... 49  
**Ն Ե Ր Դ Ի Ր Ն Ե Ր** .....52

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՅՈԾ	Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ՔԾԽ	Քաղաքացիական ծառայության խորհուրդ
ՀԱԱ	Համախառն ազգային արդյունք
ԿԸՀ	Կոռուպցիայի ընկալման համաթիվ
ԱՏԵՅՑ	Անցումային տնտեսությամբ երկրների հակակոռուպցիոն ցանց
ԲՀԻ	Բաց հասարակության ինտիտուտ
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի Խորհուրդ
ԶԼՄ	Զանգվածային լրատվամիջոցներ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՈՒՄԾ	Հակակոռուպցիոն ռազմավարություն և դրա իրականացման միջոցառումների ծրագիր
ՄԱԶԾ	Միացյալ ազգերի զարգացման ծրագիր
ՖՂԿ	ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոն
ԱՄՊ	Առևտրի միջազգային պալատ
OECD	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ENP	Եվրամիության եվրոպական հարևանության քաղաքականության
GRECO	Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ
UNCAC	Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիա
DFID	Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման նախարարություն

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՀ կառավարությունը վերջին տարիներին մի շարք քայլեր է ձեռնարկել կոռուպցիայի դեմ պայքարում: Սասնավորապես 2003թ. մշակվել և ընդունվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը սահմանում է կոռուպցիան, կարևորում է կոռուպցիայի դեմ պայքարում հասարակության լայն մասնակցությունը, ուղենշում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները, շեշտում հակակոռուպցիոն միջոցառումների մոնիտորինգի դերը:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը հիմնականում կողմնորոշված է կոռուպցիայի կանխարգելման միջոցառումների, նոր ինստիտուցիոնալ կառույցների, օրենսդրական դաշտի կատրելագործմանը: ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ծրագրի շրջանակներում կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ ընդունվեցին բազմաթիվ օրենսդրական փաստաթղթեր (50-ից ավելի օրենքներ և ենթօրենսդրական ակտեր), ձևավորվեցին ինստիտուցիոնալ նոր կառույցներ, երկիրը անդամակցեց հակակոռուպցիոն պայքարի միջազգային հեղինակավոր կազմակերպություններին՝ (ԵՄ-ան ԳՐԵԿՈ-ի և ՏՁՀԿ անցումային տնտեսության երկրների հակակոռուպցիոն պայքարի ցանց), ինչպես նաև ընդունվեցին ու վավերացվեցին կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ, (ԵՄ կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքացիական և քրեական կոնվենցիաների, ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիա) և այլն:

Կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման գործում ձևավորվեցին մի շարք կառույցներ: ՀՀ Նախագահի 2004թ. հունիսի 1-ի հրամանագրով ՀՀ վարչապետի գլխավորությամբ ստեղծվեց Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը: Խորհրդի կանոնակարգի համաձայն, ստեղծվեց նաև Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը ՀՀ նախագահի օգնականի նախագահությամբ: ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքում ստեղծվեց կոռուպցիայի դեմ պայքարի բաժին: Միաժամանակ ՀՀ ոստիկանության և ազգային անվտանգության կառույցների համապատասխան ստորաբաժանումներում առանձնացվեցին կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված օղակներ:

Հակակոռուպցիոն նոր ինստիտուցիոնալ կառույցների շարքում նշանակալի էր ՀՀ քաղաքացիական ծառայության և պետական առանձին ծառայությունների ( հարկային, մաքսային, ոստիկանություն, դիվազիտական, փրկարարական և այլն) մասին առանձին օրենքներով արդյունավետ և թափանցիկ սկզբունքների հիման վրա, պետական պաշտոնյաների աշխատանքի ընդունման, հավաքագրման, ծառայողական առաջխաղացման և պաշտոնաթողության գործընթացների կանոնակարգումը: Վերջիններս տեսական և գործնական պայմաններ ստեղծեցին պետական պաշտոնյաների և ծառայողների համար վարքագծի կանոնների սահմանման, նրանց վարձատրության, շահերի բախման, եկամուտների և գույքի հայտարարագրման համակարգերի ձևավորման ուղղությամբ: Նույնանման նորմեր և դրույթներ են պարունակում ՀՀ դատախազության մասին նոր օրենքը և դատական ծառայության մասին ՀՀ օրենքը, որտեղ մանրամասն նկարագրվում են դատական և դատախազական մարմինների աշխատակիցների ազնվության մեծացման և գործողությունների վերաբերյալ կանոնները:

Առաջընթաց է արձանագրվել նաև պետական գնումների համակարգում: Կատարված աշխատանքների արդյունքում պետական գնումների համակարգը հիմնականում ներդրվել է: Աշխատանքներ են տարվում Հայաստանի Հանրապետությանում պետական և տեղական մակարդակով ներքին աուդիտի համակարգի զարգացման ուղղությամբ: Ըստ ՀՀ կառավարության կողմից ընդունված ռազմավարության ներքին աուդիտի նոր համակարգը համապատասխանելու է հանրային հատվածի ներքին աուդիտի միջազգային չափանիշներին: Արտաքին աուդիտի կայացման գործում ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում ձևավորվում է սկզբունքորեն, սահմանադրորեն անկախ նոր կառույց: 2004թ. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, ինչպես նաև փողերի լվացման օրենսդրության ստեղծման գործում Հայաստանը բավականին առաջ է շարժվել: Այդ օրենքի համաձայն

հիմնադրվել է Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ), որը Հայաստանի Հանրապետության ֆինանսական հետախուզության մարմնի պաշտոնական անվանումն է:

Կոռուպցիայի կանխարգելման միջոցների շարքում ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մեջ կարևորվել է կառավարության գործունեության թափանցիկության ապահովումը, բնակչության համար տեղեկատվության մատչելիությունը, որոշումների ընդունման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցությունը: Վերջին մի քանի տարիներին Հայաստանում դրական տեղաշարժեր են արձանագրվել նաև հանրային մասնակցության զարգացման ուղղությամբ: Դրական նախադեպ է 2005 թվականից ՀՀ պետական բյուջեից հասարակական կազմակերպություններին դրամաշնորհների տրամադրման պրակտիկան: Հասարակական կազմակերպությունների ակտիվացումը կոռուպցիայի դեմ պայքարում՝ քարոզարշավների, մամուլի, հեռուստատեսության միջոցով, որոնք նոր ազդակներ հաղորդեցին հասարակությանը և հատկապես պետական մարմիններին:

Կոռուպցիայի դեմ պայքարի 2003-2007թթ. ռազմավարական ծրագրի իրականացումը, Հայաստանի անդամակցումը միջազգային հակակոռուպցիոն նախաձեռնություններին և կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կոնվենցիաներին և համաձայնագրերին միացումը, նոր պահանջներ են առաջադրում կոռուպցիայի կրճատման և կանխարգելմանը: Նկատի ունենալով, որ կոռուպցիան Հայաստանում դեռևս շարունակում է կրել համակարգային բնույթ, ապա դրա կանխարգելման միջոցների կիրառումը մնում է արդիական: Այս կոնտեքստում ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի կանխարգելման միջոցները բաժնի պահանջների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում տարվող հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղղությամբ անհարաժեշտ են մի շարք քայլերի իրականացում: Ստորև ներկայացվող առաջարկությունները կարող են իրենց արտացոլումը գտնել ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարության նախագծում, որի մշակման աշխատանքներին ձեռնամուխ է եղել ՀՀ կառավարությունը:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության նոր ծրագրի մշակման ժամանակ նպատակահարմար է կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման, օրենսդրության կիրառման արդյունք ապահովող միջոցառումների շարքում հաշվի առնել կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի, անցումային տնտեսության երկրների հակակոռուպցիոն ցանցին (OECD) և GRECO-ին անդամակցության երաշխավորություններ-հանձնարարականների պահանջները և մշակել Հայաստանին բնորոշ կոռուպցիայի գնահատման ու կանխարգելման համար անհարաժեշտ սեփական ցուցանիշների համակարգը:

Նոր հակակոռուպցիոն ռազմավարությունը կպահանջի հակակոռուպցիոն ակտիվ քաղաքականության իրականացում, որին հասնելու համար անհարաժեշտ կլինի ֆորմալացնել գործող Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի գործունեությունը, հզորացնել դրանց կարողությունները՝ համալրելով արհեստավարժ կառուցվածքային ստորաբաժանումներով: Քննարկման ինքնուրույն տարբերակ կարող է ծառայել կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և մոնիտորինգի հանձնաժողովի բազայի վրա առանձին օրենքով կոռուպցիայի դեմ պայքարի ինքնուրույն կառույցի ստեղծումը, որը կստանձնի կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության և քաղաքականության իրականացման, մոնիտորինգի կազմակերպման, կոռուպցիայի կանխարգելման հարցերով գիտելիքների ընդլայնման ու տարածման գործառնությունները, ինչպես նաև պետական ծառայողների գույքի և եկամուտների հայտարարագրման նկատմամբ վերահսկողության իրականացման, պետական ծառայողների էթիկայի կանոններով սահմանված շահերի բախման սահմանափակումների կիրառման, դրանք գործուն մեխանիզմների վերածման, պատժամիջոցներ կիրառելու լիազորությունները:

Հանրային հատվածում կոռուպցիայի կանխարգելման գործում ռազմավարական ուղղություններից պետք է դառնա «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում քաղաքական և հայեցողական պաշտոնյաներին պետական ծառայության համակարգ ներառելը, նրանց համար էթիկայի կանոններ սահմանելը և շահերի բախման վերաբերյալ սահմանափակումների կիրառումը, իսկ պետական ծառայության

համակարգում՝ էթիկայի հանձնաժողովների կարգավիճակի օրենսդրորեն սահմանումը և պետական ծառայողների համար էթիկայի կանոնների եվրոպական միասնական ստանդարտներին համապատասխանեցումը:

Պետական գնումները ողջ աշխարհում համարվում է առավել կոռումպացված ոլորտներից մեկը: Հայաստանում էլեկտրոնային գնումների համակարգի ներդրումը, գործակալության էլեկտրոնային կայքի ստեղծումը, պետական գնումների գործակալության կարգավիճակի վերանայումը, ծառայության աշխատակիցների ծառայողական կանոնակարգերի, էթիկայի նորմերի, գնումների գործընթացում սահմանված կանոնների պահպանման նկատմամբ խիստ վերահսկողության սահմանումը հնարավորություն կտան նվազեցնելու կոռուպցիոն ռիսկերը, պետական գնումների գործընթացները դարձնել, մատչելի, թափանցիկ և հրապարակային օգտվողների համար:

Հայաստանի համար կոռուպցիայի մասին հանրության տեղեկացվածության միջոցառումների շարքում կարևորվում է Կոռուպցիայի դեմ պայքարի կրթալուսավորչական քաղաքականության իրականացումը: Բնակչության կրթումը և մասնագիտական վերապատրաստումները, կոռուպցիա երևույթի և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաների ընդգրկումը կրթության պետական ծրագրերում, պետական ծառայողների վերապատրաստման դասընթացներում, «կոռուպցիա» թեմայով լուսաբանող ժուռնալիստների վերապատրաստումը, տեղեկատվության ազատության մասին օրենսդրության պահանջների պահպանումը, հակակոռուպցիոն բոլոր մարմիններին կից անանուն «տաք գիծ» հեռախոս-էլեկտրոնային կապի միջոցների հիմնումը կոռուպցիայի դեմ պայքարի լուսաբանման և բնակչության ընկալման վրա ազդելու կարևոր գործիքներ կարող են դառնալ:

Հակակոռուպցիոն քարոզչության և բնակչության տեղեկատվացվածության մեծացման գործում նպատակահարմար է հզորացնել պետական կառավարման մարմիններում հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների և տեղեկատվական կենտրոնների կարողությունները, հանրապետության բոլոր մարզերում հիմնել հակակոռուպցիոն հանրային ընդունարաններ:

Կոռուպցիայի դեմ պայքարում պետական վարչակազմի գործունեության և որոշումների ընդունման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության գործընթացներում, որպես առաջին քայլ նպատակահարմար է սկզբունքորեն վերանայել ՀՀ հակակոռուպցիան ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովում հասարակական կազմակերպությունների մասնակցության մեխանիզմները, այն հաշվով որպեսզի հասարակական կազմակերպությունները իրենց համատեղ ժողովի կազմից ընտրեն ու առաջադրեն ներկայացուցիչներ մասնակցելու հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի աշխատանքներին: Հեշտացնել և պարզեցնել քաղաքացիների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մուտքը պետական մարմիններ, ինչպես տեղեկատվության ստացման, այնպես էլ կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ դիմումների և բողոքների հայտնման գործում:

Քաղաքացիական հասարակությանը հաշվետվողականության համակարգի ձևավորման գործում էական քայլերից կարող են դառնալ կառավարության, ինչպես նաև պետական կառավարման մյուս մարմինների կողմից տարվող քաղաքականության վերաբերյալ հրապարակային հաշվետվությունների ինստիտուտի ներդրումը, որը կներառի նաև կոռուպցիայի վտանգների ու դրա հաղթահարման ձեռնարկված միջոցառումների ու արդյունքների մասին տեղեկատվությունը:

Փողերի վլացման կանխարգելման միջոցառումների շարքում առաջարկվում է փողերի վլացման կանխարգելման օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային օրենսդրության ստանդարտներին, հզորացնել Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կարողությունները, բարելավել կենտրոնի կողմից մշակվող հաշվետվությունների և վերլուծությունների իրականացման մասնագիտական մակարդակը: Սերտացնել Ֆինանսական դիտարկումների կենտրոնի համագործակցությունը ՀՀ իրավապահ մարմինների հետ, բարելավել ներկայացվող կասկածելի գործարքների վերաբերյալ վերլուծությունների ու հաշվետվությունների որակը, մեծացնել կոռուպցիայի բացահայտման դեպքերը:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Հայաստանի տնտեսական և սոցիալական նկարագիրը

Հայաստանը մայրցամաքային լեռնային երկիր է Անդրկովկասում: Ձբաղեցնում է **29800** քառակուսի կմ տարածք և ունի 3,2 մլն. բնակչություն: Այն սահմանակից է հյուսիսում Վրաստանի, հարավում՝ Իրանի, արևմուտքում Թուրքիայի և արևելքում Ադրբեջանի հետ:

Հայաստանի Համախառն ազգային արդյունքը (ՀԱԱ) 2006թ. կազմել է 5.9 մլրդ. ԱՄՆ դոլար (1989 ԱՄՆ դոլար մեկ շնչի հաշվով), իսկ տնտեսական աճը 2005 և 2006թթ. կազմել է 11% տարեկան: Մինչ անկախություն նվաճելը, Հայաստանի տնտեսությունը հիմնականում արդյունաբերական էր, որտեղ գերիշխում էին քիմիական արդյունաբերությունը, էլեկտրոնիկան, մեքենաշինությունը, սննդի և սինթետիկ կաուչուկների արտադրությունները, որնք հիմնականում կախված էին արտաքին ռեսուրսներից: Նախկին խորհրդային մորանկախ պետությունների նման, Հայաստանի տնտեսությունը տուժում էր նախկին կենտրոնացված պլանավորման ժառանգությունից և սովետական առևտրային կապերի խզումից:

Հայաստանը ունի մեծ սփյուռք (որոշ հաշվարկներով մոտ 9 մլն մարդ, որը մոտ 3 անգամ ավելի է քան Հայաստանի Հանրապետության բնակչությունն է): Հայկական համայնքները սփռված են աշխարհի համարյա բոլոր երկրներում, այդ թվում ամենախոշորները Ռուսաստանի Դաշնությունում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իրանում, Լիբանանում:

Նախկին խորհրդային միությունից Հայաստանը իր անկախությունը հռչակեց 1991թվականին: Չնայած պետական իշխանությունը Հայաստանում ներկայացված է երեք թևերով, երկիրը այնուամենայնիվ ունի նախագահական կառուցվածք: Միապալատ օրենսդիր մարմինը՝ Ազգային ժողովը կազմված է 131 պատգամավորներից, որոնցից 41 տեղ ձևավորվում է մեծամասնական , իսկ 90 տեղ համամասնական սկզբունքով: Աժ պատգամավորները ընտրվում են չորս տարի ժամկետով: 2007թ. մայիսի ընտրությունների արդյունքներով, Ազգային ժողովում ներկայացված են հետևյալ քաղաքական ուժերը՝ «Հայաստանի հանրապետական» կուսակցություն, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն, «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն, «Օրինաց երկիր» կուսակցություն և «Ժառանգություն» կուսակցություն: ՀՀ Ազգային ժողովում ճնշող մեծամասնություն կազմող «Հանրապետական» կուսակցությունը «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն հետ ստորագրել է կոալիցիոն համաձայնագիր, իսկ դաշնակցություն կուսակցությունը նրանց հետ կնքել է համագործակցության համաձայնագիր: Ընդդիմադիր ուժերը՝ «Օրինաց երկիր» կուսակցություն և «Ժառանգություն» կուսակցություն, Ազգային ժողովում ստացան ընդամենը 23 տեղ:

Հայաստանը Միավորված ազգերի կազմակերպության, ԵԱՀԿ, Եվրո-ատլանտյան համագործակցության, Առևտրի, միջազգային կազմակերպության, ԵԱՀԿ պայմանագրի, Եվրոպայի խորհրդի, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Ասիական բանկի և այլ միջազգային կազմակերպությունների անդամ է:

## Հայաստանում Կոռուպցիայի մակարդակի գնահատականը

Հայաստանում կոռուպցիայի մակարդակի գնահատման նպատակով սույն զեկույցում մենք օգտագործել ենք առավել հանրահայտ և Հայաստանի իրական կայնքում օգտագործվող ցուցանիշների համակարգ: Դրանց մեծ մասը այսօր օգտագործվում են ինչպես հակակոռուպցիոն ռազմավարության մշակման, երկրի ընդհանուր տնտեսական առաջընթացի նկարագրման, կառավարման արդյունավետության, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովման, կոռուպցիայի

<sup>1</sup> Հայաստանի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2006թ. հունվար-դեկտեմբերին, Տեղեկատվական ամսական զեկույց, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան 2007թ. էջ. 7



կրճատմանն նպատակով ստանձնած երաշխավորությունների կատարումն գնահատելու համար: Այս տեսանկյունից, առավել տարածվածը «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) կազմակերպության կոռուպցիայի ընկալման համաթիվն է: Համաձայն «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) կազմակերպության 2006թ. Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ)<sup>2</sup> ուսումնասիրության ենթարկված 163 երկրների ցանկում Հայաստանը գտնվում է 3.0-ից ցածր ԿԸՀ ունեցող երկրների շարքում (ըստ «10 - 0» սանդղակի, որտեղ «10»-ը ամենամաքուր երկրի համաթիվն է, իսկ «0»-ն՝ ամենակոռումպացվածին): Վերջին երեք տարվա ընթացքում կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանում չի արձանագրվել որևէ առաջընթաց և երկրի ԿԸՀ-ն 2004, 2005 և 2006 թվականներին համապատասխանաբար կազմել է 3.1, 2.9 և 2.9:

2006թ. օգոստոս ամսին Հայաստանի ողջ տարածքում «Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեշնլ-Հայաստան» (ՏԶԿ/ԹԻ-Հայաստան) հասարակական կազմակերպության կողմից Միավորված ազգերի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվել է Կոռուպցիայի ընկալման վերաբերյալ հարցում<sup>3</sup>: Հարցման արդյունքները ցույց են տվել, որ կոռուպցիան դեռևս շատ է մտահոգում հայաստանցիներին: Հարցման մասնակիցների ավելի քան կեսը կոռուպցիան որակել է որպես հանցագործություն կամ անբարոյականություն: 2002թ. համեմատ 2006թ. գրեթե 5 անգամ ավելի շատ հարցվող է նշել, որ կոռուպցիան միշտ էլ եղել է Հայաստանում: Հարցվողների մեծամասնությունը համոզված է, որ կոռուպցիայի մակարդակն աճել է վերջին երեք տարվա ընթացքում: Ինչպես 2002թ., այնպես էլ 2006թ. հարցման մասնակիցների մեծ մասը համարում է, որ կոռուպցիայի հիմնական դրսևորումը կաշառակերությունն ու պաշտոնեական դ իրքի չարաշահումն է՝ անձնական օգուտ ստանալու նպատակով: 2006թ. հարցվողները կրկին նշել են, որ կոռուպցիայի տարածմանը հիմնականում նպաստում են պետական պաշտոնյաները, և որ ավելի շատ կոռուպցիա առկա է Հայաստանի կառավարման համակարգի բարձր մակարդակում:

Ըստ Համաշխարհային Բանկի 2005թ. «Գործարար միջավայրի և ձեռնարկատիրական գործունեությանը վերաբերող հետազոտության»<sup>4</sup> արդյունքների կոռուպցիան Հայաստանում դարձել է գործարարությունը խոչընդոտող ավելի լուրջ հիմնախնդիր 2002թ. համեմատությամբ<sup>5</sup>: Հարցման ենթարկված ընկերությունների հավաստմամբ՝ թեև կաշառք վերցնելու հաճախականությունը նվազել է, դրա ընդհանուր գումարի բաժինը տարեկան հասույթի մեջ 2005թ. աճել է, մինչդեռ նախկին կոմունիստական այլ երկրներում այն նվազել է: Հարցման մասնակիցների կարծիքով ոչ պաշտոնական վճարներ առավել հաճախ կատարվում են պետական պատվերներ ձեռք բերելու, ձեռնարկատիրական գործունեության իրականացման արտոնագրեր և թույլտվություններ ստանալու, հանրային ծառայությունների (էլեկտրականություն և հեռախոս) բաժանորդագրվելու և սպասարկում ստանալու, հարկային պարտավորություններ կատարելու ժամանակ, ինչպես նաև՝ աշխատանքի անվտանգության, առողջապահության, հակահրդեհային, քաղաքաշինական և բնապահպանական վերահսկողական մարմինների, ինչպես նաև մաքսային ծառայության (ապրանքների ներմուծման հետ կապված) և դատարանների հետ առնչվելու ընթացքում: Հարցմանը մասնակցած ընկերությունները նաև մատնանշել են, որ առավել աճել է տնտեսական վերնախավի ազդեցությունը նոր օրենսդրության մշակման բովանդակության, ընթացակարգերի և որոշումների վրա, կամ, այլ կերպ ասած, ավելացել են պետության «զավթման» դրսևորումները:

Ըստ «Ֆրիդոմ Հաուզ» կազմակերպության կողմից 2006թ. իրատարակված «Անցումային երկրները» զեկույցի<sup>6</sup> Հայաստանում կոռուպցիայի մակարդակը չի փոխվել կառավարման ոչ մի մակարդակում: 1999թ. ի վեր երկրի կոռուպցիայի համաթիվը մնացել է անփոփոխ՝ 5.75 (ըստ «1-7» սանդղակի, որտեղ «1»-ը նշանակում է «բացարձակ մաքուր», իսկ «7»-ը՝ «բացարձակ կոռումպացված»):

Ըստ «Գելափի 2006թ. կոռուպցիայի համաթիվ» ուսումնասիրության համաձայն Հայաստանը զբաղեցրել է 82-րդ տեղը 101 դիտարկված երկրների շարքում ու դասվել որպես 69-րդը (ամենափոքր արժեքը ցույց է տալիս, որ քիչ հավանական է, որ

<sup>2</sup> [http://www.transparency.org/policy\\_and\\_indices/cpi](http://www.transparency.org/policy_and_indices/cpi)

<sup>3</sup> Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում 2006թ. [http://www.transparency.am/dbdata/UNDPbook\\_arm\\_web\\_2.pdf](http://www.transparency.am/dbdata/UNDPbook_arm_web_2.pdf)

<sup>4</sup> <http://www.info.worldbank.org/governance/beeps>

<sup>5</sup> <http://www.info.worldbank.org/governance/beeps>

<sup>6</sup> <http://www.freedomhouse.hu/nit.html>

բնակչությունն ընկալի կոռուպցիան որպես տարածված երևույթ, իսկ ամենաբարձր արժեքը համապատասխանաբար արտացոլում է դրա մեծ հավանականությունը):<sup>7</sup>

Ըստ Համաշխարհային Բանկի 2006թ. հրապարակած «Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրներում (երրորդ հաշվետվություն)» Ո՞վ է հասել հաջողությունների... և ինչու՞» զեկույցն ընդգծել է, որ, չնայած Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի մշակմանը 2003թ. և Կոռուպցիայի դեմ պայքարի բարձրաստիճան խորհրդի ստեղծմանը 2004թ., իրավիճակը Հայաստանում, կոռուպցիայի բազմաթիվ բաղադրիչների առումով, 2005թ. դարձել է ավելի վատ, քան 2002թ.:<sup>8</sup>

## **Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները:**

2004թ. հունվարին երկիրը դարձել է GRECO-ի անդամ<sup>9</sup>, իսկ 2004թ. հունիսին և դեկտեմբերին, համապատասխանաբար, ստորագրել և վավերացրել է Եվրոպայի խորհրդի «Քրեական իրավունքի մասին» և «Քաղաքացիական իրավունքի մասին» հակակոռուպցիոն կոնվենցիաները: Հայաստանը նաև ներգրավվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD)՝ նախկին խորհրդային 8 երկրների համար նախաձեռնած «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» ծրագրում<sup>10</sup>: Հայաստանի մասին GRECO-ի առաջին զեկույցն ընդունվել է 2006թ. մարտին: Այն ներառել է Հայաստանի կառավարության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության գնահատման առաջին և երկրորդ փուլերի արդյունքները: Ձեկույցը նշել է, որ Հայաստանում կոռուպցիան «...լուրջ հիմնախնդիր է, որը բացասաբար է ազդում հանրային ծառայության շատ ոլորտների վրա»<sup>11</sup>, և տվել է 24 երաշխավորություն (առաջարկություն)<sup>12</sup>: 2007թ. սեպտեմբերի 30-ը սահմանվել է որպես GRECO-ի առաջարկությունների իրականացման վերջնաժամկետ: GRECO-ի առաջարկությունների մեծամասնությունը կանխարգելիչ և բացահայտող բնույթի են և հիմնականում (24 առաջարկությունից՝ 20-ը) նպատակաուղղված են օրենքների և ընթացակարգերի ընդունմանն ու բարելավմանը: Վեց առաջարկություն վերաբերում են հանրային ծառայողների և աուդիտորների վերապատրաստմանը, մեկով առաջարկվում է համապատասխան ուսումնասիրությունների իրականացում՝ բացահայտելու կոռուպցիայի և դրա դրսևորումների առավել ամբողջական պատկերը Հայաստանում, իսկ մյուսը կարևորում է հակակոռուպցիոն միջոցառումների և դրանց իրականացման արդյունքների վերաբերյալ հանրության կանոնավոր իրազեկման անհրաժեշտությունը:

OECD-ի «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլանը» ներառում է Հայաստանը, Ադրբեյջանը, Վրաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը, Տաջիկստանը և Ուկրաինան: Այն կոչված է բարելավելու նշված երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը միջազգային փորձագետների կողմից մշակված առաջարկությունների միջոցով: Հայաստանին վերաբերող առաջարկությունները մշակվել և ընդունվել են 2004թ. հունիսի 15-18-ին Փարիզում կայացած հանդիպմանը: Հայաստանի կառավարությունը OECD-ի հակակոռուպցիոն ցանցի քարտուղարությանը պարբերաբար զեկույցում է առաջարկությունների կատարման գործընթացի վերաբերյալ: Երկրի զեկույցները ներկայացվել են 2004թ. դեկտեմբերին, 2005թ. հունիսին ու հոկտեմբերին և 2006թ. հունիսին ու դեկտեմբերին: OECD-ի 24 առաջարկությունները դասակարգված են երեք խմբերում. 1) «Ազգային հակակոռուպցիոն քաղաքականություն և ինստիտուտներ» (7 առաջարկություն). 2) «Օրենսդրություն և կոռուպցիայի քրեականացում» (8 առաջարկություն). 3) «Քաղաքացիական ծառայության թափանցիկություն և ֆինանսական վերահսկողություն» (9 առաջարկություն): OECD-ի 1-ին, 5-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 17-րդ և 20-րդ առաջարկությունները ամբողջովին կամ մասամբ համընկնում են GRECO-ի համապատասխան առաջարկությունների հետ: 2006թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցած OECD-ի մոնիտորինգի 6-րդ հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանի

<sup>7</sup> <http://www.galluppoll.com/content/?ci=25612&pg=1>

<sup>8</sup> «Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրներում (երրորդ հաշվետվություն)» Ո՞վ է հասել հաջողությունների... և ինչու՞» Համաշխարհային բանկ, 2006թ., էջ 63

<sup>9</sup> <http://www.greco.coe.int>

<sup>10</sup> <http://www.oecd.org/corruption/acn>

<sup>11</sup> <http://www.greco.coe.int/evaluations>

<sup>12</sup> Գույնը

առաջընթացը 2004թ. առաջարկությունների կատարման գործում և ընդունվել երկրի գնահատման (մոնիտորինգի) զեկույցը: Ձեկույցն ընդգծել է մի շարք դրական միտումներ, սակայն նաև նշել է, որ իրականացված միջոցառումներից շատերը միայն առաջին քայլն են կոռուպցիայի նվազեցման ճանապարհին և որ դեռևս մեծ աշխատանք է պահանջվում թեթևացնելու կոռուպցիայի «բեռը» հանրային և տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում<sup>13</sup>:

Եվրամիության եվրոպական հարևանության քաղաքականության (ENP) շրջանակներում Եվրոպական միությունն ու Յայաստանը 2006թ. նոյեմբերին վավերացրել են գործողությունների ծրագիրը, որում կոռուպցիայի դեմ պայքարը ներառված է որպես գերակա ոլորտ<sup>14</sup>: Յայաստանի գործողությունների ծրագրում հատուկ գերակայությունների մեջ ներառվել են 8 հակակոռուպցիոն միջոցառումներ, այդ թվում՝ պատշաճ քննության ապահովումը և կոռուպցիոն հանցանքների հետապնդումը, Քրեական օրենսգրքի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, դատավորների և դատախազների էթիկայի կանոնների մշակումը, պաշտոնյաների կողմից գույքի և եկամտի սխալ հայտարարագրման դեպքում պատասխանատվության սահմանումը, դատավորների աշխատավարձերի բարձրացումը և այլն: Այս գործողությունների ծրագրում նշված համարյա բոլոր միջոցառումները ներառված են նաև վերոհիշյալ կոնվենցիաներում և GRECO-ի ու OECD-ի առաջարկություններում:

2005թ. մայիսին Յայաստանը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» կոնվենցիան (UNCAC)<sup>15</sup>, որը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. հոկտեմբերին: UNCAC-ն հիմքեր է ստեղծում աշխարհով մեկ կոռուպցիայի դեմ պայքար ծավալելու համար: Կոնվենցիան անդրադառնում է կանխարգելիչ միջոցառումներին, կոռուպցիայի քրեականացմանը և օրենքների կիրառմանը, միջազգային համագործակցությանը, ակտիվների վերականգնմանը, տեխնիկական աջակցությանը և տեղեկատվության փոխանակմանը, ինչպես նաև կոնվենցիայի դրույթների իրականացման մեխանիզմներին: 2006թ. դեկտեմբերին Հորդանանում կայացած՝ UNCAC-ը վավերացրած պետությունների առաջին հանդիպմանը որոշվել է սահմանել մոնիտորինգի մեխանիզմ, որը կպարունակի պարտադիր և կամավոր դրույթներ, ինչպես նաև հիմնել միջազգային հիմնադրամ իրավական զծով փորձագետների համար ու մշակել դատական և իրավապահ մարմինների կարողությունների զարգացման համաշխարհային ծրագիր:

## **Ձեկույցի նպատակը, խնդիրներն ու հարցերի շրջանակը**

ՀՀ օրենսդրության շրջանակներում «ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի պահանջների կատարման վերլուծության և գնահատման» սույն զեկույցի նպատակն է օգնել ՀՀ կառավարությանը, իրականացնելու ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի պահանջները, օժանդակելու կոռուպցիայի կրճատմանն ուղղված կանխարգելման միջոցների կիրառման պրակտիկայի բարելավմանը:

Վերջին հանգամանքից ելնելով, ինչպես նաև նկատի ունենալով, որ Յայաստանում դեռևս շարունակում է առաջնային մնալ «վարչական կոռուպցիան», սույն զեկույցը առավելապես կողմնորոշված է կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելման միջոցների վերլուծությանն ու գնահատմանը, կառավարության կողից տարվող հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանն ու դրա իրականացման ինստիտուցիոնալ շրջանակներին օժանդակմանը: Ձեկույցում տրվում է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի կանխարգելման միջոցների պահանջները գնահատվել է կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելման միջոցների կիրառման վիճակը, ՀՀ օրենսդրությանը շրջանակներում դրանց վերլուծությունը, նկարագրվել բացերը և դրա հիման վրա, ներկայացվել համապատասխան առաջարկություններ:

Ձեկույցը նպատակ չունի նկարագրելու Յայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի ընդհանուր վիճակը, ներկայացնելու գնահատականներ ըստ առանձին բնագավառների տարվող քաղաքականության նկատմամբ: Այս զեկույցի նպատակն է վեր հանելու ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի պահանջների վերլուծության և գնահատման օրենսդրական համապատասխանությունը՝ կանխարգելիչ միջոցների մասով:

Ձեկույցում ներկայացված վերլուծության արդյունքներն, հատկապես դրանց հիման վրա կատարված առաջարկություններն, օգտակար կլինեն ՀՀ կառավարությանը

<sup>13</sup> [http://www.oecd.org/document/35/0,2340,en\\_2649\\_34857\\_37846947\\_1\\_1\\_1\\_1,00.html](http://www.oecd.org/document/35/0,2340,en_2649_34857_37846947_1_1_1_1,00.html)

<sup>14</sup> [http://www.aeplac.am/pdf/enp\\_ap\\_arm.pdf](http://www.aeplac.am/pdf/enp_ap_arm.pdf)

<sup>15</sup> [http://www.unodc.org/pdf/crime/convention\\_corruption/signing/Convention-e.pdf](http://www.unodc.org/pdf/crime/convention_corruption/signing/Convention-e.pdf)

2007թ. նախանշած հակակոռուպցիոն նոր ռազմավարության մշակման գործում, ինչպես նաև դոնոր հանրությանն հակակոռուպցիոն նախաձեռնությունների իրականացման գործում քաղաքացիական հասարակության միավորումների մասնակցությամբ ապահովելու համագործակցություն:

### **Ձեկույցի մեթոդաբան**

Սույն փաստաթուղթը խորհրդատվական բնույթ ունի և պատրաստվել է ՄԱԶԾ-ի կողմից հակակոռուպցիոն հարցերով փորձագետի և ՄԱԶԾ “Իրազեկման և հակազդեցության բարելավում Զայաստանում կոռուպցիայի բացահայտման գործընթացում” ծրագրի աշխատակիցների անմիջական աջակցությամբ ու մասնակցությամբ: Ձեկույցի նախապատրաստման ժամանակ օգտագործվել է ԶԶ գործող օրենսդրությունը, համապատասխան գերատեսչական փաստաթղթեր, միջազգային մասնավորապես WB, UNDP, DFID, OECD, GRECO և այլ կազակերպությունների կողմից իրականացված ուսումնասիրություններ, հետազոտություններ, հարցումներ ու զեկույցներ: Անհատական հանդիպումներ են կատարվել համապատասխան պետական կառավարման և հասարակական ու մասնագիտական միությունների ներկայացուցիչների հետ : Զարգացողույցների միջոցով ստացվել են պարզաբանումներ և տեղեկատվական նյութեր:

Փորձադիտական խումբը իր շնորհակալություն է հայտնում ԶԶ կառավարության աշխատակազմին, ԶԶ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովին, ԶԶ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն, ԶԶ արդարադատության նախարարությանն, ԶԶ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությանն, ԶԶ դատախազությանը, ԶԶ Կենտրոնական բանկին, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) և ԶԶ առևտրա-արդյունաբերական պալատին անմիջական աջակցության, նյութերի տրամադրման և օգտակար հանդիպումների համար:

## ՄԱԿ-Ի ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ԿՈՆՎԵՆՑԻԱ ԳԼՈՒԽ II. ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

### ՀՈԴՎԱԾ 5. Կանխարգելիչ հակակոռուպցիոն քաղաքականությունը և պրակտիկան

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է մշակի և իրականացնի կամ վարի հանրության մասնակցությանը և օրենքի գերակայության սկզբունքների արտացոլմանը, պետական գործերի և պետական գույքի պատշաճ կառավարմանը, ազնվությանը և անկաշառությանը, թափանցիկությանը և պատասխանատվությանը նպաստող՝ կոռուպցիայի հակազդման արդյունավետ, համակարգված քաղաքականություն:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի սահմանել և խրախուսել կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված պրակտիկայի արդյունավետ տեսակները:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի պարբերաբար գնահատել համապատասխան իրավական փաստաթղթերը և վարչական միջոցները՝ կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի տեսանկյունից դրանց համարժեքությունը որոշելու նպատակով:

4. Մասնակից պետությունները, համապատասխան դեպքերում և իրենց իրավական համակարգերի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է փոխգործակցեն միմյանց և համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ սույն հոդվածում նշված միջոցների մշակմանը և իրականացմանն աջակցելու գործում: Այդ փոխգործակցությունը կարող է ներառել մասնակցությունը կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջազգային ծրագրերին և նախագծերին:

### ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

ՀՀ կառավարությունը առանձնակի կարևորելով կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ վարչապետի 2001թ. հունվարի 22-ի N 44 որոշմամբ ստեղծեց՝ ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ծրագրերի հետ կապված աշխատանքները համակարգող հանձնաժողով: 2001թ. ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության հայեցակարգն արժանացավ միջազգային կազմակերպությունների հավանությանը, որի արդյունքում Համաշխարհային բանկի տրամադրած դրամաշնորհի շրջանակներում կազմավորված փորձագետների կողմից մշակվեց ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը:

ՀՀ կառավարության կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը ամրագրված է «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2003թ նոյոմբերի 6-ի թիվ 1522-Ն որոշմամբ հաստատված փաստաթղթում: Հակակոռուպցիոն ռազմավարության նպատակը կոռուպցիայի հաղթահարումն է, այն ծնող եւ տարածմանը խթանող պատճառների ու պայմանների վերացումն է, հանրապետությունում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորումը, որն էլ իր հերթին կնպաստի ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության եւ իրավական պետության հիմնավոր հաստատմանը, ազատ տնտեսական մրցակցությանը, տնտեսության զարգացմանն ու աղքատության նվազեցմանը:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոցներն են օրենքի գերակայության վրա հիմնված պետական արդար կառավարման համակարգի ստեղծումը, գործադիր , օրենսդիր, դատական իշխանության մարմինների, ինչպես նաեւ պետական ծառայության, վերահսկողության մարմինների եւ աուդիտորական հաստատությունների, լրատվամիջոցների, մասնավոր ոլորտի, գնումների, տեղական ինքնակառավարման

համակարգերում արդար կառավարման համակարգի սկզբունքների ներդրումը, կոռուպցիոն երեւոյթների բացահայտումն ու դրանցում ներգրավված մարդկանց համապատասխան պատասխանատւոյան ենթարկելը, հանրային իրազեկոյան կամակերպումը, հասարակոյան մասնակցոյւնը կոռուպցիայի դէմ պայքարում: Այդ միջոցների շարքին են դասվում նաև պետական պաշտոնյաների համար վարվելակերպի կանոնների և էթիկայի նորմերի մշակումն ու կիրարկումը, պետական հաստատոյւնների արտաքին ու ներքին աուդիտի համակարգերի կատարելագործումը, անդամակցումը միջազգային և տարածաշրջանային հակակոռուպցիոն նախաձեռնոյւնների:

Կոռուպցիայի դէմ պայքարն իր մեջ ներառում է երեք հիմնական ուղղոյւն:

1. Հասարակոյան կողմից կոռուպցիայի եւ դրա հետեւանքների հասարակական վտանգավորոյան աստիճանի գիտակցման արմատավորում:

2. Կոռուպցիայի կանխարգելում:

3. Օրենքի գերակայոյան ապահովում՝ ուղղված անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանոյանը:

Առաջին ուղղոյւնում կարելոյւն է հակակոռուպցիոն ռազմավարոյան մշակման, հանրոյան կրթոյան, հակակոռուպցիոն պայքարում քաղաքացիական ինստիտուտների համախմբման, անկախ ՁԼՄ-ների դերը:

Երկրորդում՝ իշխանոյւնների քաղաքական կամքի, պետական կառավարման համակարգի կատարելագործման, պետական կառավարման հասարակոյան մասնակցոյան, հասարակական գործընթացներին պետոյան միջամտոյան, պետական պաշտոնյաների կողմից վարքագծի կանոնների պահպանման դերը:

Երրորդում՝ ուժեղ ու անկախ դատական իշխանոյան, օրենսդրական դաշտի հստակեցման եւ կարգավորման, օրենքների պարտադիր կատարման ապահովման, անձանց իրավունքների պաշտպանոյան եւ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի դերը:

Ինչպէս վկայում է ռազմավարոյան վերլուծոյւնը այն հիմնականում կողմնորոշված է կանխարգելիչ միջոցառումների, նոր ինստիտուցիոնալ կառույցների, օրենսդրական դաշտի կատարելագործմանը:

2006թ. քաղաքացիների հարցումները<sup>16</sup> ցույց են տալիս, որ Հայաստանում առավելապէս կոռումպացված ոլորտների և ծառայոյւնների շարքում, պետավտոտեսչոյւնը շարունակում է համարվել շատ կոռումպացված ոլորտ: Բացի այդ, հարցվողների մեծ մասը որպէս ամենակոռումպացված մատնանշել է ընտրական համակարգը և հարկային ծառայոյւնը, մինչդէռ 2002թ. որպէս այդպիսին նշվել էին բանակը և առողջապահոյւնը: 2006թ. կրթոյւնը և առողջապահոյւնը պետավտոտեսչոյան հետ մեկտեղ զբաղեցրել են առաջին, երկրորդ և երրորդ տեղերը երեք առավել կոռումպացված ոլորտների և ծառայոյւնների շարքում: 2006թ. հարցումը բացահայտել է նաև նոր ոլորտներ, որոնցում կատարվել են ոչ պաշտոնական վճարումներ: Դրանք են իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայոյւնը, օտարերկրյա դեսպանատները, բնապահպանոյանն առնչվող ծառայոյւնները, համատիրոյւնները և քաղաքացիական կացոյան ակտերի գրանցման գործակալոյւնը՝ ի հավելումն առողջապահոյան, կրթոյան, պետավտոտեսչոյան, հարկային, մաքսային և անշարժ գոյքի կադաստրի ծառայոյւնների, բանակի, տեղական ինքնակառավարման մարմինների, նոտարական գրասենյակների, որոնք նշված են եղել 2002թ.:

<sup>16</sup> Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում 2006թ. [http://www.transparency.am/dbdata/UNDPbook\\_arm\\_web\\_2.pdf](http://www.transparency.am/dbdata/UNDPbook_arm_web_2.pdf)

Գիտակցելով կոռուպցիայի վտանգը՝ Հայաստանի իշխանությունները վերջին տարիներին կոռուպցիայի դեմ ուղղված մի շարք քայլեր են ձեռնարկել: Մինչ այժմ մի շարք ուղղություններով (պետական կառավարման, հարկային եւ բանկային, արդարադատության համակարգերի) իրականացված բարեփոխումների արդյունքում առկա է դրական տեղաշարժ: Մասնավորապես, ընդունվել են տասնյակ իրավական ակտեր, որոնք ունեն հակակոռուպցիոն ուղղվածություն, ներդրվել են հակակոռուպցիոն ուղղվածություն ունեցող այնպիսի նոր համակարգեր, ինչպիսիք են քաղաքացիական ծառայության ինստիտուտը, պետական գնումները, ստուգումների կազմակերպման եւ անցկացման, պաշտոնատար անձանց գույքի ու եկամուտների հայտարարագրման, լիցենզավորման, իրավաբանական անձանց պետական գրանցման եւ նոտարիատի նոր համակարգերը, կանոնակարգվել են պետական ծառայության հատուկ տեսակները (ոստիկանական, զինվորական, մաքսային, հարկային եւ դիվանագիտական և այլն):

ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ծրագիրը 2003-2007թթ. համար իր առաքելությունը իրականացրեց մասնավորապես կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ բազմաթիվ օրենսդրական փաստաթղթերի ընդունման (50-ից ավելի օրենքներ և ենթօրենսդրական փաստաթղթեր), ինստիտուցիոնալ նոր կառույցների ստեղծման, հակակոռուպցիոն պայքարի միջազգային հեղինակավոր կազմակերպություններին՝ (ԵՄ-ան ԳՐԵԿՈՒ-ի և ՏԶՀԿ անցումային տնտեսության երկրների հակակոռուպցիոն պայքարի ցանց)<sup>17</sup> անդամակցման, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի ընդունման ու վավերացման գործում, (ԵՄ կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքացիական և քրեական կոնվենցիաների, ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիա) և այլն: Համագործակցություն է ծավալված Թրանսփարենսի ինթերնեշնլ-Հայաստան, տարածաշրջանային զարգացման կենտրոն կազմակերպության, կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավված հասարակական մի շարք կազմակերպությունների հետ: Վերը նշված համագործակցության շրջանակներում Հայաստանի համար մշակվել և համաձայնեցվել են երաշխավորություն- համաձայնություններ, որոնց կատարման վերաբերյալ Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչները զեկույցներ են ներկայացնում պլենար նիստերին և արձանագրվում է առաջընթացն ու բացերը<sup>18</sup>: Այս փաստաթղթերով ստանձնած երաշխավորությունների կատարումը մեր երկրի առջև ծառայած մարտահրավերներից է:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը միավորված են մեկ փաստաթղթում: Միջոցառումների ծրագրի ավարտման ժամկետներ է սահմանված 2007թ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագրի իրականացման ընթացքը և կատարողականի գնահատականը քննարկվել է ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդում:

ՀՀ հակակոռուպցիոն 2007-2009թթ. նոր ռազմավարության մշակման ուղղությամբ աշխատանքները նախապատրաստման փուլում են: Ռազմավարական ծրագրի մշակման քաղաքական պատվերը ձևավորված է 2007թ. հունիսի 26-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրում<sup>19</sup> փաստագրելով, որ «Կոռուպցիայի դեմ պայքարում կառավարության հիմնական խնդիրներից է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն նոր ռազմավարության մշակումը»: Չնայած վերջինիս ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի դեռևս 2006թ. ապրիլյան և սեպտեմբերյան նիստերում քննարկվել է ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարության վերամշակման վերաբերյալ առաջարկությունները և հանձնարարվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովին ՀՀ նախարարություններին և գերատեսչություններին հետ մշակելու 2007-2009թթ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարական նոր ծրագիր:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի 2007թ. նիստերում մանրամասն քննարկվել են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մշակման կազմակերպական հարցերը, մոտեցումները, ձևերն ու եղանակները : 2007թ. Սեպտեմբերի

<sup>17</sup> Մանրամասն տես [http:// www.greco.coe.int](http://www.greco.coe.int) and [www.oecd.org/corruption/acn](http://www.oecd.org/corruption/acn) էլեկտրոնային կայքերը

<sup>18</sup> Մանրամասն տես [http:// www.greco.coe.int](http://www.greco.coe.int) and [www.oecd.org/corruption/acn](http://www.oecd.org/corruption/acn) էլեկտրոնային կայքերը:

<sup>19</sup> ՀՀ կառավարության ծրագիրը [http://www.gov.am/armversion/programms\\_9/pdf/Nrk2007.pdf](http://www.gov.am/armversion/programms_9/pdf/Nrk2007.pdf)

7-ին կայացել է ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստ, խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Ս. Սարգսյանի գլխավորությամբ, որտեղ քննարկվել է ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարության նախագծի մշակման նախապատրաստական աշխատանքների հայեցակարգը, հաստատվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի կազմը: Համաձայն խորհրդի կողմից կայացած որոշման, ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարության նախագծի մշակման աշխատանքների կազմակերպման նպատակով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի վրա է դրվել նոր ռազմավարության մշակման աշխատանքային խմբի լիազորությունները և այդ նպատակով մոնիտորինգի հանձնաժողովը համալրվել է նոր անդամներով, ի դեմս ՀՀ ԿԲ-ի, ՀՀ արդարադատության, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների, ՀՀ դատախազության, ՀՀ վերահսկիչ պալատի ներկայացուցիչներով: Բացի այդ, խորհրդի կողմից հաստատվել են հակակոռուպցիոն նոր ռազմավարության մշակման սկզբունքները: Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի մշակման նախապատրաստական քայլերը ներկայումս ընթացքի մեջ են, սակայն դեռևս գործնական քայլեր չեն ձեռնարկվել աշխատանքները սկսելու ուղղությամբ:

## ԲԱՑԵՐԸ

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը չի կողմնորոշված կոնկրետ արդյունքների ստացմանը, կոռուպցիայի դեմ պայքարում ամբողջությամբ չի ներառում այսպես կոչված «պաշտպանված բնագավառները»:

Հանրության կրթության, քարոզչության, քաղաքացիական հասարակության մասնակցության գործընթացներն իրականացվում են քաղաքացիական հասարակության կողմից: Այս ուղղությամբ պետության կողմից ձեռնարկված կոնկրետ քայլեր նախատեսված չեն: Կոռուպցիայի և դրա դեմ պայքարի միջոցառումների մոնիտորինգի և գնահատման համակարգը ձևավորման փուլում է: Այն ամրապնդված չէ գործուն մեխանիզմներով: Իրականացվող մոնիտորինգը վարչական է և սահմանափակվում է օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ կոնկրետ նախագծերի ընդունման մասին որոշումների կայացմամբ:

Հետադարձ կապը քաղաքացիական հասարակության հետ թույլ է: Համաձայն 2006թ. Թրանսփարենսի ինթերնեշնլ-Հայաստան, տարածաշրջանային զարգացման կենտրոն կազմակերպության հարցման արդյունքների<sup>20</sup>, հասարակությունը տեղյակ չէ Հակակոռուպցիոն ռազմավարության, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և դրան կից Մոնիտորինգի հանձնաժողովի, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների մասին: Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության վերաբերյալ հարցին 2006թ. հարցվածների նույնքան մասը, ինչքան և 2002թ., պատասխանել է, որ այն մասամբ արդյունավետ է, և համարյա նույնքանը՝ որ այն արդյունավետ չէ:

Չնայած ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովը ստանձնել է կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների (երաշխավորություն-հանձնարարականների) կատարման նկատմամբ հսկողության իրականացման և մոնիտորինգի գործընթացը, այն դեռևս իրականացվում է մասնակիորեն, ըստ նախանշված միջոցառումների: Միջազգային հակակոռուպցիոն համաձայնագրերով, կոնվենցիաներով և առանձին տարածաշրջանային նախաձեռնություններով սահմանված երաշխավորություն-հանձնարարականներն չեն ձևավորվել որպես հակակոռուպցիոն ռազմավարության ուղղություններ:

## ԱՈՍՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով վերոնշյալ վերլուծությունից նպատակահարմար է՝

- ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության նոր ծրագրի մշակման հիմքում դնել հակակոռուպցիոն քաղաքականության այնպիսի հիմնադրույթները, որոնք հաշվի կառնեն կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման, օրենսդրության կիրառման և արդյունք ապահովող միջոցառումները:

<sup>20</sup> Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում 2006թ. [http://www.transparency.am/dbdata/UNDPbook\\_arm\\_web\\_2.pdf](http://www.transparency.am/dbdata/UNDPbook_arm_web_2.pdf)



- ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարության, մշակման ժամանակ հաշվի առնել Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի, անցումային տնտեսության երկրների հակակոռուպցիոն ցանցին (OECD) և GRECO-ին անդամակցության երաշխավորություններ-հանձնարարականները:
- ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարության մեջ արդյունքային՝ Թրանսպեռենսի Ինթերնեյշնլ-ի «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը», «Ֆրիդոմ Չաուզ»-ի Տրանզիտ կոռուպցիայի գործակիցը, Համաշխարհային բանկի Ինստիտուցիոնալ կառավարման ցացանիշներից Կոռուպցիայի հսկողության ցուցանիշների շարքում ամրագրել և մշակել Հայաստանին բնորոշ կոռուպցիայի գնահատման համար անհարժեշտ սեփական ցուցանիշների համակարգը:

## **ՉՈՂՎԱԾ 6. Կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմին կամ մարմիններ**

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի մարմնի կամ, անհրաժեշտության դեպքում, մարմինների առկայությունը, որոնք իրականացնում են կոռուպցիայի կանխարգելում այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են.

ա) սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում նշված քաղաքականության իրականացումը և, համապատասխան դեպքերում, այդպիսի քաղաքականություն իրականացման հսկողությունը և համակարգումը.

բ) կոռուպցիայի կանխարգելման հարցերով զիտելիքներն ընդլայնելը և տարածելը:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, սույն հոդվածի 1-ին կետում նշված մարմին կամ մարմիններին պետք է ապահովի անհրաժեշտ ինքնուրույնությամբ, որպեսզի մարմինը կամ մարմինները կարողանան իրականացնել իրենց գործառույթներն արդյունավետ և անհարկի ազդեցությունից ազատված: Կտրամադրվեն անհրաժեշտ նյութական պաշարներ և մասնագիտացված անձնակազմ, ինչպես նաև անձնակազմի այնպիսի դասընթացներ, որոնք կարող են պահանջվել նրանց գործառույթների իրականացման համար:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հայտնի այն մարմնի կամ մարմինների անվանումները և հասցեները, որոնք կարող են աջակցել մյուս Մասնակից պետություններին կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ որոշակի միջոցների մշակման և իրականացման գործում:

## **ԱՌԿԱ ՎԻՃԱԿ**

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը ստեղծվել է ՀՀ նախագահի 2004թ. հունիսի 1-ի հրամանագրով՝ ելնելով Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն քաղաքականության ամբողջական եւ արդյունավետ իրականացման համար պետական լիազորված մարմինների գործունեության համադրման անհաժեշտությունից եւ կոռուպցիայի առաջացման ու տարածման պատճառները վերացնելու, դրանց կանխարգելման ուղղությամբ տարվող պետական քաղաքականությունը կատարելագործելու նպատակով: Խորհուրդը նախագահում է ՀՀ վարչապետը: Խորհրդի կազմում ընդգրկված են ՀՀ ԱԺ նախագահի տեղակալը, ԱԺ վերահսկիչ պալատի նախագահը, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը, արդարադատության նախարարը, ՀՀ նախագահի խորհրդականը եւ վերահսկողական ծառայության ղեկավարը, ՀՀ գլխավոր դատախազը, Կենտրոնական բանկի նախագահը, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահը:

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը աջակցում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն պետական քաղաքականության իրականացմանը: Խորհրդի հիմնական գործառույթներն են՝

ա) համակարգել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի միջոցառումների իրականացման աշխատանքները եւ դիտարկումներ (մոնիտորինգ) իրականացնել դրանց նկատմամբ.

բ) հաստատել հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կազմը.

գ) քննարկել հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունները.

դ) համադրել համապատասխան լիազորություններով օժտված մարմինների գործունեությունը՝ կոռուպցիոն դրսեւորումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակման ընթացքում.

ե) ձեռնարկել միջոցներ հակակոռուպցիոն ռազմավարությունից եւ միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից բխող՝ Հայաստանի

Հանարապետության ստանձնած այլ միջոցառումների իրականացման համար.

զ) ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում տարածաշրջանային եւ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը.

է) կազմակերպել եւ համակարգել Հայաստանի Հանրապետության գերատեսչական հակակոռուպցիոն ծրագրերի մշակման եւ իրականացման գործընթացը.

ը) իր աշխատանքների արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր կիսամյակ զեկույց ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին:

Իրեն վերապահված խնդիրների և գործառույթների համապատասխան կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը 2004թ.սկսած կազմակերպել է 10 նիստեր, միջին հաշվով եռամսյակը մեկ անգամ, որոնց ժամանակ քննարկվել են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի և դրա իրականացման միջոցառումների կատարման ընթացքը՝ ըստ ծրագրի համապատասխան բաժինների և միջոցառումների: Մասնավորապես խորհուրդը քննարկել և համապատասխան ցուցումներ ու հանձնարարականներ է տվել ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության, ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի, ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի, ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև քաղաքացիական ծառայության ոլորտներին վերաբերող ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի իրականացման ընթացքի մասին<sup>21</sup>: Բացի այդ, խորհուրդը կոնկրետ հանձնարարականներ է տվել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում փոփոխություններ կատարելու ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի առաջարկության վերաբերյալ: Վերջինիս ներկայացված տարբերակը հանձնարարվել է ներկայացնել հասարակական քննարկման, վեցամսյա ժամկետում ամփոփել ստացված առաջարկությունները և դրանք ներկայացնել շահագրգիռ պետական մարմինների քննարկմանը: Բացի այդ, հանձնարարվել է շահագրգիռ մարմինների հետ քննարկել 2007-2009 թթ. իրականացվելիք հակակոռուպցիոն միջոցառումների հարցը: Խորհուրդը առանձին անդրադարձել է նաև միջազգային կոնվենցիաներով և համաձայնագրերով կոռուպցիայի դեմ պայքարում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքին, ինչպես նաև դրանց կատարման վերաբերյալ զեկույցներին ու երաշխավորություններին, դրանց կատարման ապահովման նպատակով սահմանվել են կոնկրետ հանձնարարականներ և կայացվել որոշումներ:

Խորհրդի կանոնակարգի համաձայն, ստեղծվել է նաև Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով (այսուհետ հանձնաժողով) ՀՀ Նախագահի օգնականի նախագահությամբ: Հանձնաժողովը կազմված է Նախագահից եվ անդամներից: Հանձնաժողովի յոթ անդամ ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների եվ խմբերի, ինչպես նաև նրանց կողմից առաջարկված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ցուցակից: Հանձնաժողովի կազմում ընդգրկված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների եվ խմբերի կողմից առաջարկված Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները փոփոխվում են տարեկան մեկ անգամ՝ ռոտացիոն կարգով՝ Խորհրդի որոշմամբ: Հանձնաժողովի նախագահը եվ անդամները Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝

ա) անցկացնել հակակոռուպցիոն ռազմավարության եւ գերատեսչական հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման նկատմամբ դիտարկումներ (մոնիտորինգ) ներգրավելով հասարակայնության, զանգվածային լրատվության միջոցների եւ քաղաքացիական

<sup>21</sup> [http://www.gov.am/armversion/premier\\_2/primer\\_council\\_6hashvet.htm](http://www.gov.am/armversion/premier_2/primer_council_6hashvet.htm)

հասարակության ինստիտուտների ներկայացուցիչներին:  
 բ) ուսումնասիրել եւ ընդհանրացնել կոռուպցիայի դեմ պայքարի գործում միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության պետական մարմինների փորձը եւ առաջարկություններ նախապատրաստել հակակոռուպցիոն պայքարի մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ:  
 գ) դիտարկումներ իրականացնել Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերից բխող պարտավորությունների եւ հանձնառությունների, միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունների (երաշխավորությունների) ներդրման եւ կատարման նկատմամբ:  
 դ) կոռուպցիոն հնարավոր ռիսկերի բացահայտման նպատակով իրականացնել իրավական նորմատիվ ակտերի նախագծերի փորձաքննություն եւ ներկայացնել առաջարկություններ դրանց կատարելագործման վերաբերյալ:  
 Չանձնաժողովն իր առջև դրված խնդիրների լուծման համար իրավունք ունի՝

- պետական եվ տեղական ինքնակառավարման մարմիններից ու այլ կազմակերպություններից օրենքով սահմանված կարգով պահանջել եվ ստանալ իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն, վիճակագրական տվյալներ ու այլ փաստաթղթեր,
- Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, ստացված փաստաթղթերի հիման վրա կատարել դիտարկումներ եվ հետազոտություններ,
- կազմել աշխատանքային խմբեր կամ ենթախմբեր,
- առանձին հարցերի քննարկումները նախապատրաստելու համար իր աշխատանքներին ներգրավել փորձագետներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ,
- հանձնաժողովի նիստերին հրավիրել զանգվածային լրատվության միջոցների, միջազգային, հասարակական եվ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, անհատներ:
- կազմակերպել կոռուպցիայի դեմ պայքարի հարցերին նվիրված համաժողովներ, սեմինարներ, հեռուստահաղորդումներ, ինչպես նաեվ տարբեր բնույթի այլ քննարկումներ:

Հանձնաժողովն իրականացնում է իր աշխատանքների լուսաբանումն ու ապահովում է իր գործունեության հրապարակայնությունը: Աշխատանքային խումբը կամ ենթախումբը կազմավորվում է գերատեսչական, ճյուղային կամ կոնկրետ հարաբերություններում դիտարկումներ իրականացնելու նպատակով: Խմբերի կամ ենթախմբերի կազմը, գործունեության շրջանակը եվ ժամկետները սահմանվում են Հանձնաժողովի որոշմամբ: Աշխատանքային խմբերը կամ ենթախմբերը գործունեության ընթացքում նախապատրաստում են զեկույցներ, որոնք Հանձնաժողովին է ներկայացնում տվյալ խմբի գործունեությունը համակարգող Հանձնաժողովի անդամը:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը իր գործունեության ընթացքում հրավիրել է 12 նիստեր, որոնց ժամանակ քննարկել և առաջարկություններ է ներկայացրել ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի և դրա իրականացման միջոցառումների կատարման ընթացքի, դիտարկումներ է իրականացնել Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերից, մասնավորապես GRECO և OECD անցումային տնտեսության երկրների հակակոռուպցիոն ցանցի կազմակերպություններին անդամակցության երաշխավորություններ-հանձնարարականների կատարման ընթացքի, դրանցից բխող պարտավորությունների եւ հանձնառությունների, ներկայացված առաջարկությունների (երաշխավորությունների) ներդրման նկատմամբ: Հանձնաժողովը իր աշխատանքների կազմակերպման ժամանակ հասարակական կազակերպությունների մասնակցությամբ ձևավորել է 12 խումբ աշխատանքային խմբեր, որոնք համապատասխանում են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի բաժիններին և դրանց միջոցով փորձել համակարգել մոնիտորինգի աշխատանքները:

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդի համար հիմնական նյութերի, կարելի է ասել մասնագիտական և փորձագիտական եզրակացությունների նախապատրաստումը, իրականացրել է հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը, որը նույնպես չի ունեցել մասնագիտացված, որակյալ սպասարկող

անձնակազմ: Հանձնաժողովի գործունեության սկզբնական փուլում համանման աջակցություն ցուցաբերել են անկախ փորձագետները, որոնք վարձատրվել են դոնոր կազակերպությունների միջոցներով: Եվ հենց այդ ժամանակահատվածում է նախապատրաստել հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների իրականացման կատարողականի հաշվետվությունը, հիմք դրվել կոռուպցիայի գնահատման ցուցանիշների համակարգի ստեղծմանը: Ներկայումս Հանրապետությունում հաստատված է 59 կոռուպցիոն քրեական դեպքերի վիճակագրության վարման մեթոդոլոգիան, որի հիման վրա ՀՀ ոստիկանությունը ամփոփում է իրավապահ մարմինների կողմից տրամադրված տվյալները և փոխանցում ՀՀ վիճակագրության ազգային ծառայությանը:

## ԲԱՑԵՐԸ

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հիմնականում իրականացրել է հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված միջոցառումների կատարման ապահովմանը ուղղված քայլեր, քննարկել է առանձին բնագավառներում կատարած աշխատանքները, սակայն դրանց արդյունքները չեն վերածվել կոնկրետ քաղաքականության միջոցառումների:

Խորհրդի մասնագիտական սպասարկման կառույցի բացակայությունը չի նպաստում պրոֆեսիոնալ մակարդակով կազմակերպելու հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, փոփոխությունների իրականացման, արդյունքների գնահատման գործընթացը: ՀՀ կառավարության աշխատակազմը հանդիսանալով խորհրդի տեխնիկական սպասարկումն ապահովող օղակ իր կառուցվածքում չունի մասնագիտացված կառույց կամ կառուցվածքային միավոր կամ էլ մասնագետների խումբ: Աշխատակազմի կողմից միայն ապահովվել է խորհրդի աշխատանքների կազմակերպական և քարտուղարական սպասարկման աշխատանքները: Խորհրդի կանոնակարգով սահմանված հիմնական նպատակն է «աջակցել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն պետական քաղաքականության իրականացմանը»: Այս աջակցությունը չի վերածվել քաղաքականության մշակման և իրականացման լիարժեք գործառույթի: Խորհուրդը օժտված չէ հասարակության մեջ կոռուպցիայի կանխարգելման հարցերով գիտելիքների ընդլայնման և տարածման լիազորությամբ: Չունի առանձնացված բավարար նյութական և ֆինանսական միջոցներ հակակոռուպցիոն քաղաքականության լիարժեք իրականացման համար:

Չնայած հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի աշխատանքներում նկատվող կազմակերպվածությանը, նրա հետագա գործունեության շարունակականության և աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը նույնպես ապահովված չեն: Նախ մոնիտորինգի հանձնաժողովը գործելով հասարակական հիմունքներով չունի լիարժեք կարողություններ մասնագիտական գործունեության ծավալելու համար:

Երկրորդ, նրա կազմը և քաղաքացիական միավորումների ներկայացուցիչների ընդգրկվածության մեխանիզմները բավարար հիմքեր չեն տալիս ապահովելու լիարժեք մասնակցային գործընթաց: Հանձնաժողովի գործունեությունը պայմանավորված նրա անդամների ներկայացուցչականությունից՝ առավելապես ենթակա է քաղաքական ցնցումների և ԱԺ ընտրություններով պայմանավորված հանձնաժողովի գործունեությունը որոշ չափով «խափանվեց», քանի որ հանձնաժողովի անդամ ԱԺ պատգամավորները զբաղված էին նախընտրական գործընթացներով, իսկ նոր ընտրություններից հետո հանձնաժողովի կազմը կարիք ունի թարմացման: Բացի այդ, նախկին ԱԺ ընդիմությունն ներկայացնող քաղաքական ուժերը հրաժարվեցին մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին: Նոր ԱԺ-ի դեպում դեռևս այս հարցերը լուծված և հստակեցված չեն: Հասարակական կազմակերպությունների ներկայությունը և մասնակցությունը հանձնաժողովին ռոտացիոն կարգով, պայմանավորված է ԱԺ-ում ներկայացված խումբ և խմբակցություններով : Նոր ԱԺ-ի պայմաններում դեռևս չեն ներկայացվել

թեկնածություններ հանձնաժողովի անդամ հասարակական կազմակերպությունների վերաբերյալ:

Երրորդ, հանձնաժողովի անցած գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ հանձնաժողովը ֆինանսական միջոցների, ինչպես նաև մարդկային ու նյութական ռեսուրսների բացակայության պայմաններում լիարժեքորեն չի կարողացել առանձին հարցերի քննարկումներ նախապատրաստելու համար ստացված փաստաթղթերի հիման վրա կատարել դիտարկումներ եվ հետազոտություններ, իր աշխատանքներին ներգրավել փորձագետներ, կազմակերպել կոռուպցիայի դեմ պայքարի հարցերին նվիրված համաժողովներ, սեմինարներ, հեռուստահաղորդումներ, ինչպես նաև տարբեր բնույթի այլ քննարկումներ, կոռուպցիոն հնարավոր ռիսկերի բացահայտման նպատակով իրականացնել իրավական նորմատիվ ակտերի նախագծերի փորձաքննություն:

Այսպիսով անցած ժամանակահատվածում Հայաստանը բավականին հաջողությունների է հասել կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մոնիտորինգի հանձնաժողովի գործունեության ապահովման գործում: Այդուհանդերձ թե կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը, թե Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը, իրենց գործառնությունները արդյունավետ իրականացնելու համար պահանջում են պատշաճ և մասնագիտացված աշխատակազմեր, որոնց բացակայությունը միաժամանակ թուլացրել է այդ մարմինների գործունեության անկախությունը:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հզորացնել կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի, Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կարողությունները՝ դրանք համալրելով մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանումներով, որոնք միաժամանակ քարտուղարական և մասնագիտական խորհրդատվություն և ծառայություններ կմատուցեն կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին ու մոնիտորինգի հանձնաժողովին:
- Որպես տարբերակ քննարկման առարկա կարող է դառնալ նաև կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և մոնիտորինգի հանձնաժողովի հիման վրա ՀՀ կառավարության կազմում կամ առանձին օրենքով կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված կառույցի ստեղծումը, որը իր վրա կվերցնի կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության և քաղաքականության իրականացումն ու կոռուպցիայի դեմ պայքարի իրավապահ մարմինների մասնագիտացված կառույցների գործունեության համակարգումը, կոռուպցիայի կանխարգելման հարցերով գիտելիքների ընդլայնման և տարածման գործառնությունները:
- Զննարկել քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքով, ինչպես նաև պետական ծառայության մյուս տեսակների մասին օրենքներով սահմանված շահերի բախման սահմանափակումների լիարժեք կիրառման, դրանք գործուն մեխանիզմների վերածման, օրենքի 24-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև վարչական կամ այլ պատժամիջոցներ կիրառելու լիազորությունները կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված կառույցին վերապահելու հարցը:

## **ՀՈԴՎԱԾ 7. Հանրային հատվածը**

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, համապատասխան դեպքերում և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ձգտի ստեղծել, պահպանել և ամրապնդել քաղաքացիական ծառայողների և, համապատասխան դեպքերում, ոչ ընտրովի այլ պաշտոնատար անձանց աշխատանքի ընդունման, հավաքագրման, ծառայություն անցկացնելու, ծառայողական առաջխաղացման և պաշտոնաթողության անցնելու այնպիսի համակարգեր, որոնք.

ա) հիմնվում են արդյունավետության և թափանցիկության սկզբունքների և օրյեկտիվ այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են արժանիքները, արդարությունը և ընդունակությունները.

բ) ընդգրկում են կադրերի ընտրության և նախապատրաստման պատշաճ ընթացակարգեր պետական այնպիսի պաշտոններ զբաղեցնելու համար, որոնք կոռուպցիայի տեսանկյունից հատկապես խոցելի են համարվում և, համապատասխան դեպքերում, այդպիսի պաշտոններում նման կադրերի ռոտացիայի համար.

գ) նպաստում են պատշաճ վարձատրությանը և աշխատավարձի արդարացի սանդղակին՝ հաշվի առնելով Մասնակից պետության տնտեսական զարգացման մակարդակը.

դ) նպաստում են կրթական և ուսումնական ծրագրերի իրականացմանը այն բանի համար, որ այդպիսի անձինք կարողանան բավարարել պետական գործառույթների ճիշտ, բարեխիղճ և պատշաճ կատարման պահանջները, ինչպես նաև նրանց ապահովում են մասնագիտացված և պատշաճ պատրաստվածությամբ նրա համար, որ խորացնեն նրանց կողմից այն ռիսկերի գիտակցումը, որոնք կապված են կոռուպցիայի հետ և կապված են նրանց կողմից իրենց գործառույթների կատարման հետ: Այդպիսի ծրագրերը կարող են վկայակոչումներ պարունակել կիրառվող բնագավառներում կանոնադրերի կամ վարքագծի չափանիշներին:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է նաև քննարկի համապատասխան օրենսդրական և վարչական միջոցները, սույն Կոնվենցիայի նպատակների և իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքների համաձայն, պետական պաշտոններում թեկնածուների և ընտրությունների չափանիշները սահմանելու համար:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է նաև քննարկի համապատասխան օրենսդրական և վարչական միջոցները, սույն Կոնվենցիայի նպատակների և իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքների համաձայն, ընտրովի պետական պաշտոններում թեկնածուների ֆինանսավորման և, որտեղ կիրառելի է, քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը մեծացնելու համար:

4. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ձգտի ստեղծել, պահպանել և ամրապնդել այնպիսի համակարգեր, որոնք նպաստում են թափանցիկությանը և կանխարգելում են շահերի բախման առաջացումը:

## **ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ**

Ըստ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հանրային ծառայությունը սահմանվում է որպես պետությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացում: Ընդ որում, հանրային ծառայությունը ընդգրկում է բնույթ ունի և ներառում է՝

1. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքականություն իրականացնելը,

2. պետական ծառայությունը և ծառայությունը տեղական ինքնակառավարման մարմիններում կամ համայնքային ծառայությունը,

3. քաղաքացիական աշխատանքը պետական ու տեղական ինքնակառավարման

մարմիններում<sup>22</sup>:

Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, փրկարար ծառայությունները, հանրապետական գործադիր այլ մարմիններում, ինչպես նաև դիվանագիտական և օրենքներով նախատեսված այլ ծառայությունները:

Համայնքային ծառայությունը ընդգրկում է տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքականություն իրականացնելը և կանոնակարգվում է ՀՀ համայնքային ծառայության մասին օրենքով, որը ընդունվել է 2005թ.

Քաղաքացիական ծառայողներն ունեն հիմնական իրավունքներ և պարտականություններ և նրանց նկատմամբ կիրառվում են որոշակի սահմանափակումներ: ՀՀ Քաղաքացիական ծառայության ինստիտուտին յուրահատուկ է այն, որ ծառայողական հարաբերությունները կարգավորվում են երկու մարմինների կողմից: Այդ մարմիններն են՝ քաղաքացիական ծառայության խորհուրդը, և աշխատակազմերի ղեկավարները: Քաղաքացիական ծառայության խորհուրդը կազմված է յոթ անդամից՝ նախագահ, նախագահի տեղակալ և հինգ անդամ:

Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամներին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ:

Ինչ վերաբերում է աշխատակազմերի ղեկավարներին, ապա նշենք, որ բացառությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմերի ղեկավարների, նրանք քաղաքացիական ծառայողներ են: Քաղաքացիական ծառայող համարվող աշխատակազմի ղեկավարը նշանակվում է չորս տարի ժամկետով: Այդ ժամկետը նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (մարմինը) կարող է երկարաձգել մեկ անգամ՝ չորս տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան նրա 65 տարին լրանալը:

Քաղաքացիական ծառայության համակարգը իր կառուցվածքով բաց է: Սա նշանակում է, որ համակարգ մուտքը և ելքը կատարվում է ցանկացած մակարդակից՝ քաղաքացիական ծառայության համապատասխան խմբից և ենթախմբից, ինչպես նաև տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պահանջներին բավարարող ցանկացած անձի համար: Քաղաքացիական ծառայողների մասնագիտական ունակությունների և գիտելիքներին աճին զուգընթաց իրականացվում է առաջընթաց համապատասխան ատեստավորման համակարգի միջոցով, ինչպես նաև թափուր տեղերի համար հայտարարվող բաց մրցույթների միջոցով: Այն ենթադրում է վերապատրաստման պարտադիր համակարգ 3 տարին մեկ անգամ:

Ընդհանուր առմամբ պետական ծառայության մյուս տեսակները, հարկային, մաքսային, դիվանագիտական, ոստիկանական, փրկարարական, ծառայությունը ազգային ժողովի աշխատակազմում և այլն իրենց հիմքում ունեն քաղաքացիական ծառայության սկզբունքները, փոքր ինչ մոդիֆիկացված: Մասնավորապես, համակարգ մուտք և պաշտոնի առաջխաղացումը իրականացվում է փակ համակարգով, այսինքն համակարգ ընդունումը կատարվում է ստորին խմբերից և ապահովում մասնագիտական աճը դեպի վեր փակ մրցույթների և ատեստավորումների ճանապարհով: Այս ծառայություններից հատկապես հատուկ ծառայությունների համար սոցիալական ապահովածության հարցերը և վարձատրության մակարդակները տարբերվում են քաղաքացիական ծառայության համակարգից: Տարբերությունների շարքում պետք է նշել նաև, որ առանձին ծառայությունների համար նշանակումները կատարում են համապատասխան ծառայության ղեկավարը: Այստեղ աշխատակազմի ղեկավարի դերը սահմանափակվում է միայն համակարգում գործող քաղաքացիական ծառայողների նկատմամբ ունեցած լիազորությունների շրջանակով:

Համայնքային ծառայության կազմակերպման և իրականացման ոլորտում ձևավորվող հասարակական հարաբերություններն իրենց էությանը չեն տարբերվում քաղաքացիական ծառայության համակարգում ձևավորվող հասարակական հարաբերություններից: Ավելին՝ քաղաքացիական ծառայությունը և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայությունը բնորոշվում են որպես հանրային ծառայության երկու համեմատաբար ինքնուրույն ոլորտներ:

Վերը նշված հանգամանքները կանխորոշում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Համայնքային ծառայության մասին»

<sup>22</sup> <http://ww.am/csc/pdf/1.pdf>



օրենքների ընդհանրությունները: Մասնավորապես, դա վերաբերում է քաղաքացիական ծառայության և համայնքային ծառայության սկզբունքներին, քաղաքացիական ծառայության և համայնքային ծառայության պաշտոններին և դասային աստիճաններին, այս երկու ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու, ատեստավորման և վերապատրաստման կարգերին և այլն: Սակայն, այդ երկու օրենքները ունեն նաև եական առանձնահատկություններ: Ըստ էության բացառվում են համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման միասնական հանրապետական մարմնի ստեղծման հնարավորությունը: Մինչդեռ, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մարմնին՝ քաղաքացիական ծառայության խորհրդին վերապահված լիազորությունները չափազանց ընդգրկուն և բազմազան են: Լիազորությունների այդ ամբողջությունը համայնքային ծառայության համար հնարավոր չէ վերապահել գոյություն ունեցող որևէ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմնի: Այդ իսկ պատճառով այն ապակենտրոնացված և վերապահված են տարբեր պետական կառավարման մարմինների միջև:

Հարաբերությունների մի շարք ոլորտների կարգավորումը իրականացվում է միասնականության սկզբունքով, ըստ որի կառավարության կողմից ընդունված տիպային կանոնները տեղայնացվում են համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և ծառայում ուղեցույց հետագա գործունեության համար: Դրանք են. համայնքային ծառայության յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը, պաշտոնների անվանացանկը, պաշտոնների յուրաքանչյուր խմբում ընդգրկվող, ինչպես նաև հավասարազոր պաշտոնների անվանացանկը, ծառայողի էթիկայի կանոնները, հակաօրինական հանձնարարականներ ստանալու դեպքում տեղեկացման կարգը, անձնական գործերը և գրանցամատյանը վարելու կարգը, ծառայողների վերապատրաստման հետ կապված հարաբերությունները և այլն:

Սկզբունքային նշանակություն ունի տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայելու իրավունք ունեցող անձանց շրջանակի սահմանումը: Հաշվի առնելով համայնքներում համապատասխան որակավորում ունեցող անձանց սակավությունը այս ոլորտում սահմանվել է նվազագույն սահմանափակումներ: Այսպես, տեղական ինքնակառավարման մարմիններում կարող են ծառայել ոչ միայն համապատասխան համայնքում բնակվող անձիք, այլ նաև մյուս համայնքների բնակիչները, ինչպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, այնպես էլ փախստականները: Լինելով պետական ծառայության համալիր ինստիտուտի անբաժանելի մասը՝ քաղաքացիական ծառայության ինստիտուտը բավականին ընդհանրություններ ունի դրա հետ: Դա վերաբերում է ծառայության հիմնական սկզբունքներին, պաշտոններ զբաղեցնելու կարգին, ծառայողների ատեստավորմանը, իրավական վիճակին, խրախուսմանը, պատասխանատվությանը, պաշտոնից ազատելու և այլ հարցերին:

Քաղաքացիական ծառայության համակարգի հիմնական սկզբունքներից է՝ քաղաքացիների համար քաղաքացիական ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան: Այնուհանդերձ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար օրենքով սահմանված են համապատասխան չափանիշներ, պահանջներ և սահմանափակումներ:

Այս պաշտոնները զբաղեցվում են մրցութային կարգով և դասակարգվում են քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների խմբերի:

Քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններին խումբը դասակարգվում է 1-ին և 2-րդ ենթախմբերի, իսկ քաղաքացիական ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների խմբերը դասակարգվում են 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի: Քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է:

Քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում նշանակում է համապատասխան պետական կառավարման մարմնի ղեկավարը: Որպես բացառություն Հայաստանի Հանրապետության նախարարությունների աշխատակազմի ղեկավարներին, պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ղեկավարներին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը:

Քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակման հետ միաժամանակ քաղա-

քացիական ծառայողին շնորհվում է քաղաքացիական ծառայության համապատասխան դասային աստիճան ( grade):

Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը և քաղաքացիական ծառայողների ատեստավորումն անցկացնում են համապատասխանաբար քաղաքացիական ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովները: Քաղաքացիական ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերն ընտրվում են այդ նպատակով համակարգչում գետեղված և պատահական ընտրված թեկնածուներից՝

- մեկ երրորդը՝ քաղաքացիական ծառայության խորհրդի ներկայացուցիչներ:

- մեկ երրորդը՝ համապատասխան մարմնի ներկայացուցիչներ,

- մեկ երրորդը՝ տվյալ բնագավառի գիտական հաստատությունների և հասարակական միավորումների ներկայացուցիչներ: Այս վերջին դրույթը վերախմբագրվել է և հասարակական կազմակերպությունները զրկվել են մասնակցելու քաղծառայողների մրցութային և ատեստացիոն հանձնաժողովներին:

Քաղաքացիական ծառայողների վարձատրության և նյութական խրախուսման հարցերը կանոնակարգված են « Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով<sup>23</sup>, որտեղ ըստ պաշտոնների խմբերի և ենթախմբերի ձևավորված են վարձատրության սանդղակ, որը կախվածության մեջ է դրված ունեցած մասնագիտական ունակություններից և ստաժից: Քաղաքացիական ծառայողների համար կառավարության կողմից ամեն տարի բյուջեի հաստատման ժամանակ սահմանվում է նվազագույն շեմ (2007թ. համար 35,000 դրամ), որի նկատմամբ ըստ պաշտոնի խմբերի և տարիների սահմանված են վարձատրության գործակիցներ: Քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգը բաղկացած է հիմնական և լրացուցիչ աշխատավարձից: Տարեկան ընդամենը մեկ ամսվա չափով է սահմանվում պարգևատրման ֆոնդ, որը վճարվում է տարվա վերջում:

Քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգը ուղղակիորեն չի պայմանավորված նրա կողմից կատարվող աշխատանքների ծավալից ու որակից: Համաշխարհային բանկի և ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի աշխատանքային խմբի կողմից կատարված վերլուծության արդյունքներով առաջարկություններն են մշակված քաղաքացիական ծառայության համակարգում աշխատանքի կատարողակաի գնահատման և դրանք քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կախվածության մեջ դնելու վերաբերյալ: Համանման առաջարկություններ են նախապատրաստված նաև DFID «Հայաստան-հանրային ոլորտի բարեփոխումներ ծրագրի» կողմից, որով առաջարկվում է վերանայել քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգը և աշխատանքի կատարողականի գնահատման համակարգի ներդրման միջոցով բարձրացնել քաղաքացիական ծառայողների նոտիվացիան արդյունավետ աշխատանքի համար: Նույնաբովանդակ առաջարկություն է պարունակում նաև «Եվրոպական Միություն- Հայաստան եվրոպական հարևանության քաղաքականության գործողություններ»-ի ծրագրի շրջանակներում ձևավորված առաջարկությունները:

Քաղաքացիական ծառայության համակարգի կայացման մյուս ուղղությունը քաղաքացիական ծառայողների վերապատրաստման համակարգի ստեղծումն է: Վերապատրաստման համակարգի ստեղծման գործում միջազգային աջակցությունը եղել է բազմակողմ: DFID-ի « Հայաստան-հանրային ոլորտի բարեփոխումներ» ծրագիրը<sup>24</sup> հավատարիմ մնալով նախորդ ծրագրերի կողմից իրականացված արդյունքներին իր օժանդակությունն է բերել ՀՀ Պետական կառավարման ակադեմիային: Ի լրումն նախկինում մշակված կառավարման ունակությունների վերապատրաստման 24 մոդուլների լրացուցիչ մշակվել են քաղաքացիական ծառայողների վարապատրաստման ևս 10 մոդուլ: Այդ մոդուլների դասավանդումն ապահովելու համար վերապատրաստվել են ակադեմիայի, ինչպես նաև մյուս ուսումնական հաստատությունների շուրջ 14 դասախոսներ: Այս մոդուլների շրջանակում վերապատրաստման փորձնական դասընթացներ են իրականացվել նախարարությունների, մարզպետարանների աշխատակազմերի բարձրագույն և գլխավոր քաղաքացիական ծառայողների համար: Նկատի ունենալով, որ ԲԾԽ-ի կողմից հաստատված քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերը մասնակիորեն են ընդգրկում կառավարման ունակությունների և հմտությունների դասընթացները, դրանք արդեն 2006 թվականից ընդգրկվել են պարտադիր վերապատրաստման ծրագրերում:

<sup>23</sup> <http://ww.am/csc/pdf/akt2.pdf>

<sup>24</sup> <http://www.pwc-apsrep.am/html/arm/index.html>

Շահերի բախման վերաբերյալ սահմանափակումները կանոնակարգվում են քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքի հոդված 24-ի դրույթներով (տես Ներդիր 1):

## ԲԱՅԵՐԸ

Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքի և հարակից ենթաօրենսդրական ակտերի ընդունումը դեռևս առաջին քայլերն են մասնագիտական հանրային ծառայության կայացման ճանապարհին: Պետական կառավարման մարմինների աշխատակազմերի կառավարման կարողությունները մնում են թույլ: Սա սահմանափակում է Քաղաքացիական ծառայության հորհրդին արդյունավետ կիրառել քաղաքացիական ծառայության մասին օրենքը և խոչընդոտում է մասնագիտական, արժանիքների վրա հիմնված քաղաքացիական ծառայության ձևավորմանը:

Չնայած պետական ծառայության մյուս տեսակների և քաղաքացիական ծառայության միջև օրենսդրական ընդհանրությունների, դեռևս մնում են չլուծված կամ սահմանափակ են ծառայության մի տեսակից մյուսին անցման հնարավորությունները, նույնականացված և համապատասխանեցված չեն ծառայողների ստաժի, գիտելիքների, փորձառության ունակությունները ծառայության մի տեսակից մյուսին անցման պայմաններում:

Ընդհանուր առմամբ չնայած ըստ ծառայությունների առանձին տեսակների օրենքների առկայությանը, դեռևս բաց է մնում քաղաքական և հայեցողական ծառայողների, ծառայության մի շարք տեսակների մասնագիտական գործունեությանը ներկայացվող պահանջների օրենսդրական կանոնակարգումները: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը գտնվում է նախագծման փուլում, և այդ հանձնարարականը ներառված է ՀՀ կառավարության 2007թ. գործունեության միջոցառումների ծրագրում, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացված ՀՀ կառավարության ծրագրում:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը առավելագույնս ապահովել է կադրերի ընտրության թափանցիկ և հրապարակային գործունեություն գործընթացների համարժեքությունը օրենքի պահանջներին՝ նվազագույնի հասցնելով, կամ նույնիսկ բացառելով մրցույթների և ատեստացիաների գործընթացների վրա արտաքին ազդեցությունները: Դրա հետ մեկտեղ այս գործընթացում մնացել են առանձին հատվածներ, որտեղ թափանցիկ կամ ըստ արժանիքների ընտրության չափանիշները հստակեցման կարիք ունեն: Մասնավորապես քաղաքացիական ծառայողների թափուր պաշտոնի մրցույթների թեստավորման և հարցազրույցի փուլերից հետո ընտրված կամ նվազագույն շեմը հաղթահարած թեկնածուներից վերջին հաշվով պաշտոնի է նշանակում ըստ պաշտոնների խմբի համապատասխան մարմնի ղեկավարը կամ աշխատակազմի ղեկավարը: Այս գործընթացի վերջին փուլը՝ պաշտոնի նշանակումը լիարժեքորեն չի կանոնակարգված, այն իմաստով, որ չի սահմանված ընտրության կամ նշանակման չափորոշիչներ, որը և հանգեցնում է սուբյեկտիվ գործոնների կամ մոտեցումների կիրառման:

Վարձատրության համակարգերում տարբերությունները մնում են զգալի: Քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգը կախվածության մեջ չի դրված քաղաքացիական ծառայողների աշխատանքի արդյունքներից: Կիրառվող ատեստավորման համակարգը չի խրախուսում և չի պայմանավորում վարձատրության մակարդակների փոփոխությունը: Քաղաքացիական ծառայողների աշխատավարձի համակարգն ու մակարդակը չեն նպաստում որակյալ աշխատակազմի պահպանմանը, չնայած աշխատավարձերի մակարդակի բարձրացմանը:

Դեռևս ամբողջականացված չեն նաև քաղաքացիական ծառայողների սոցիալական պաշտպանվածության հարցերը, մասնավորապես կենսաթոշակային ապահովվածության, կյանքի ապահովագրության, բժշկական ապահովագրության, սոցիալական պաշտպանվածության մյուս խնդիրները: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ներկա մակարդակը հնարավորություն չի տալիս ապահովելու և ունենալու բավարար միջոցներ այս խնդիրների լուծման համար:

Չնայած քաղաքացիական ծառայողների վերապատրաստման նոր ծրագրերի ու պոտենցիալի առկայությանը ՔԾԽ-ն դեռևս հավատարիմ է մնում վերապատրաստման պասիվ քաղաքականության իրականացմանը, որի արդյունքում երկշաբաթյա վերապատրաստումներ են անցնում բոլոր քաղաքացիական ծառայողները հիմնականում օրենսդրության հիմունքների վերաբերյալ: Բացակայում է մասնագիտական վերապատրաստման գերիշխող հնարավորությունները: Վերապատրաստման

դասընթացները և ծրագրերը դեռևս կողմնորոշված չեն քաղաքացիական ծառայողներին ներկայացվող հակակոռուպցիոն սահմանափակումների, երկրում կոռուպցիայի դեմ պայքարին միտված տարվող քաղաքականության իրականացմանը:

Սկզբունքորեն քաղաքացիական ծառայողների շահերի բախման սահմանափակումների գոյությունը քաղաքացիական ծառայողների գործունեության թափանցիկ և հրապարակայնության ապահովման, ինչպես նաև շահերի բախումից խուսափելու տեսական հիմքերն է ապահովում: Սակայն դեռևս սահմանված չեն դրանց կիրառման գործուն մեխանիզմները, կոնկրետ ամեն մի սահմանափակման խախտումների համար կոնկրետ պատժամիջոցներ, և որ շատ էական է չի հստակեցված այն կառավարման պետական մարմինը, որը պետք է իրականացնի այս սահմանափակումների կիրառման նկատմամբ հսկողությունն և կիրառի պատժամիջոցներ:

Կանոնակարգման կարիք ունի քաղաքացիական ծառայողների համար նվերների ստացման գործընթացները: Նույն է պատկերը նաև պետական ծառայության մյուս տեսակների համար, բացառությամբ դատական համակարգի, որտեղ դատավորների և դատական ծառայության մյուս մասնակիցների համար սահմանված են շահերի բախման դեպքերի և դրանց խախտումների դիմաց պատժամիջոցների կիրառման լիարժեք համակարգ:

## **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հիմք ընդունելով վերընշված նկատառումները նպատակահարմար է՝

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծում հաշվի առնել հանրային ծառայողների կարգավիճակի, շահերի բախման, էթիկայի կանոնների, վերապատրաստման, ըստ արժանիքների ծառայողների ընտրության, վարձատրության, և կոռուպցիայի կանխարգելման դրույթները: Առավել կարևորվում է նախագծում արտացոլել նաև քաղաքական և հայեցողական պաշտոնյաների համար էթիկայի կանոնների, շահերի բախման վերաբերյալ սահմանափակումները:
- ներդնել քաղաքացիական ծառայողների աշխատանքի կատարողականի գնահատման համակարգը և դա շաղկապել քաղաքացիական ծառայողների վարձատրության և պարգևատրման համակարգերին:
- Վերապատրաստման նոր հայեցակարգի ընդունմամբ ազատականացնել և վարչական կանոնակարգումներից ձերբազատել վերապատրաստման գործընթացները՝, հնարավորություն տալով վերապատրաստման գործող թեմատիկայում ընդգրկելու քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնների պահպանման, աշխատանքային կանոնակարգերի, հակակոռուպցիոն սահմանափակումների մեխանիզմների և քաղաքացիական ծառայողների դերին ու նրանց ունակությունների բարձրացմանը ուղղված դասընթացներ:

## ՅՈՒՐԱՔԱՆԳՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԵՐԸ

1. Կոռուպցիայի դեմ պայքարելու համար յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, *inter alia*, պետք է խրախուսի իր պաշտոնատար անձանց շրջանում անկաշառությունը, ազնվությունը և պատասխանատվությունը:

2. Մասնավորապես, յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի իր ենթակառուցվածքային և իրավական համակարգերի շրջանակներում կիրառել վարքագծի կանոնագրքեր և ստանդարտներ պետական գործառույթների ճշգրիտ, բարեխիղճ և պատշաճ իրականացման համար:

3. Սույն հոդվածի դրույթների իրականացման նպատակներով յուրաքանչյուր Մասնակից պետություն, համապատասխան դեպքերում և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է նկատի ունենա տարածաշրջանային, միջտարածաշրջանային և բազմակողմ կազմակերպությունների համապատասխան նախաձեռնությունները, օրինակ՝ Գլխավոր վեհաժողովի 1996թ. դեկտեմբերի 12-ի 51/59 բանաձևին կից հավելվածում պարունակվող՝ Պաշտոնատար անձանց վարքագծի միջազգային կանոնագիրքը:

4. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է քննարկի նաև այնպիսի միջոցներ և համակարգեր սահմանելու հնարավորությունը, որոնք նպաստում են այն բանին, որ պաշտոնատար անձինք համապատասխան իրավասու մարմիններին հայտնեն իրենց գործառույթների իրականացման ժամանակ իրենց հայտնի դարձած կոռուպցիոն դեպքերի մասին:

5. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի, համապատասխան դեպքերում և իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, սահմանել այնպիսի միջոցներ և համակարգեր, որոնք պաշտոնատար անձանց կայարտավորեցնեն համապատասխան մարմիններին ներկայացնել հայտարարագրեր, *inter alia*, արտածառայողական գործունեության, զբաղմունքի, ներդրումների, ակտիվների մասին և էական նվիրատվությունների կամ օգուտների մասին, որոնց հետ կապված կարող է շահերի բախում առաջանալ որպես պաշտոնատար անձ նրանց գործառույթների առնչությամբ:

6. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է քննարկի այն պաշտոնատար անձանց նկատմամբ կարգապահական կամ այլ միջոցներ կիրառելու հնարավորությունը, ովքեր խախտում են սույն հոդվածին համապատասխան սահմանված վարքագծի կանոնագրքերը կամ ստանդարտները:

## ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

Համաձայն քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքի քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնների սահմանման լիազորությունը վերապահվել է ՔԾԽ-ին: Վերջինս այն սահմանել է մեկ էջի սահմաններում և ունի հետևյալ տեսքը<sup>25</sup> (տես Ներդիր 2):

ՀՀ քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնների կիրառման մեխանիզմների ձևավորման, էթիկայի կանոնների պահպանման և օրենսդրական պահանջը գործողության մեջ դնելու նպատակով ՀՀ պետական կառավարման մարմիններից՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության նախարարություններում փորձնական կարգով ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի, ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ, DFID «Հայաստանի հանրային ոլորտի բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում իրականացրեց էթիկայի հանձնաժողովների հիմնում և նրանց գործունեության ապահովման գործնական ծրագիրը: Ծրագրի շրջանակներում մշակվեցին և ՔԾԽ-ի կողմից հաստատվեցին էթիկայի հանձնաժողովների կանոնադրությունները, ձևավորվեցին կազմը և հանձնաժողովները:

<sup>25</sup> ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2002թ. մայիսի 31-ի N13-Ն որոշումը «Քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնները հաստատելու մասին» <http://www.am/csc/pdf/akt6.pdf>

ՀՀ հարկային պետական ծառայությունում գործում է բողոքների քննման կոմիտե, որը կազմակերպում է ամենշաբաթյա նիստեր և քննարկում է կարգապահական բողոքները: Դատական և դատախազական մարմիններում էթիկայի հարցերով հանձնաժողովների մասին տես զեկույցի հոդված 11-ում:

Պետական ծառայողների եկամուտների հայտարարագրում համակարգը ըստ էության օրենսդրությամբ կանոնակարգվեց 2001թ. հուլիսի 27-ի «Հայաստանի հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքով: Այս օրենքը տարածվում էր միայն քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների վրա, և չէր ընդգրկում քաղաքացիական ծառայության և պետական ծառայության մյուս տեսակների ոչ ղեկավար քաղաքացիական ծառայողներին: Բացի այդ, ՀՀ հարկային պետական ծառայություններկայացված հայտարարագրերը ընդհանենը հավաքագրվում և կուտակվում են հարկային պետական ծառայությունում: Դրանցում պարունակող տեղեկատվությունը սկզբնական փուլում տպագրվում և ՀՀ պաշտոնական տեղեկագրի տեսքով ներկայացվում էր հասարակությանը վաճառքի: Այսուհետև, , հետաքրքրվող քաղաքացիական հասարակության ներակայացուցիչները այդ տեղեկատվությունը ամփոփ տեսքով մեկշաբաթյա ժամկետում կարող են ստանալ դիմելով հարկային պետական ծառայությանը:

2006թ. հուլիսի 7-ի ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց « Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքը ( տես Ներդիր 3)

Ինչպես երևում է օրենքի սահմանումից սույն հայտարարագրերը իրենց մեջ պարունակում են 2 տարր: Առաջինը եկամուտների հայտարարագրումն է հարկային պարտավորությունների կատարման տեսանկյունից և երկրորդ եկամուտների և գույքի հայտարարագրումն է կոռուպցիայի դեմ պայքարի նոր մեխանիզմների ներդրման ու բացահայտման տեսանկյունից: Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա գույքի արժեքի սահմանափակումները չեն տարածվում պետական և քաղաքացիական ծառայողների վրա: Ի տարբերություն սովորական քաղաքացիների նրանք հայտարարագրերը ներկայացնում են անկախ գույքի արժեքային սահմանափակումների:

Նշված օրենքով հայտարարագրման պահանջները չկատարելու համար նախատեսված են պատժամիջոցներ` օրենքի 20 եւ 21 հեղվածներով, ըստ որի 2006թ. 10 ամիսների ընթացքում 1389 անձինք ենթարկվել են պատասխանատվության:

2008թ. հունվարի 1-ից ուժը կորցրած կճանաչվի « Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ 2001թ.հուլիսի 27-ի ՀՀ-212 օրենքը:

## ԲԱՑԵՐԸ

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից սահմանված քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնները ամփոփված են մեկ էջի վրա: Դրանք պրակտիկ կյանքում կիրառման տեսանկյունից մնում են ցանկալի: Դեռևս բացակայում է մասնագիտական պահվածքի միասնական էթիկայի կանոնների գոյությունը: Չկա այս կանոնները վերահսկող միասնական մարմին և մեխանիզմ կանոնների կիրառման և հսկման գործում: ՔԾԽ-ն հետամուտ չէրավ էթիկայի հանձնաժողովների կայացմանը և դրանց կարողությունների զարգացմանը պետական կառավարման մյուս մարմիններում:

Հասարակական կազմակերպությունները պատրաստակամ են իրենց մասնակցությունը բերել նախարարությունների էթիկայի հանձնաժողովներում, սակայն մինչ այժմ դեռևս նրանց ներգրավումը պետակա կառավարման մարմինների ձևավորված կառույցներում մնում է թույլ:

Պետական ծառայողների եկամուտների և գույքի հայտարարագրերում նշված տեղեկատվությունը դեռևս չի ստուգվում, չնայած այն հանգամանքին, որ օրենքի 10 և 11-րդ հոդվածներով գույքի գրանցման և եկամուտների աղբյուր հանդիսացող կազմակերպությունները եռամսյակային կտրվածքով համապատասխան տեղեկատվություն են ներկայացնում հարկային մարմին:Համակարգը դեռևս հնարավորություն չի տալիս բացահայտելու անօրինական ստացված եկամուտները, հայտարարագրված տեղեկատվությունը ամբողջությամբ հասանելի չէ հասարակությանը, չի օգտագործվում իրավապահ մարմինների կողմից կոռուպցիայի հետ կապված իրավախախտումների հետաքննության համար: Այս տեղեկատվությունը չի վերլուծվում հնարավոր ապօրինի եկամուտների բացահայտման նպատակով, չի տրամադրվում մյուս պետական մարմիններին հետագա օգտագործման համար:

Պետական ծառայողների գույքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագրված տեղեկատվությունը հասարակությանը տրամադրման գործընթացը թափանցիկության ապահովման կարիք ունի: Այն տրամադրվում է քաղաքացիների պահանջով ՀՀ հարկային պետական տեսչության տեղեկանքի տեսքով: Ըստ օրենքի պահանջի հայտարարագրում ներառվող հրատարակման ենթակա տվյալները, կառավարության սահմանած կարգով, տրամադրվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցում ստացած մամուլի միջոցներին:

Պետական ծառայության գործում դեռևս լուծում չի ստացել պետական պաշտոնյաների և ծառայողների կողմից նվերների ստացման և շահերի բախումներից խուսափելու հետ կապված հարցերը, ինչպես նաև նվիրատվությամբ պայմանավորված կանոնների խախտման համար պատժամիջոցների բացակայությունը: Դրանք ունեն ինչպես օրենսդրական, այնպես էլ պրակտիկ կիրառման խնդիր:

## **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- ՀՀ պետական պաշտոնյաների վարքագծի կանոնագրքերի ներդրման նպատակով՝
- օրենսդրորեն սահմանել էթիկայի հանձնաժողովների կարգավիճակը, դրանց օժտել համապատասխան լիազորություններով և կայացնել այդ կառույցները պետական ծառայության համակարգում:
  - ապահովել պետական ծառայողների համար եվրոպական միասնական ստանդարտներին համապատասխան էթիկայի կանոնների կիրառումը, որոշ մասնագիտական ծառայությունների համար էթիկայի առանձին կանոնակարգերի ընդունումը:
  - կոռուպցիայի հարցերով պետական ծառայողների համար պրակտիկ ուղեցույցերի, շահերի բախման, էթիկայի նորմերի, կոռուպցիոն դեպքերի ու փաստերի մասին տեղեկացման միջոցառումների իրականացումը և պատժամիջոցների կիրառումը զսպաշապիկ կղառնա կոռուպցիայի առաջարկի համար:
  - սահմանել պետական ծառայողների համար էթիկայի կանոնների խախտումների համար կարգապահական պատիժներ
  - Ի դեմս հակակոռուպցիոն մասնագիտացված կառույցի ձևավորել պետական ծառայողների էթիկայի կանոնների, շահերի բախման, ֆինանսական հաշվետվություններն /այդ թվում՝ եկամուտների և գույքի հայտարարագրերը/ վերահսկող պատասխանատու մարմին
  - խստացնել պետական ծառայողների պատասխանատվությունը եկամուտների, գույքի հայտարարագրման պարտավորությունների չկատարման համար:

## ՀՈԴՎԱԾ 9. Հանրային գնումները և պետական ֆինանսների կառավարումը

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի գնումների պատշաճ համակարգեր ստեղծելու համար, որոնք հիմնվում են թափանցիկության, մրցակցության և որոշումների ընդունման օբյեկտիվ չափանիշների վրա, որոնք, *inter alia*, կոռուպցիայի կանխարգելման տեսանկյունից արդյունավետ են համարվում: Այդպիսի համակարգերը, որոնք դրանց կիրառման ժամանակ կարող են նախատեսել պատշաճ շեմային ցուցանիշներ, *inter alia*, շոշափում են հետևյալը.

ա) գնումների ընթացակարգերին և գնումների պայմանագրերին վերաբերող տեղեկատվության հրապարակային տարածումը, ներառյալ գնումներին մասնակցելու հրավիրվածների մասին տեղեկատվությունը և պատշաճ կամ հարմար կերպով այն տեղեկատվությունը, որը թույլ է տալիս սակարկության հավանական մասնակիցներին բավարար ժամանակ ունենալ նախապատրաստվելու և իրենց տեղեկության ղիմումները ներկայացնելու համար.

բ) մասնակցության պայմանների նախօրոք սահմանումը, ներառյալ ընտրություն կատարելու և պայմանագրերի կնքման վերաբերյալ որոշումներ ընդունելու չափանիշները, ինչպես նաև սակարկության անցկացման կանոնները և դրանց հրապարակումը.

գ) հրապարակային գնումների վերաբերյալ որոշումների ընդունման առնչությամբ նախապես սահմանված և օբյեկտիվ չափանիշների օգտագործումը՝ կանոնների կամ ընթացակարգերի կիրառման ճշտության հետագա ստուգմանն օժանդակելու նպատակով.

դ) ներքին վերահսկողության արդյունավետ համակարգը, ներառյալ բողոքարկման արդյունավետ համակարգը՝ սույն կետի համաձայն սահմանված կանոնները կամ ընթացակարգերը չպահպանելու դեպքում վիճարկման իրավաբանական միջոցների և իրավական պաշտպանության միջոցների ապահովման համար.

ե) համապատասխան դեպքերում՝ գնումների համար պատասխանատվություն կրող անձնակազմին վերաբերող հարցերի կարգավորումը, ինչպիսիք են որոշակի հրապարակային գնումներով շահագրգռված լինելու՝ հայտարարագրման, ստուգման ընթացակարգերի վերաբերյալ պահանջները և դասընթացների մկատմամբ պահանջները:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի պետական ֆինանսների կառավարման թափանցիկությանը և հաշվետվությանը նպաստելու ուղղությամբ: Այդպիսի միջոցները, *inter alia*, պետք է ներառեն.

ա) ազգային բյուջեի ընդունման ընթացակարգերը.

բ) մուտքերի և ծախսերի մասին ժամանակին զեկուցումը.

գ) հաշվապահական հաշվառման ստանդարտների համակարգը և ստուգման ու դրա հետ կապված հսկողության համակարգը.

դ) ռիսկերի և ներքին վերահսկողության կառավարման արդյունավետ և ներգործուն համակարգերը, և

ե) համապատասխան դեպքերում՝ սույն կետում սահմանված պահանջները չպահպանելու դեպքում շտկումներ կատարելը:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի քաղաքացիաիրավական և վարչական միջոցներ, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետական ծախսերին և եկամուտներին վերաբերող հաշվապահական գրքերի, գրանցումների, ֆինանսական տեղեկագրերի կամ այլ փաստաթղթերի պահպանումը ապահովելու և այդպիսի փաստաթղթերի կեղծմանը հակազդելու համար:



## ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի<sup>26</sup> 4-րդ և 6-րդ բաժիններով սահմանված են գնման ձևերի կիրառման պայմանները: Նշված բաժիններով սահմանված պայմանների համաձայն պետական կամ ծառայողական գաղտնիք չպարունակող մրցույթի, գնանշման հարցման և մրցակցային բանակցությունների կատարման ժամանակ պատվիրատուները կազմակերպվելիք գնման գործընթացների մասին տեղեկատվությունը հրապարակում են՝ մրցույթի դեպքում՝ գնումների պաշտոնական տեղեկագրում, իսկ մյուս երկու ձևերի դեպքում՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում:

Միաժամանակ թվով երեք հեռուստաալիքներով և ռադիոյով զովազդվում են մրցույթների հայտարարությունները, տեղեկագիրը տեղադրվում է գնումներին վերաբերող ինտերնետային կայքում, իսկ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում հրապարակվում է տեղեկագրի հրատարակման մասին հայտարարություն:

Մրցույթի հայտարարությունը հրապարակվում է հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալու օրվանից առնվազն 30 օր առաջ, իսկ գնանշման և մրցակցային բանակցությունների հայտարարությունները՝ 10 աշխատանքային օր առաջ:

Նշված օրենքի համաձայն պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող մրցույթի, գնանշման հարցման և մրցակցային բանակցությունների կատարման ժամանակ պատվիրատուները հրավերներ տրամադրում են բոլոր հնարավոր մասնակիցներին, որոնք որոշվում են առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում այդ մասին հայտարարություն հրապարակելու միջոցով: Միաժամանակ հայտարարությունը տեղադրվում է ՖԷՆ-ի և տվյալ պատվիրատուի ինտերնետային կայքերում, որին մասին տեղեկատվություն է հրապարակվում հայտարարության մեջ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով սահմանված են մրցույթի, գնանշման հարցման և մրցակցային բանակցությունները հրավերների բովանդակությանը ներկայացվող պահանջները, որը ներառում է նաև մասնակիցների որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը, մասնակիցների կողմից իրենց որակավորման չափանիշները հավաստելու նպատակով ներկայացվող փաստաթղթերի կամ այդ նպատակով պահանջվող այլ տեղեկատվությանն առաջադրվող պահանջները, հայտերի գնահատման և հաղթողի ընտրության կարգը, հայտերի պատրաստման հրահանգները, հայտերի ներկայացման պայմանները, ներառյալ տեղը, ժամկետը, լեզուն (նշված ներառված է նաև հայտարարության տեքստում) և պայմանագիր կնքելու պայմանները:

Միաժամանակ օրենքի 5-րդ 4-րդ մասի համաձայն չեն կարող սահմանվել մասնակցին ներկայացվող այնպիսի որակավորման չափանիշներ, որոնք նախատեսված չեն «Գնումների մասին» ՀՀ օրենքով, իսկ 34-րդ հոդվածի համաձայն բավարար են գնատահվում այն հայտերը, որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնի համաձայն յուրաքանչյուր անձ ունի բողոքարկման իրավունք, եթե հայտարարում է, որ պատվիրատուի և (կամ) մրցույթի հանձնաժողովի գործողությունների հետևանքով կրել է կամ կարող է կրել վնասներ: Բողոքը ներկայացվում է լիազոր մարմնին կամ դատարան: Լիազոր մարմինը բողոքի վերաբերյալ հայտարարություն է հրապարակում առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում, չնշելով բողոքը ներկայացրած անձի տվյալները: Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման համար հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցել բողոքարկման ընթացակարգին:

Լիազոր մարմինը բողոքի վերաբերյալ ընդունում է հետևյալ որոշումները՝

ա) արգելել կատարել որոշակի գործողությունները և ընդունել որոշումներ, բ) պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ, բացառությամբ պայմանագիրը լուծելու մասին որոշման.

գ) վերանայել ընդունված որոշումները.

դ) դադարեցնել գնման գործընթացը:

Բողոքի վերաբերյալ որոշում ընդունվում է բողոքը ստանալու օրվանից ուշ չուտ քան տաս և ուշ ուշ քան քսան աշխատանքային օրվա ընթացքում:

Միաժամանակ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն լիազոր մարմինն իրավասու է ստացված բողոքի հիման վրա կազմակերպել ստուգումներ:

Գնումների գործում ներգրավված անձանց մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման նպատակով մշակվել են ուսումնական ձեռնարկներ և

<sup>26</sup> Գնումների մասին ՀՀ օրենք, <http://www.laws.am>

պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և մրցույթների հնարավոր մասնակից հանդիսացող մի շարք կազմակերպությունների (թվով 1500 հոգի) ներկայացուցիչների համար կազմակերպվել են դասընթացներ:

Միաժամանակ 2000-2005թ. գնումների համակարգում կատարված աշխատանքների արդյունքում արձանագրելով այդ համակարգի հիմնականում ներդրված լինելը, ՀՀ կառավարությունը նախաձեռնել է գնումների համակարգի կատարելագործման աշխատանքները: Այդ նպատակով 2006 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարությունը, որը նախատեսվում է իրագործել 2006-2009թթ. ընթացքում:

Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագրի շրջանակում 6 տարվա ընթացքում (2003-2009թթ ժամանակահատվածում) նախատեսվում է իրականացվել Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումները, որի նպատակն է տվյալ հատվածում դեռևս խորհրդային ժամանակներից գործող հաշվապահական հաշվառման համակարգից անցում կատարել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան համակարգին, որը համահունչ և համադրելի կլինի Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից հաստատված կառավարության ֆինանսական վիճակագրության 2001 թ. ձեռնարկի և Հայաստանի Հանրապետության մասնավոր հատվածում ներդրված հաշվապահական հաշվառման ստանդարտներին:

ԱՄՆ գանձապետարանի աջակցությամբ մշակվել և հաստատվել է «ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները», ինչպես նաև «ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումների կիրառման ցուցումները»:

Աշխատանքներ են տարվում հաշվապահական հաշվառման ստանդարտների համակարգի ներդրման, հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքով հաշվետվությունների կազմման և հաստատման ուղղությամբ: ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների ներդրման նպատակով Համաշխարհային բանկը տրամադրել է «Հայաստան. հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների (IPSAS) ռազմավարության իրականացման համար» N 058039 IDF դրամաշնորհ:

Այդ դրամաշնորհի հաշվին նախատեսվում է իրականացվել.

- ներկայումս կիրառվող հաշվապահական հաշվառման և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների միջև առկա տարբերությունների բացահայտում և գնահատում
- ճյուղային նախարարությունում հաշվապահական ստանդարտների ներդրման փորձարկում և դրա փորձարկման արդյունքում ստանդարտների իրականացման ռազմավարության մշակում
- օրենսդրական դաշտի մշակում
- մշակել հաշվապահական հաշվառման քաղաքականության և ընթացակարգերի ձեռնարկ

ՀՀ կառավարության 2004 թվականին սեպտեմբերի 17-ի 1376-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա հիմնարկների և պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ներքին աուդիտի համակարգի զարգացման ռազմավարության շրջանակներում իրականացվելու են նշված կազմակերպությունների ներքին աուդիտի ոլորտում առկա հիմնախնդիրների կարգավորման աշխատանքներ՝ այն հանրային հատվածի ներքին աուդիտի միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: Ռազմավարությամբ սահմանված է, որ յուրաքանչյուր պետական մարմնի գլխավոր ֆինանսիստ պետք է ապահովի ֆինանսական հոսքերի կառավարման և ներքին հսկողության համակարգի առկայությունը, որը ներառում է պետական մարմնում և համակարգի պետական հիմնարկներում ֆինանսական հարցերի վերաբերյալ հաստատված ակտերի պահանջների կատարման գնահատումը, հաշվապահական հաշվառման գրանցումների մեջ անհամապատասխանությունների բացահայտումը և դրանց ճշգրտման ապահովումը:

Մասնավորապես ներքին աուդիտի համակարգը նպատակ ունի.

ա) գնահատել աուդիտի ենթարկվող օբյեկտների կողմից իրականացվող՝ ֆինանսատնտեսական բնույթի գործառույթների համապատասխանությունը՝ այդ գործառույթները կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին,

բ) գնահատել աուդիտի ենթարկվող օբյեկտների կողմից օգտագործվող կամ վերջինիս կողմից տրամադրվող ֆինանսատնտեսական բնույթի տեղեկատվության արժանահավատությունն ու ճշտությունը,

գ) բացահայտել աուդիտի ենթարկվող օբյեկտների հաշվապահական հաշվառման գրանցումների մեջ տեղ գտած անհամապատասխանությունները,

դ) գնահատել տվյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, կամ վերջինիս ենթակա հիմնարկի ներքին հսկողության համակարգերի արդյունավետությունը:

Նշված պահանջների կիրարկման նպատակով ԱՄՀ և ԱՄՆ զանձապետարանի հետ համագործակցության շրջանակներում մշակվել և հաստատվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև վերջիններիս ենթակա հիմնարկներում ներքին աուդիտի անցկացման կարգը:

Մշակվել է նաև «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը ներկայումս քննարկվում է Համաշխարհային բանկի հետ: Վերջինիս հետ համաձայնեցնելուց հետո այն սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը: Նշված օրենքով նախատեսվում է կարգավորել ներքին աուդիտի հետ կապված հիմնական հարաբերությունները, ներքին աուդիտի մասնակիցների հիմնական իրավունքներն ու պարտականությունները: Օրենքով նախատեսվում է նաև, որ ներքին աուդիտի համակարգը տարածվում է ՀՀ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա հիմնարկների, ինչպես նաև պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վրա: Նշված հանգամանքը հնարավորություն կտա անկախ և ավելի օբյեկտիվ ներքին աուդիտ իրականացնելու համար:

Նշված օրենքով նախատեսվել է նաև, որ Հայաստանի Հանրապետությունում հանրային հատվածի ներքին աուդիտը իրականացվում է ներքին աուդիտի օրենսդրության և Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների հիման վրա: Այդ նպատակով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված TF 056827 դրամաշնորհի միջոցների հաշվին կնքվել է խորհրդատվական ծառայությունների գնման պայմանագիր,

## ԲԱՅՅԵՐԸ

Պետական գնումների գործակալության կարգավիճակը հնարավորություն չի տալիս կիրառելու մասնագիտացված ծառայությանն ներկայացվող պահանջներ՝ մասնավորապես էթիկայի կանոնակարգեր: Այսօր գնումների գործակալության աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ չեն հանդիսանում: Պետական գնումների համակարգը խիստ կենտրոնացված է և առաջ է բերում ինչպես սպառողների, այնպես էլ պատվիրատուների դժգոհություններ կապված գնումների կազմակերպման ժամկետների, ձևավորված գների մակարդակի, հետագա վերահսկողության նկատմամբ և այլն: Պետական գնումների էլեկտրոնային համակարգի ներդրման աշխատանքները դեռևս նոր են կազմակերպվում և թափանցիկ ու հրապարակային գործունեության ապահովման տեսանկյունից հասարակության համար մնում են «որպես մութ»: Գործակալության էլեկտրոնային կայքը չի թարմացված և գտնվում է կազմավորման փուլում:

Հաշվապահական հաշվառման համակարգը դեռևս մի մասով խորհրդային ժամանակներից սահմանված կանոններով է աշխատում:

Ներքին աուդիտի համակարգը վերջնականապես ձևավորված չէ, սահմանված չեն աուդիտորների կարգավիճակը, լիազորությունների շրջանակը, նրանց ներկայացվող էթիկայի և կանոնակարգերը:

## ԱՈՍՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման, գործակալության էլեկտրոնային կայքի ստեղծման միջոցով պետական գնումների գործընթացները դարձնել, մատչելի, թափանցիկ և հրապարակային օգտվողների համար
- նպատակահարմար է վերանայել պետական գնումների գործակալության կարգավիճակը, ծառայության աշխատակիցների համար սահմանել ծառայողական կանոնակարգեր, էթիկայի կանոններ, խիստ վերահսկողություն սահմանել գնումների գործընթացում սահմանված կանոնների պահպանման նկատմամբ

- հստակեցնել աուդիտորների կարգավիճակը, նրանց ներկայացվող էթիկայի կանոնակարգերը և պահանջները, առավելապես խիստ պատժամիջոցներ կիրառել նրանց կողմից ցուցաբերվող խախտումների նկատմամբ
- ավարտին հասցնել հաշվապահական հաշվառման նոր ստանդարտների անցման գործընթացը:

## ՀՈԴՎԱԾ 10. Հրապարակային հաշվետվությունը

Հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտությունը՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր պետական վարչակազմում թափանցիկության մեծացման համար, այդ թվում՝ դրա կազմակերպման, գործունեության և, համապատասխան դեպքերում, որոշումների կայացման գործընթացների առնչությամբ: Այդպիսի միջոցները, *inter alia*, կարող են ներառել հետևյալը.

ա) ընթացակարգերի կամ կանոնակարգերի ընդունումը, որոնք բնակչությանը թույլ կտան, համապատասխան դեպքերում, տեղեկատվություն ստանալ իր պետական վարչակազմի կազմակերպման, գործունեության և որոշումների ընդունման գործընթացների վերաբերյալ և, պատշաճորեն հաշվի առնելով մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության նկատառումները, հանրության անդամների շահերը շոշափող որոշումների և իրավաբանական ակտերի վերաբերյալ.

բ) վարչական ընթացակարգերի հստակեցումը, համապատասխան դեպքերում, որոշումներ կայացնող իրավասու մարմինների նկատմամբ հանրության մուտքը դյուրացնելու համար, և

գ) այն տեղեկատվության հրապարակումը, որը կարող է ներառել պետական վարչակազմում կոռուպցիայի վտանգների մասին պարբերական հաշվետվությունները:

### ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

Արդյունավետ քաղաքականության ձևավորման, պետական կառավարման տարբեր մակարդակներում կառավարման արդյունավետության բարձրացման, պետական ծառայության մեջ պատասխանատվության, թափանցիկության, հաշվետվողականության ներդրման և զարգացման ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք քայլեր:

Նշված ժամանակաշրջանում իրականացված նշանակալի նախաձեռնություններից են պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման ոլորտի բարեփոխումները: Մասնավորապես, ընդունվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները: Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.
- 2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.
- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
- 5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

Բացի այդ, մի շարք հարակից օրենքներ և կառավարության որոշումներ լրացնում են տեղեկատվության ազատության մասին օրենքի կիրարկման հնարավորությունները: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության 13.03.1998 թվականի թիվ 173 որոշմամբ հաստատվել է ՀՀ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը: «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածում սահմանվել են պետական և ծառայողական գաղտնիք համարվող տեղեկությունների ցանկը:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7 հոդվածը նախատեսում է վարչական պատասխանատվություն պաշտոնատար անձանց համար նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով օրենքով

նախատեսված տեղեկատվությունը չտրամադրելու համար: Բացի այդ ՀՀ քրեական օրենսգրքի 148 հոդվածը սահմանում է պաշտոնատար անձի համար տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից-չորսհարյուրապատիկի չափով, անձի օրինական շահերին վերաբերող տեղեկատվության, փաստաթղթերն կամ նյութերը ոչ լրիվ կամ աղավաղված ներկայացնելու համար:

2004-2007թ.թ կառավարության քաղաքականությունը ուղղվել է տեղեկատվության ազատության մասին նոր օրենքի հիմնական դրույթների ներդրմանը և պետական կառավարման մարմիններում տեղեկատվության մշակումն ու տարածումը ապահովող կառույցների՝ հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների, ստեղծմանն ու կարողությունների զարգացմանը: Ի թիվս այլ նախաձեռնությունների, որպես նոր մտածողություն, նոր մշակույթ, սոցիալական ոլորտի նախարարություններում ներդրվել է «քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ուղեցույց- կանոնակարգերը», որոնց մշակումը իրականացվել է DFID «Հայաստան-հանրային ոլորտի բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում՝ շահագրգիռ ՀԿ-ների մասնակցությամբ: Պետական կառավարման մարմինների կողմից հրապարակային հաշվետվողականության ապահովման, ծառայությունների մատուցման և անմիջական շահառուներին տեղեկատվության տրամադրման գործընթացի բարելավման նպատակով, նույն ծրագրի շրջանակներում ներդրվել է տեղեկատվական կենտրոն-ընդունարանի գաղափարը: Սկզբնական փուլում նման կենտրոն-ընդունարան է ստեղծվել ՀՀ կառավարության 3-րդ մասնաշենքում տեղակայված նախարարությունների համար, այնուհետև նման կենտրոններ են ստեղծվել ՀՀ Տավուշի և Գեղարքունիքի մարզպետարաններում: Այս նախաձեռնությանը համահունչ է նաև «մեկ պատուհան» սկզբունքի կիրառմանը, ինչը տարածում է ստացել հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակում: Համանման նախաձեռնություններից էր ԵԱՀԿ-ի Հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ հակակոռուպցիոն հանրային ընդունարանների ստեղծումը:

Տեղեկատվական կենտրոն-ընդունարանների ստեղծումը հնարավորություն ընձեռեց համապատասխան գերատեսչություններին դյուրացնելու աշխատանքը քաղաքացիների հետ, կանոնակարգելու նրանց հանդիպումները անհրաժեշտ պաշտոնյաների հետ, ստանալու սկզբնական, էլեմենտար տեղեկատվություն իրենց հուզող հարցերի վերաբերյալ: Այս նոր կառույցների աշխատանքը ապահովելու, նախարարությունների և հանրային կառավարման այլ մարմինների կառավարման ունակությունները զարգացնելու, նրանց կողմից մատուցվող ծառայությունների որակը բարելավելու նպատակով ցուցաբերվել է մեծ օժանդակություն, ինչպես մարդկային ռեսուրսների զարգացման, այնպես էլ տեղեկատվության տրամադրման և քաղաքացիական հասարակության կառույցների կայացման նախնական պայմանների ստեղծման գործում:

## ԲԱՑԵՐԸ

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր չեն ընդունվել, որը իր հերթին հնարավորություն չի տալիս առավել մատչելի դարձնել օրենսդրությունը: Ընդհանուր առմամբ գրանցված առաջընթացին քաղաքացիական հասարակության և ձեռնարկատիրական շրջանակներում տիրում է անհանգստություն տեղեկատվության մատչելիության հիմնախնդրի նկատմամբ<sup>27</sup>:

Տեղեկատվական կենտրոնների և քաղաքացիների ընդունարանների աշխատանքի վերջնական արդյունքները ներկայումս դժվար կանխատեսելի են, քանի որ դրանց լիարժեք աշխատանքի համար պահանջվում է հետևողական զարգացում և միջոցների պլանավորում պետական բյուջեում:

## ԱՈՍՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետական կառավարման մարմինների հրապարակային հաշվետվությունների համակարգի ներդրումը պահանջում է.

- հզորացնել պետական կառավարման մարմիններում հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների, տեղեկատվական կենտրոնների

<sup>27</sup> տես OECD-ի կոռուպցիայի դեմ պայքարի «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլանի» 6-րդ հանդիպման Հայաստանի վերաբերյալ հաշվետվությունը, 13 դեկտեմբերի 2006թ. Փարիզ

կարողությունները՝ բնակչությանը պետական վարչակազմի կազմակերպման, գործունեության և որոշումների ընդունման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, քաղաքացիական հասարակության հետ աշխատանքի կազմակերպման և հետ հետադարձ կապի պահպանման գործում

- Ձևավորել կառավարության / պետական կառավարման մարմինների/ կողմից քաղաքացիական հասարակությանը հաշվետվողականության համակարգը, որը կներառի պետական կառավարման մարմիններում կոռուպցիայի վտանգների մասին տեղեկատվություն
- Պետական կառավարման մարմնի ղեկավարների գործունեության թափանցիկության ապահովման տեսանկյունից, նրանց կողմից տարվող քաղաքականության վերաբերյալ հրապարակային հաշվետվությունները դարձնել պարտադիր նորմ

## **ՀՈՂՎԱԾ 11. Դատական և դատախազական մարմիններին վերաբերող միջոցներ**

1. Հաշվի առնելով դատական իշխանության անկախությունը և կոռուպցիայի դեմ պայքարում նրա որոշիչ դերը՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան և առանց դատական մարմինների անկախությանը վնասելու, պետք է միջոցներ ձեռնարկի դատական մարմինների աշխատակիցների ազնվության մեծացման ուղղությամբ և նրանց շրջանում կոռուպցիայի հնարավորությունները բացառելու համար: Այդպիսի միջոցները կարող են ներառել դատական մարմինների աշխատակիցների գործողություններին վերաբերող կանոնները:

2. Համանման միջոցները, որոնք կիրառվում են սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, կարող են ներդրվել և կիրառվել Մասնակից պետությունների այն դատախազական մարմիններում, որոնցում դրանք չեն մտնում դատական իշխանության կազմի մեջ, բայց օգտվում են դատական մարմինների անկախությանը համանման անկախությունից:

## **ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ**

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիայի դեմ պայքարի բաժինը ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական կառուցվածքային ինքնուրույն ստորաբաժանում է: Բաժնի աշխատանքները կազմակերպվում են պետական շահերի աշտպանության, նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, դատարաններում քրեական գործերով մեղադրանքի պաշտպանության, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ապահովման, դատավճիռների և որոշումների օրինականության նկատմամբ իրականացվող վերահսկողության առարկայական սպասարկման սկզբունքով:

Բաժնի խնդիրներին ու գործառույթներն են

- կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և կանխարգելման աշխատանքների կազմակերպումը
- Կոռուպցիայի դեմ տարվող պայքարի իրականացման ուղղությամբ ՀՀ դատախազության, ոստիկանության, ռազմական ոստիկանության, ազգային անվտանգության, հարկային և մաքսային մարմինների հետ համագործակցության ապահովումը:
- Կոռուպցիայի դեմ պայքարին առընչվող վիճակագրության ամփոփումն ու հաշվետվությունների կազմումը
- կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ կազմակերպման նպատակով, օրենսդրության կատարելագործման վերաբերյալ նախապատրաստում է առաջարկություններ
- Ամփոփում և վերլուծում է կոռուպցիայի վերաբերյալ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսդրության կիրառման պրակտիկան, մշակում կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումներ
- քննարկում և լուծում է ստացված դիմումների, բողոքների և հաղորդումների ընթացքը:

Ինչպես ցույց է տալիս վերը նշված ուսումնասիրությունը ՀՀ գլխավոր դատախազության գործառույթները չեն նախատեսում հակակոռուպցիոն քաղաքականության էլեմենտներ: Այն հիմնականում կենտրոնացած է կոռուպցիայի վերաբերյալ փաստերով հապատասխան ուսումնասիրությունների, նյութերի նախապատրաստման, քրեական գործերի հարուցման, քրեական հետապնդման իրականացման, դրանց նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության իրականացման դատարաններում մեղադրանքի պաշտպանության, ինչպես նաև դատարանների օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների ու որոշումների դեմ բերված բողոքների պաշտպանության գործառույթներ:



## ԴԱՏԱՎՈՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Դատավորի վարքագծի կանոնները սահմանված են դատական օրենսգրքում «դատավորի վարքագծի կանոնները» գլուխ 12 ուն: Համաձայն օրենքի Դատավորի վարքագծի կանոնները պարտադիր են բոլոր դատավորների համար եվ սպառնիչ չեն: Դատավորների ընդհանուր ժողովը կարող է սահմանել վարքագծի լրացուցիչ կանոններ: Դատավորի վարքագծի կանոնների նպատակն է ապահովել դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը, ինչպես նաև նպաստել դատարանի նկատմամբ վստահության եւ հարգանքի ձեւավորմանը:

Այդ պահանջները վերաբերում են դատավորի ամենօրյա վարքագծին ինչպես դատարանում ի պաշտոնե գործելիս, այնպես էլ դատարանից դուրս:

Դատավորը, ինչպես նաև նրա հետ փոխկապակցված հայտարարատու հանդիսացող անձինք պարտավոր են Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի եւ եկամուտների հայտարարագրման համար օրենքով սահմանված կարգով ներկայացվող հայտարարագրի պատճենը ուղարկել Դատարանների մախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովին:

Դատարանների մախագահների խորհուրդն իր կազմից ձեւավորում է էթիկայի հարցերով, ուսումնական հարցերով հանձնաժողովներ: Դատարանների մախագահների խորհուրդը կարող է ստեղծել նաև այլ հանձնաժողովներ:

«Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն դատական ծառայողի նկատմամբ կիրառվում են հետևալ սահմանափակումները (տես Ներդիր 7)

Դատավորների համար սահմանված էթիկայի կանոնները ամբողջական են եվ համեմատության մեջ դնելով ՀՀ քաղաքացիական ու պետական ծառայության մյուս տեսակներով սահմանված էթիկայի կանոններին պետք է արձանագրել, որ դրանք առավել մանրամասն են կանոնակարգում դատավորների գործունեությունը, ինչպես դատական գործընթացներում, այնպես էլ դրանից դուրս: Սահմանված են էթիկայի կանոնների իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման մեխանիզմներ: Առավել հատկանշական է, որ ձևավորված է մեխանիզմ, ինչպես դատավորների, այնպես էլ դատական ծառայության մեջ գտնվող մյուս պրոֆեսիոնալների համար էթիկայի կանոնների պահպանման և պատժամիջոցների կիրառման համար:

ՀՀ դատախազության մասին նոր օրենքը նույնաման նորմեր և հղումներ է պարունակում դատական ծառայության մասին ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին:

## ԲԱՑԵՐԸ

Իհարկե այս կանոնները կարիք ունեն փորձարկման մեր իրական կյանքում, որից հետո անհաժեշտ է անդրադառնալ դրանց վերանայման կամ կատարելագործման խնդրին:

## ԱՈՍՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՀ սահմանադրության բարեփոխումների լույսի ներքո դատախազության և դատական նոր համակարգերի կայացման գործընթացում գործնականում փորձարկել դատախազության մասին և դատական օրենսգրքում ամրագրված հակակոռուպցիոն դրույթները, քաղած դասերի հիման վրա վերանայել և համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին:

## ՀՈԴՎԱԾ 12. Մասնավոր հատված

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է միջոցներ ձեռնարկի մասնավոր հատվածում կոռուպցիայի կանխարգելման, մասնավոր հատվածում հաշվապահական հաշվառման ստանդարտների և աուդիտի ուժեղացման և, համապատասխան դեպքերում, այդպիսի միջոցների չպահպանման համար արդյունավետ, համաչափ և զսպող ներգործություն ունեցող քաղաքացիաիրավական, վարչական կամ քրեական պատժամիջոցների սահմանման ուղղությամբ:

2. Այդ նպատակներին հասնելուն ուղղված միջոցները կարող են, *inter alia*, ներառել հետևյալը.

ա) իրավապահ մարմինների և համապատասխան մասնավոր կազմակերպությունների միջև համագործակցության խրախուսումը.

բ) համապատասխան մասնավոր կազմակերպությունների աշխատանքում բարեխղճության ապահովման համար նախատեսված ստանդարտների և ընթացակարգերի մշակման խրախուսումը, ներառյալ ձեռնարկատերերի և բոլոր համապատասխան մասնագիտությունների ներկայացուցիչների կողմից գործունեության բարեխղճ և պատշաճ իրականացման համար վարքագծի կանոնադրերը և շահերի բախումների առաջացման կանխարգելումը, ինչպես նաև առևտրային ձեռնարկությունների միջև և նրանց ու պետության միջև պայմանագրային հարաբերություններում բարեխղճ առևտրային պրակտիկայի օգտագործման խրախուսման համար.

գ) մասնավոր կազմակերպությունների գործունեության քափանցիկության խրախուսումը, ներառյալ, համապատասխան դեպքերում, այն իրավաբանական և ֆիզիկական անձանց նույնականացման միջոցները, որոնք մասնակից են կորպորատիվ կազմակերպությունների ստեղծմանը և դրանց ղեկավարմանը.

դ) մասնավոր կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ընթացակարգերի չարաշահումների կանխարգելումը, ներառյալ այն ընթացակարգերը, որոնք վերաբերում են առևտրային գործունեություն իրականացնելու համար պետական մարմինների կողմից տրամադրվող օժանդակություններին և լիցենզիաներին.

ե) շահերի բախումների առաջացման կանխարգելումը՝ համապատասխան դեպքերում և խելամիտ ժամկետով նախկին պաշտոնատար անձանց մասնագիտական գործունեության նկատմամբ կամ մասնավոր հատվածում պաշտոնատար անձանց աշխատանքի նկատմամբ սահմանափակումներ դնելու միջոցով՝ նրանց պաշտոնաթող լինելուց կամ կենսաթոշակի անցնելուց հետո, երբ այդպիսի գործունեությունը կամ աշխատանքը ուղղակիորեն կապված է այնպիսի գործառնությունների հետ, որոնք այդպիսի պաշտոնատար անձինք կատարել են իրենց պաշտոնում գտնվելու ժամանակաշրջանում, կամ որոնք վերահսկվել են նրանց կողմից.

զ) ապահովումը, որ մասնավոր կազմակերպությունները, իրենց կառուցվածքը և մեծությունը հաշվի առնելով, ունենան ներքին աուդիտորական վերահսկողության բավարար մեխանիզմներ՝ կոռուպցիոն դեպքերի կանխարգելման և բացահայտման գործում օգնություն ցույց տալու համար, և որպեսզի այդպիսի մասնավոր կազմակերպությունների հաշիվները և պահանջվող ֆինանսական տեղեկագրերը ենթակա լինեն աուդիտի և հավաստագրման ընթացակարգերի:

3. Կոռուպցիայի կանխարգելման նպատակներով յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք, իր ներքին օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական հաշվետվության ներկայացման, ինչպես նաև հաշվապահական հաշվառման և աուդիտի ստանդարտները կարգավորող կանոններին համապատասխան, կարող են անհրաժեշտ լինել հետևյալ արարքներն արգելելու համար, որոնք իրականացվում են իրավախախտումներից որևէ մեկը կատարելու համար՝ համաձայն սույն Կոմիտեի հայի.

ա) չգրանցված հաշվետվության ստեղծում.

բ) չհաշվառված կամ ոչ ճիշտ գրանցված գործարքների կատարում.

գ) գոյություն չունեցող ծախսերի հաշվառում.

դ) պարտավորությունների ներառում՝ առանց դրանց նպատակի ճշգրիտ սահմանման,

ե) կեղծ փաստաթղթերի օգտագործում, և

զ) օրենսդրությամբ նախատեսված ժամկետներից շուտ հաշվապահական փաստաթղթերի միտումնավոր ոչնչացում:

4. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է մերժի իրենցից կաշառք ներկայացնող այն ծախսերի առնչությամբ հարկումից ազատումը, որոնք համարվում են սույն Կոնվենցիայի 15-րդ և 16-րդ հոդվածներով այդպիսին ճանաչված իրավախախտումների տարրերից մեկը և, համապատասխան դեպքերում, այլ ծախսերի առնչությամբ, որոնք հետևել են կոռուպցիոն արարքներին:

## ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

2000 թվականից ի վեր ՀԲ-ի օժանդակությամբ Հայաստանում անց է կացվում վարչական կարգավորմամբ պայմանավորված ծախսերի (ՎԿՊԾ) վերաբերյալ հարցում: Ըստ ՎԿՊԾ հարցման արդյունքների՝ «այդ ծախսերը հսկայական գումար են կազմում, և վերջին մի քանի տարում այդ ուղղությամբ զգալի դրական տեղաշարժ չի արձանագրվել: Ընկերությունները պետք է կատարեն ֆորմալ և ոչ ֆորմալ վճարումների հետ չկապված ժամանակային ու դրամական այս ծախսերը՝ գործող կանոնակարգերի պահանջները բավարարելու նպատակով: Կանոնակարգերը կոռուպացված բյուրոկրատների կողմից կամայական կերպով են կիրառվում: Կոռուպցիայի բարձր մակարդակի հետևանքով ընկերություններն իրենց գործունեության զգալի մասը կազմակերպում են ստվերային հատվածում՝ պետական պաշտոնյաների կողմից շորթվող գումարները հնարավորինս նվազեցնելու համար: Օրենսդրական փոփոխությունները նախքան կիրառության մեջ դրվելը հազվադեպ են ներկայացվում հանրությանը: Պայմանագրի կնքման շուրջ օտարերկրյա ներդրողի և պետական մարմինների բանակցությունների վարման բյուրոկրատական ընթացակարգերը բարդ ու ժամանակատար են, քանի որ պայմանագիրը պետք է հաստատվի մի քանի նախարարությունների կողմից: Կոռուպցիան շարունակում է ազդեցություն բողմել ձեռնարկատիրությունների վրա: Կաշառակերությունը լայն մասշտաբներ ունի և կոռուպցիայի ամենատարածված ձևն է»<sup>28</sup>:

Համաշխարհային բանկի կողմից 2004 թվականին իրականացված գործարար միջավայրի ուսումնասիրության արդյունքներով, հարցման մասնակից ընկերությունների 84 տոկոսը դժգոհ է երկրում գործող օրենսդրական և վարչական կանոնակարգումից: Հայաստանում ձեռնարկատիրությունը կարգավորող օրենսդրությունն ընդհանուր առմամբ բավարար է, սակայն օրենքները պատշաճ կերպով չեն կիրառվում: Իշխանությունների կողմից ընկերությունների նկատմամբ ոչ միանման վերաբերմունքը և անազնիվ մրցակցությունը ձեռնարկատիրությունը խոչընդոտող հիմնական գործոններից են:

Հայաստանում ստվերային տնտեսության մեծ ծավալներն առաջ են բերում նաև վարչական կանոնակարգերի պահանջները բավարարելու հետ կապված մեծ ծախսերի՝ պաշտոնական և ոչ պաշտոնական վճարների տեսքով, գործարար ոլորտին առնչվող պետական քաղաքականությունների անկայունությամբ, հարկային և մաքսային մարմինների ուրույն գործելակերպով և թերություններով:

<sup>28</sup> ՀԱՅԱՍՏԱՆ, ԿՈՎԿԱՍՅԱՆ ՎԱԳՐԸ Հատոր 1. Կայուն տնտեսական աճի պահպանման քաղաքականություններ, ՀԱՍՏՇԽԱՐՀԱՅՅԻՆ ԲԱՆԿ, 2006թ էջ.91

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը Հայաստանում ընդունվել է 2000 թվականին, որի հետ միաժամանակ ստեղծվել է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը: 2001 թվականին հանձնաժողովն արդեն սկսել է իր վարույթում գործեր ընդունել:

Ձեռնարկատիրության թափանցիկությանն առնչվող հիմնական հարցերի, մասնավորապես ընկերության ռեեստրի, հիմնադիրների ու բաժնետերերի կազմի հրապարակայնության առումով Հայաստանն ԱՊՀ երկրների շարքում վերջին տեղերից մեկն է զբաղեցնում: Ընկերությունների ֆինանսական հաշվետվողականության որակը նույնպես դեռևս ցածր է: Արժեթղթերի վերաբերյալ օրենսդրության թերի լինելու պարագայում կորպորատիվ կառավարման մասով ամենաալուրջ թերությունները «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքն է և այդ ոլորտը կարգավորող մյուս օրենքները:

Թեպետ օրենքով սահմանված է, որ բոլոր ձեռնարկություններն իրենց ֆինանսական հաշվետվությունները պետք է պատրաստեն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների(ՀՀՀՀՄ) համաձայն, իրականում այդ ստանդարտների պահանջները չեն կատարվում կամ միայն մասամբ են կատարվում՝ անհրաժեշտ գիտելիքների բացակայության պատճառով:

## ԲԱՅՅԵՐԸ

ՀՀ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ձեռնարկատիրությանը առնչվող այլ օրենսդրական փաստաթղթեր չեն կարգավորում այդ կազմակերպություններում աշխատանքի բարեխղճության, ձեռնարկատերերի և մյուս համապատասխան աշխատակիցների վարքագծի կանոնակարգերը, շահերի բախումների առաջացմանը կանխարգելող սահմանափակումները: Այս ուղղությամբ ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի կողմից քայլեր չեն ձեռնարկվում բարեխղճ առևտրային պրակտիկայի խրախուսման ուղղությամբ:

Առևտրային գործարքների ոլորտը կարգավորող օրենքները թերի են, դրա հետևանքով պայմանագրերն ավելի շատ կնքվում են ոչ ֆորմալ դաշտում և այն անձանց միջև, ովքեր լավ են ճանաչում միմյանց: Դրա հետևանքով շուկա մուտք նոր մասնակիցների կողմից սահմանափակվում է:

## ԱՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում հստակեցնել բաժնետերերի՝ սեփականատեր-գործադիր տնօրեն հարաբերություններն ու դրանց տարանջատման սահմանները, տնօրենների խորհրդի պաշտոնական պարտականությունների ու հաշվետվողականության սահմանում, ձեռնարկատերերի և մյուս համապատասխան աշխատակիցների վարքագծի կանոնակարգերի, շահերի բախումների առաջացմանը կանխարգելող սահմանափակումների ներդրում:
- Հզորացնել ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատը, այն հաշվով, որ այն ունակություններ ունենա ձևավորելու մասնավոր կազմակերպությունների աշխատանքում բարեխղճության ապահովման համար ստանդարտներ և ընթացակարգեր, մասնավոր կազմակերպություններում ներդնելու բարեխղճ վարքագծի կանոնակարգեր և սահմանելու շահերի բախման կանխարգելման կանոններ: Այս գործում օգտակար է ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի կողմից Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի կանոնակարգերի և էթիկայի նորմերի<sup>29</sup> կիրառումը: ԱՄՊ-ի հետ հետ համագործակցության զարգացումը մասնավոր հատվածում կոռուպցիայի դեմ պայքարի գործում հնարավորություն կտա Հայաստանի մասնավոր հատվածում կրճատել կոռուպցիայի առաջարկը:

<sup>29</sup> մանրամասն տես <http://www.iccwbo.org/policy/anticorruption/id870/index.html>

### **ՉՈՒՎԱԾ 13. Հասարակության մասնակցությունը**

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր հնարավորությունների սահմաններում և իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի պետական հատվածից դուրս առանձին անհատների և խմբերի, ինչպես, օրինակ, քաղաքացիական հասարակության, ոչ կառավարական կազմակերպությունների և համայնքների հիմքի վրա գործող կազմակերպությունների, կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում ակտիվ մասնակցությունը նպաստելու համար և հասարակության կողմից կոռուպցիայի առկայության փաստի, դրա պատճառների և վտանգավորության բնույթի, ինչպես նաև դրա կողմից ստեղծվող սպառնալիքների գիտակցումը մեծացնելու համար:

Այդ մասնակցությունը պետք է ամրապնդվի այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են.

ա) թափանցիկության ուժեղացումը և որոշումների ընդունման գործընթացներում բնակչության ներգրավմանն աջակցելը.

բ) բնակչության համար տեղեկատվության նկատմամբ արդյունավետ մուտքը ապահովելը.

գ) հանրության տեղեկացվածության միջոցառումների իրականացումը, որոնք կնպաստեն կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ստեղծմանը, ինչպես նաև պետական կրթության ծրագրեր իրականացնելը, ներառյալ ուսումնական ծրագրերը դպրոցներում և համալսարաններում.

դ) կոռուպցիայի մասին տեղեկատվություն փնտրելու, ստանալու, հրապարակելու և տարածելու ազատությունը հարգելը, խրախուսելը և պաշտպանելը: Այդ ազատությունը կարող է ենթակա լինել սահմանափակումների, սակայն դրանք պետք է լինեն այնպես, ինչպես սահմանված է օրենքով, և որոնք անհրաժեշտ են.

i) այլ անձանց իրավունքները կամ համբավը հարգելու համար.

ii) ազգային անվտանգության կամ հասարակական կարգի պահպանման կամ բնակչության առողջության կամ բարոյականության պաշտպանության համար:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայում հիշատակված հակակոռուպցիոն մարմինները հայտնի լինեն հանրությանը, և պետք է ապահովվի մուտքը դեպի այդ մարմինները, այդ թվում՝ անանուն ձևով՝ ամեն մի դեպքի մասին նրանց հաղորդումներ տրամադրելու համար, որը կարող են դիտարկվել որպես իրավախախտում՝ սույն Կոնվենցիային համապատասխան:

### **ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ**

ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ծրագրում կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր առաքելությունը քաղաքացիական հասարակության ներգրավումն է: Համաձայն ռազմավարության կոռուպցիայի դեմ պայքարի քարոզարշավների իրականացումը հիմնականում թողնված է ՀԿ-ների և քաղաքացիական հասարակության մյուս միավորումներին: Չնայած դրան կառավարությունը դեռևս 2003թ. ռազմավարության հաստատումից հետո ՀԲ-ի աջակցությամբ մեծ թափով իրականացրեց կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի վերաբերյալ քարոզարշավներ: Բացի այդ, բոլոր միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող համանման միջոցառումները կատարվում են կառավարության հետ համաձայնեցված և համագործակցությամբ: Կառավարությունը ՀԿ-ներին 2007թ. ՀՀ պետական բյուջեում նախատեսել է շուրջ 150 մլն. դրամ գրանտներ, որտեղ նախատեսված է նաև կոռուպցիայի դեմ պայքարի քարոզարշավների և մոնիտորինգի կազմակերպում: Հանրային հեռուստատեսության 2 ալիքներով պարբերաբար կազմակերպվում են «Իմ իրավունքը» և «Հակաստվեր» հաղորդաշարերը, բացի այդ այս թեմայով ՄԱԶԾ-ի օժանդակությամբ կազմակերպվում են ժուռնալիստների և քաղաքացիական հասարակության, պետական պաշտոնյաների մասնակցությամբ թոք շոուներ: Քարոզարշավների, մամուլի, հեռուստատեսության, հասարակական կազմակերպությունների ակտիվացումը կոռուպցիայի դեմ պայքարում նոր ազդակներ

հաղորդեցին հասարակությանը և հատկապես պետական մարմիններին: Ըստ TI «կոռուպցիայի ընկալման ցուցանիշի» կայուն մակարդակի պատճառներից մեկն էլ կոռուպցիա երևույթի ընկալման գործում ՀՀ քաղաքացիների և բնակչության անտեղյակությունն է կամ սեփական մեկնաբանություններն ու պատկերացումները:

Հատկապես արդյունավետ են հասարակական կազմակերպությունների կամ քաղաքացիական հասարակության միավորումների կողմից կազմակերպվող քարոզչա-լուսավորչական ակցիաները: «Տեղեկատվության ազատություն» ՀԿ-ն կազմակերպել է տեղեկատվության հասանելիության և մատչելիության վերաբերյալ հանրահռչակման վերաբերյալ քարոզարշավ, ինտերնետային կայքում մշակել և տեղակայել է տեղեկատվական բազա «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի խախտումների վերաբերյալ<sup>30</sup> և ամեն տարի շնորհում է պարգևներ տեղեկատվության տրամադրման համար: Հայաստանում արտասահմանյան երկրների և միջազգային կազմակերպությունների կողմից օժանդակվող մի շարք ծրագրերի շրջանակներում իրականացվում են կոռուպցիայի վերաբերյալ բնակչության տեղեկատվայնացման միջոցառումներ: Մասավորապես, 2007թ. ԵԱՀԿ և ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող ծրագրերը ներառում են տեղեկատվայնացման միջոցառումներ: ՄԱԶԾ «Իրազեկման և հակազդեցության բարելավում» Հայաստանում կոռուպցիայի բացահայտման գործընթացում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է օժանդակել կառավարությանը առավել լրջորեն վերաբերելու կոռուպցիայի դեմ պայքարին՝ կազմակերպելով քարոզարշավներ, ուսուցանելով կոռուպցիոն գործերը հետաքննող լրագրողներին, գնահատելու և քաղաքացիական հասարակության ուժերով մոնիտորինգի ենթակետեր կոռուպցիոն ռիսկերը առողջապահության և կրթության բնագավառներում: «Եվրասիա» հիմնադրամը նույնպես իրականացնում է լրագրողների ուսուցում, ինչպես նաև մոնիտորինգ քաղաքացիական ծառայության համակարգում թափանցիկ և հրապարակային գործընթացների ապահովման ուղղությամբ:

Վերջին մի քանի տարիներին Հայաստանում դրական տեղաշարժեր են արձանագրվել նաև հանրային մասնակցության զարգացման ուղղությամբ: Քաղաքացիական հասարակության անդամների (հատկապես հասարակական կազմակերպությունների) և պետական կառավարման մարմինների միջև համագործակցության և հանրային քաղաքականության մասնակցային գործընթացներն լայն զարգացում ստացան հատկապես աղքատության հաղթահարման, հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման և իրականացման գործընթացներում: Այս շրջանում մշակվեցին և կիրառվեցին հանրային մասնակցային կառավարման տարբեր մեխանիզմներ, որոնք նախադեպ հանդիսացան և հետագայում մասնակիորեն կիրառվեցին և կիրառվում են տարբեր ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացներում, ինչպես նաև խոշոր պետական ծրագրերի իրականացման կառավարման խորհուրդների կազմում՝ մասնավորապես, Հայաստան-Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամի :

Հանրային կառավարման գործընթացին հանրության մասնակցությանը նպաստում է կառավարման տարբեր մարմիններին կից մասնագիտական, խորհրդատվական խորհուրդների ստեղծումը, որտեղ ներգրավված են քաղաքացիական հասարակության, մասնավորապես հասարակական կազմակերպությունների, ներկայացուցիչներ: Հանրային մասնակցության գործընթացի հաջողության ապահովմանն է ուղղված նաև ՀԿ-ների հզորացումը տարբեր դոնոր կազմակերպությունների կողմից, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և պետական կառավարման մարմինների միջև համագործակցության խթանումը: Այսպես օրինակ՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան շուրջ քսան նախարարությունների հետ համագործակցաբար մշակել և հրատարակել է նրանց կողմից մատուցվող հիմնական ծառայությունների մասին տեղեկաթերթիկներ: Այս աշխատանքները ֆինանսավորվել են դոնոր կազմակերպությունների կողմից:

ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ժամանակ առ ժամանակ իրականացվում են նաև խորհրդատվության /consultancy/ և հետադարձ կապի ապահովման մի շարք միջոցառումներ (օրինակ՝ իրավական փաստաթղթերի նախագծերի քննարկում, սեմինարներ, կլոր սեղան-քննարկումներ, հանրային կարծիքի ուսումնասիրություններ և այլն): Եթե նախկինում այսպիսի միջոցառումներ կազմակերպվում էին միայն դոնոր կազմակերպությունների նախաձեռնությամբ և օժանդակությամբ, ապա վերջին տարիներին մի շարք գերատեսչություններ այդպիսի միջոցառումներ անցկացնում են սեփական նախաձեռնությամբ: Այս կապակցությամբ

<sup>30</sup> www.foi.am

գործող օրենսդրական դաշտը թույլ է տալիս, եզակի դեպքերում, պարտադրում մասնակցային կառավարում: Այսպես օրինակ՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ ներկայումս կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք օրենքների նախագծերը Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող են հրապարակվել մանուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև կարող են դառնալ համաժողովրդական քննարկման առարկա, իսկ նախարարությունների կողմից մշակված իրենց ներքին գերատեսչական և կառավարության ու վարչապետի իրավական այլ ակտերի նախագծերը կարող են հրապարակվել ակտը մշակողների կամ իրավական ակտն ընդունող մարմնի որոշմամբ:

Դրական նախադեպ է նաև 2005 թվականի մայիսի 13-ի «ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցները հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհներ հատկացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագիրը:

## **ԲԱՑԵՐԸ**

Քաղաքացիական հասարակության և գործարար աշխարհի մոտ բացակայում են գործնական հնարավորությունները, պետական համապատասխան մարմինների հետ համատեղ մասնակցելու կոռուպցիայի դեմ պայքարում:

Կոռուպցիայի դեմ պայքար իրականացնող իրավապահ մարմինները դեռևս իրենց գործունեությունը չեն իրականացնում քաղաքացիական հասարակության ներգրավման ճանապարհով: Նրանք դժգոհում են քաղաքացիների անտարբերությունից, հրաժարվելուց ցուցմունքներ տալուց: «Բոլորը խոսում են կոռուպցիոն դեպքերի մասին, սակայն հրաժարվում են կոնկրետ փաստերի մասին ցուցմունքներ տալ»: Սա նշանակում է, որ դեռևս լիարժեք չէ վստահությունը և քաղաքացու անվտանգությունը իրավապահ մարմինների նկատմամբ:

Քաղաքացիական հասարակության մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում որոշումների կայացման գործընթացում մնում է շատ ցածր և ձևական մակարդակում:

## **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Այս տեսանկյունից խիստ կարևորվում է

- ԵԱՀԿ-ի Հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ հակակոռուպցիոն հանրային ընդունարանների օրինակով հանրապետության բոլոր մարզերում համանման ընդունարանների հիմնումը
- ՀՀ պետական կառավարման մարմինների, տվյալ բնագավառում տարվող ռազմավարության մշակման և իրականացման նպատակով մարմնի ղեկավարին կից քաղաքականության հարցերով խորհուրդներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավման հնարավորությունների ստեղծում
- Սկզբունքորեն պետք է վերանայվեն ՀՀ հակակոռուպցիան ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովում հասարակական կազմակերպությունների ընդգրկվածության մեխանիզմները, այն հաշվով որպեսզի հասարակական կազմակերպությունները իրենց համատեղ ժողովի կազմից ընտրեն ու առաջադրեն ներկայացուցիչներ մասնակցելու հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի աշխատանքներին:

Կոռուպցիայի մասին հանրության տեղեկացվածության միջոցառումների շարքում կարևորվում է

- Կոռուպցիայի դեմ պայքարում կրթա-լուսավորչական քաղաքականության իրականացումը, բնակչության կրթումը կամ մասնագիտական վերապատրաստումները: Կոռուպցիա երևույթի պատճառների, հետևանքների էության վերաբերյալ թեմաների ընդգրկումը կրթության պետական ծրագրերում:
- Կոռուպցիայի թեմայով լուսաբանող ժուռնալիստների վերապատրաստումը և կրթության կազմակերպումը, տեղեկատվության ազատության մասին

օրենսդրության պահանջների պահպանումը կարևոր քայլեր կլինեն կոռուպցիայի դեմ պայքարի լուսաբանման և բնակչության ընկալման վրա ազդելու գործում:

- հակակոռուպցիոն բոլոր մարմիններին կից հիմնել անանուն «տաք գիծ» հեռախոսա-էլեկտրոնային կապի միջոցներ,



## ՀՈԴՎԱԾ 14. Փողերի լվացման կանխարգելման միջոցներ

### 1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է.

ա) սահմանի կարգավորման և հսկողության համապարփակ ներքին ռեժիմ՝ բանկերի և ոչ բանկային ֆինանսական հիմնարկների, այդ թվում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք պաշտոնական կամ ոչ պաշտոնական ծառայություններ են տրամադրում դրամական միջոցների կամ արժեքների փոխանցումների հետ կապված, ինչպես նաև, համապատասխան դեպքերում, իր իրավասության սահմաններում՝ այլ մարմինների նկատմամբ, որոնք փողերի լվացման տեսակետից հատկապես խոցելի են, փողերի լվացում թույլ չտալու և դրա բոլոր ձևերը բացահայտելու նպատակներով. ընդ որում՝ նման ռեժիմն առաջին հերթին հիմնվում է հաճախորդի և, համապատասխան դեպքերում, սեփականատեր բնեֆիցիարի ինքնության նույնականացման նկատմամբ պահանջների, հաշվետվություն վարելու և կասկածելի գործարքների մասին հաղորդումներ ներկայացնելու վրա.

բ) առանց խախտելու սույն Կոնվենցիայի 46-րդ հոդվածը՝ ապահովի, որ վարչական, կարգավորող, իրավապահ և մյուս մարմինները, որոնք նշանակված են փողերի լվացման դեմ պայքարելու համար (ներառյալ, ազգային օրենսդրությամբ նախատեսված համապատասխան դեպքերում, դատական մարմինները), ընդունակ լինեն իր ներքին օրենսդրությամբ սահմանված պայմաններով ազգային և միջազգային մակարդակներում համագործակցություն իրականացնել և տեղեկատվություն փոխանակել, և այդ նպատակով պետք է քննարկի ֆինանսական օպերատիվ տեղեկատվության գծով ստորաբաժանում հիմնելու հարցը, որը պետք է գործի որպես փողերի լվացման հնարավոր դեպքերին առնչվող տեղեկությունների հավաքման, վերլուծության և տարածման ազգային կենտրոն:

2. Մասնակից պետությունները պետք է քննարկեն կանխիկ դրամական միջոցների և համապատասխան շրջանառու գործիքների՝ իրենց սահմաններով տեղափոխումները բացահայտելու և այդպիսի տեղափոխումները վերահսկելու ուղղությամբ պրակտիկ հնարավոր միջոցներ ձեռնարկելու մասին հարցը՝ տեղեկատվության պատշաճ օգտագործման ապահովմանն ուղղված երաշխիքների պահպանման պայմանով և օրինական կապիտալի տեղափոխման համար որևէ արգելք չստեղծելով: Այդպիսի միջոցները կարող են ներառել պահանջներ այն մասին, որ ֆիզիկական անձինք և առևտրային ձեռնարկությունները հայտնեն նշանակալից ծավալների կանխիկ դրամական միջոցների անդրսահմանային փոխանցումների և համապատասխան շրջանառու գործիքների հանձնման մասին:

3. Մասնակից պետությունները պետք է քննարկեն համապատասխան և գործնական միջոցների կիրառումը, որպեսզի պահանջեն ֆինանսական հիմնարկներից, ներառյալ՝ դրամական միջոցներ փոխանցող հիմնարկներից.

ա) միջոցների էլեկտրոնային փոխանցման համար ծառայողական ցուցակներում և դրանց հետ կապված հաղորդումներում մտցնել ճշգրիտ և բովանդակալից տեղեկատվություն ուղարկողի մասին.

բ) այդպիսի տեղեկատվությունը պահպանել վճարումն իրականացնելու ողջ շրջայի ընթացքում, և

գ) անցկացնել միջոցների փոխանցման խորացված ստուգում ուղարկողի մասին տեղեկատվության լրիվ բացակայության դեպքում:

4. Սույն հոդվածի դրույթների համաձայն կարգավորման և հսկողության ներքին ռեժիմ սահմանելիս և չխախտելով սույն Կոնվենցիայի որևէ այլ հոդված՝ Մասնակից պետություններին առաջարկվում է դեկավարվել տարածաշրջանային, միջտարածաշրջանային և բազմակողմ կազմակերպությունների համապատասխան նախաձեռնություններով, որոնք ուղղված են փողերի լվացման դեմ:

5. Մասնակից պետությունները պետք է ձգտեն դատական, իրավապահ մարմինների և ֆինանսական կարգավորման մարմինների միջև համաշխարհային, տարածաշրջանային, ենթատարածաշրջանային և երկկողմ համագործակցության զարգացմանը և խրախուսմանը՝ փողերի լվացման դեմ պայքարելու նպատակներով:

## ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

ՀՀ ԱԺ կողմից 14.12.2004թ. ընդունվել է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ-13 Ն օրենքը: Այս օրենքի ընդունմամբ, ինչպես նաև ընդհանուր առմամբ փողերի վլացման օրենսդրության ստեղծման գործում Հայաստանը բավականին առաջ է շարժվել: Այդ օրենքի համաձայն հիմնադրվել է Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ)՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական հետախուզության մարմնի պաշտոնական անվանումն է: ՖԴԿ-ն կազմակերպում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողերի «վլացման») և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը և այդ նպատակով՝ հավաքագրում, վերլուծում, փոխանակում ու տրամադրում է օրենքով սահմանված տեղեկություններ: ՖԴԿ հիմնական գործառույթն է՝ ստանալ, վերլուծել և փոխանցել ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող տեղեկություններ: ՖԴԿ գործունեության ուղղությունները և նպատակները սահմանված են ՖԴԿ եռամյա ստրատեգիայով: ՖԴԿ-ն հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկի առանձին կառուցվածքային ստորաբաժանում և իր գործունեության ընթացքում հաշվետու է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդին: Բացի վերոգրյալը ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածն է ՀՀ ԱԺ-ի կողմից 29.11.2006թ. ընդունված օրենքով ամբողջությամբ վերախմբագրվել և համապատասխանեցվել է միջազգային չափանիշներին, պատիժներ խստացվել են մասնավորապես. եթե նախկինում հոդվածի 1-ին մասում նախատեսված հանցավոր արարքի համար նախատեսվում էր տուգանք նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, ապա փոփոխված տարբերակը նախատեսում է միայն ազատազրկում մինչև 4 տարի ժամկետով եվ պարտադիր գույքի բռնագրավմամբ:

«Հանցավոր ժանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի վերանայման, ինչպես նաև դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում, զերծարարության, փողերի վլացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի բնագավառում միասնական քաղաքականության մշակման, համալիր ծրագրերի մշակման, իրավական ակտերի նախապատրաստման, ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացման նպատակով ՀՀ Նախագահի կարգադրությամբ ՀՀ ԿԲ-ին կից ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով:

## ԲԱՅՅԵՐԸ

Չնայած ձեռքբերված առաջընթացին դեռևս փողերի վլացման դեմ պայքարի օրենսդրությունը կարիք ունի բարելավվման, մասնավորապես այն պետք է համապատասխանեցնել միջազգային օրենսդրության պահանջներին: Հատկապես օրենքի վերանայված տեքստը պետք է նախատեսի հաճախորդի կամ գործարքների ստուգման բոլոր միջոցառումների ամբողջությունը՝ կապված ռիսկային խմբի հաճախորդների, այդ թվում քաղաքական գործիչների հետ: Բացի այդ, Ֆինանսական դիտարկումների կենտրոնի գործունեության արդյունքները դեռևս շոշափելի չեն, մինչ այժմ ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացվել մի քանի զեկույցներ կասկածելի գործարքների վերաբերյալ, սակայն այդ դեպքերից ոչ մեկը ամբողջությամբ չեն հետաքննվել: Կոռուպցիայի ոչ մի դեպք չի բացահայտվել:

Զգալի աշխատանքներ են պահանջվում Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կարողությունների բարձրացման ուղղությամբ, քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաները դեռևս անբավարար են բոլոր տեսակի հաշվետվությունների մշակման և ամբողջական վերլուծությունների կատարման համար:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փողերի լվացման կանխարգելման միջոցառումների շարքում առաջարկվում է.

- փողերի լվացման կանխարգելման օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային օրենսդրության ստանդարտներին
- հզորացնել Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կարողությունները, մասնավորապես հագեցնել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով
- բարելավել կենտրոնի կողմից մշակվող հաշվետվությունների և վերլուծությունների իրականացման մասնագիտական մակարդակը
- սերտացնել համագործակցությունը ՀՀ իրավապահ մարմինների հետ, մասնավորապես բարելավել ներկայացվող կասկածելի գործարքների վերաբերյալ վերլուծությունների ու հաշվետվությունների որակը՝ նպատակ ունենալով մեծացնել կոռուպցիայի բացահայտման դեպքերը

# Ն Ե Ր Դ Ի Ր Ն Ե Ր

## Ներդիր 1. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

<p style="text-align: center;"><b>Քաղաքացիական ծառայողը իրավունք չունի</b></p> <p>ա) կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:</p> <p>բ) անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:</p> <p>գ) լինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից:</p> <p>դ) իրականացնել քաղաքացիական ծառայողների քաղաքական գաղափարային սկզբունքի խախտումներ՝ իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել:</p> <p>ե) հոնորար ստանալ ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար:</p> <p>զ) ոչ ծառայողական նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը:</p> <p>է) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:</p> <p>ը) որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:</p> <p><b>2. Քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, քաղաքացիական ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում տաս և ավելի տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Քաղաքացիական ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալ եկամուտ:</b></p>
<p><b>3. Քաղաքացիական ծառայողին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միևյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:</b></p>
<p><b>4. Քաղաքացիական ծառայողն իրավունք չունի քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում:</b></p>

Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով կատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները երազանցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը.

ա) նախազուշացում.

բ) նկատողություն.

գ) խիստ նկատողություն.

դ) օրենքով սահմանված կարգով աշխատավարձի իջեցում.

ե) զբաղեցրած պաշտոնից ազատում՝ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնությամբ:

2. Մինչև կարգապահական տույժ նշանակելը պետք է բացատրություն պահանջվի կարգապահական խախտում թույլ տված քաղաքացիական ծառայողից: Կարգապահական տույժը նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից՝ չհաշված հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը: Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե վեց ամսից ավելի է անցել կարգապահական խախտում կատարելու օրվանից: Կարգապահական տույժի մասին քաղաքացիական ծառայողին հաղորդվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց եռօրյա ժամկետում: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ: Եթե քաղաքացիական ծառայողը կարգապահական տույժ նշանակելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված: Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը, եթե քաղաքացիական ծառայողը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում և դրսևորել է իրեն որպես բարեխիղճ ծառայող: / 33 ՔԾ օրենք հոդված 32/

3. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները երազանցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժերը քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

4. Քաղաքացիական ծառայության խորհրդի սահմանած կարգով և դեպքերում Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները երազանցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժերը կիրառվում են ծառայողական քննություն անցկացնելուց հետո:

5. Ծառայողական քննություն անցկացնելու ընթացքում քաղաքացիական ծառայողի ծառայողական պարտականությունների կատարումը մինչև 1 ամիս ժամկետով կարող է կասեցվել՝ քաղաքացիական ծառայողի վարձատրության պահպանմամբ:

## Ներդիր 2. ՀՀ Քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնները

Քաղաքացիական ծառայողը պարտավոր է պահպանել էթիկայի հետևյալ կանոնները.

ա) հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները (դրոշմ, զինանշանը, օրհներգը) եւ պետական լեզուն.

բ) հրապարակայնորեն չընդդիմանալ պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց կողմից վարվող քաղաքականությանը.

գ) զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել պետական մարմնի աշխատանքները կամ վարկաբեկել եւ հեղինակագրկել նրան.

դ) ղեկավարվել մարդասիրության, արդարության եւ ազնվության սկզբունքների վրա հիմնված բարոյական նորմերով.

ե) հարգել մարդու արժանապատվությունը՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից.

զ) հավատարիմ մնալ քաղաքացիական ծառայության պաշտոնի առաջին անգամ նշանակվելիս "Քաղաքացիական ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ իր կողմից տրված երդմանը.

է) լինել անաչառ, անկողմնակալ, զուսպ եւ օրինակելի.

ը) անհարկի չընդգծել իր պաշտոնական դիրքը.

թ) իր բանավոր եւ գրավոր շփումներում բացառել կոպտության դրսևորումը.

ժ) քաղաքավարի լինել պաշտոնատար անձանց, աշխատողների եւ ֆիզիկական անձանց հետ.

ժա) իր վարքով նպաստել հասարակության այն համոզմունքի եւ հավատի ձեւավորմանը եւ պահպանմանը, որ քաղաքացիական ծառայության համակարգը հիմնված է անկողմնակալության, ազնվության եւ արդյունավետության գաղափարի վրա.

ժբ) խուսափել ցանկացած տեսակի հովանավորչությունից եւ ծառայության ընթացքում օգտագործել միայն բարոյական միջոցներ՝ նպատակին հասնելու համար.

ժգ) իր վարքով իրեն կախվածության մեջ չդնել որեւէ անձից.

ժդ) խուսափել անհարկի խոստումներից, գիտակցել իր խոսքի արժեքը եւ կարեւորությունը, տված խոստման հնարավոր բացասական հետեւանքները.

ժե) չօգտագործել ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած տեղեկատվությունը՝ իր անձնական շահերի համար.

ժզ) հարգանքով վերաբերվել այլ ժողովուրդների եւ ազգերի էթնիկական առանձնահատկություններին, ավանդույթներին եւ սովորույթներին.

ժէ) պահպանել բարոյական նորմերով սահմանված էթիկայի այլ կանոններ:

**Ներդիր 3. Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին**

Օրենքի նպատակը գույքի և եկամուտների հայտարարագրման միջոցով Հայաստանի Հանրապետության պետական, համայնքների և պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեների նկատմամբ ֆիզիկական անձանց ունեցած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության, հայտարարագիր ներկայացնողների գույքի և եկամուտների հայտարարագրման նկատմամբ հասարակության վստահության, կոռուպցիայի դեմ պայքարի գործուն կառուցակարգերի ապահովումն է: Համաձայն օրենքի հայտարարագիր են ներկայացնում՝ քաղաքական ու հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձինք, պետական (քաղաքացիական ծառայություն, դատական ծառայություն, հատուկ ծառայություններ, ինչպես նաև դիվանագիտական և օրենքով նախատեսված այլ ծառայություններ) և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայության մեջ գնտվող անձինք, ինչպես նաև «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարեկան եկամուտների մասին հաշվարկ ներկայացնող ֆիզիկական անձինք:

- Հայտարարագրման ենթակա գույքի ցանկը ընդգրկում է.
- 1) անշարժ գույքը՝ այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքի նշանակությանն անհամաչափ վնաս պատճառելու: Ընդ որում, քառասուն միլիոն դրամը գերազանցող արժեք ունեցող բնակելի նշանակության շինությունները հայտարարագրվում են պարտադիր, իսկ քառասուն միլիոն դրամից պակաս արժեք ունեցող բնակելի նշանակության շինությունները՝ հայտարարատուի հայեցողությամբ.
  - 2) շարժական գույքը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, անվավոր, թրթուրավոր ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային փոխադրամիջոցը:
  - 3) դրամական միջոցը, բանկերում և (կամ) վարկային կազմակերպություններում ունեցած հաշիվների, այդ թվում՝ ավանդների գումարները (Հայաստանի Հանրապետության դրամը, արտարժույթը).
  - 4) արժեթուղթը (պարտատոմսը, չեկը, մուրհակը, բաժնետոմսը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը՝ բացառությամբ բանկային վկայագիրը) և (կամ) այլ ներդրումը (բաժնեմասը, փայբաժինը և այլն).
  - 5) թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորը.
  - 6) պահանջի իրավունքը.

Հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները՝

- 1) աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները.
- 2) գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) և հեղինակային վարձատրությունը.
- 3) ստացված փոխառությունները (վարկերը) կամ տրված փոխառությունների (վարկերի) դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցումը.
- 4) շահաբաժինները.
- 5) խաղատներում կամ շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները).
- 6) մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները).
- 7) նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները).
- 8) ժառանգության կարգով ստացված գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները).
- 9) ապահովագրական հատուցումները.
- 10) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը.
- 11) գույքը (բացառությամբ դրամական միջոցների) օտարելուց (այդ թվում՝ սույն օրենքի 6-րդ հոդվածում չնշված) ստացված եկամուտը.
- 12) վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը.
- 13) միանվագ վճարները.

14) գույքային իրավունքներից ստացված եկամուտը:

Օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է հարկային մարմինը: Հայտարարագրերի տվյալների արժանահավատությունը ճշտելու նպատակով հարկային մարմինը օրենքով սահմանված կարգով կարող է գործարքի մյուս կողմի մոտ կատարել ուսումնասիրություն:



**Ներդիր 4. Դատախազի ինքնուրույնությունը և նրա գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը և դատախազի ապաքաղաքականացվածությունը**

Դատախազը իր լիազորություններն իրականացնելիս ինքնուրույն է որոշումներ ընդունում՝ հիմնվելով օրենքների և ներքին համոզմունքի վրա և պատասխանատու է իր ընդունած որոշումների համար: Դատախազի գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտությունն արգելվում է: Դատախազը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատախազը ցանկացած հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Ընտրություններին դատախազը կարող է մասնակցել միայն որպես ընտրող: Դատախազը չի կարող մասնակցել նախընտրական քարոզչությանը: **(Հոդված 6., Հոդված 7)**

Գլխավոր դատախազին առընթեր գործում են էթիկայի և որակավորման հանձնաժողովներ:

Էթիկայի հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից: Էթիկայի հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի 1 տեղակալ, 2 դատախազ և Հանրապետության Նախագահի կողմից 3 տարի ժամկետով նշանակվող 4 իրավաբան անդամ: Էթիկայի հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:

Որակավորման հանձնաժողովը կազմված է 9 անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի 1 տեղակալ, 4 դատախազ, 4 իրավաբան գիտնական: Հանձնաժողովի անդամներին նշանակում է գլխավոր դատախազը՝ 3 տարի ժամանակով: Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը: Յուրաքանչյուր դատախազ կարող է լինել միայն մեկ հանձնաժողովի կազմում: **(Հոդված 23)**.

Դատախազ կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝ Հայաստանի Հանրապետությունում ստացել է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որի համարժեքության հաստատումը ձանաչվել է Հայաստանի Հանրապետությունում, տիրապետում է գրական հայերենին / Հոդված 32.:/

Դատախազությունում պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը՝  
1) ով դատական կարգով ձանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.  
2) ով դատապարտվել է հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից.  
3) ով ունի դատախազի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն, որոնց ցանկը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից  
4) ով չի անցել պարտադիր զինվորական ծառայություն, բացառությամբ այն անձանց, ովքեր ազատվել են նման ծառայությունից օրենքով նախատեսված կարգով ու հիմքով.  
5) ում նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքերով:

Դատախազներին աշխատանքի ընդունման և առաջխաղացման գործընթացը կազմակերպվում է դատախազների թեկնածությունների ու ծառայողական առաջխաղացման ցուցակների կազմման գործընթացով: Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է դատախազության որակավորման հանձնաժողովի կողմից տարին մեկ անգամ՝ որպես կանոն, յուրաքանչյուր տարվա հունվար ամսին, գլխավոր դատախազի սահմանած կարգով անցկացվող բաց մրցույթի միջոցով: Գլխավոր դատախազի հանձնարարությամբ դատախազների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների լրացուցիչ ստուգում:

Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, ներկայացվում են գլխավոր դատախազին, որն իր համար ընդունելի թեկնածություններին ընդգրկում է դատախազների թեկնածությունների ցուցակում:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձը գլխավոր դատախազի սահմանած կարգով դատախազության դպրոցում ուսումնառության ծրագիր է անցնում և հանձնում որակավորման քննություն: Որակավորման քննություն չհանձնած անձը հանվում է դատախազների թեկնածությունների ցուցակից:

Անձն ազատվում է ուսումնառության դասընթացներից և որակավորման քննություն հանձնելուց, եթե՝

- 1) ունի դատախազի, դատավորի, քննիչի պաշտոնում կամ փաստաբանի 3 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե չի անցել այդ պաշտոնը թողնելուց հետո 5 տարի.
- 2) իրավաբանական գիտությունների դոկտոր է.
- 3) իրավաբանական գիտությունների թեկնածու է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի 5 տարվա ստաժ:

Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակը ձևավորվում է որակավորման հանձնաժողովի կողմից՝

- 1) դատախազների հերթական ատեստացիայի ժամանակ.
- 2) արտահերթ կարգով, երբ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալները առաջարկություն են ներկայացնում որակավորման հանձնաժողով՝ դատախազի նկատմամբ որպես խրախուսում նրան առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով համապատասխան գնահատագիր: Դատախազն ընդգրկվում է դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում.
- 3) բացառիկ դեպքերում, երբ որակավորման հանձնաժողովը որոշում է կայացնում դատախազության դպրոցում ուսումնառությունից ազատված անձին միաժամանակ դատախազների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու վերաբերյալ: Հոդված 34 և 35.

**Ներդիր 5. դատախազի նկատմամբ կիրառվող սահմանափակումները և դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը**

1. Դատախազը չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:
  2. Դատախազին գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքի համար վճարումը չի կարող գերազանցել ողջամիտ չափը, այսինքն՝ այն չափը, որին նույնպիսի գործունեության համար համանման որակներ ունեցող, բայց դատախազ չհանդիսացող անձը կարող էր հավակնել:
  3. Դատախազն իրավունք չունի լինելու անհատ ձեռնարկատեր:
  4. Դատախազն իրավունք չունի լինելու տնտեսական ընկերությունների մասնակից կամ վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատու, եթե բացի ընկերության ընդհանուր ժողովին մասնակցելուց, դատախազը ներգրավվում է նաև այդ կազմակերպության կարգադրիչ կամ կառավարման այլ գործառնությունների իրականացմանը:
  5. Դատախազն իրավունք չունի՝
    - 1) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչ, բացառությամբ այն դեպքերի, երբ նա ներկայացնում է իր ընտանիքի անդամներին կամ իր խնամակալության (հոգաբարձության) ներքո գտնվող անձանց.
    - 2) իր պաշտոնական դիրքն օգտագործելու կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու.
    - 3) անդամակցելու արհեստակցական միության.
    - 4) կազմակերպելու գործադուլներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր կամ մասնակցելու դրանց.
    - 5) հոնորար ստանալու ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.
    - 6) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական գույքը և ծառայողական տեղեկատվությունը.
    - 7) ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
  6. Դատախազին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, ամուսնու զավակ, ամուսնու եղբայր և ամուսնու քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության հետ/ Հոդված 43/
1. Կարգապահական խախտման փաստի առթիվ գլխավոր դատախազի կամ համապատասխան վերադաս դատախազի կողմից դատախազի նկատմամբ հարուցվում է կարգապահական վարույթ:
  2. Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու կարգը սահմանում է գլխավոր դատախազը:
  3. Դատախազն իրավունք ունի բացատրություն տալու իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ:
  4. Կարգապահական վարույթը հարուցվում է կարգապահական խախտում հայտնաբերելու օրվանից հետո՝ 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան 12 ամիս այն կատարելու օրվանից:
  5. Կարգապահական վարույթի տևողությունը չի կարող 3 շաբաթից ավելի լինել, բացառությամբ դատախազի բացակայության դեպքերի: Այդ դեպքերում կարգապահական վարույթի տևողությունը կարող է երկարաձգվել դատախազի բացակայության ժամանակահատվածով:
  6. Սույն օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում կարգապահական տույժը կարգապահական վարույթ հարուցած անձի կողմից նշանակվում է կարգապահական վարույթի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:
  7. Սույն օրենքի 47-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերում կարգապահական վարույթի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գլխավոր դատախազը հարցը ներկայացնում է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը: Էթիկայի հանձնաժողովը կարգապահական խախտման հետ կապված հարցը քննելիս քվեարկությամբ որոշում է կարգապահական խախտման փաստի առկայությունը, կատարված խախտման մեջ

դատախազի մեղավորության հարցը, իսկ գլխավոր դատախազի կողմից նման հարցադրման առկայության դեպքում՝ նաև տվյալ իրավիճակում «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ կիրառելու հնարավորության հարցը: Էթիկայի հանձնաժողովի համապատասխան եզրակացության հիման վրա եռօրյա ժամկետում գլխավոր դատախազը նշանակում է կարգապահական տույժը:

8. Կարգապահական տույժի մասին դատախազին հաղորդվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

9. Մեկ կարգապահական վարույթի շրջանակներում, անգամ եթե նույն դատախազը կատարել է մի քանի կարգապահական խախտում, դատախազի նկատմամբ կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ:

10. Եթե դատախազը կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է տույժ չունեցող:

11. Դատախազն իրավունք ունի իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժը օրենքով սահմանված կարգով բողոքարկելու դատարան / Հոդված 48./

**Ներդիր 6. ԴԱՏԱՎՈՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

1. Դատավորը պարտավոր է հարգել օրենքը եւ ենթարկվել օրենքին:
2. Դատավորն ամենուր եւ ցանկացած գործունեությամբ զբաղվելիս պարտավոր է խուսափել դատական իշխանության հեղինակությունը վարկաբեկող կամ ոչ վայել վարքագիծ դրսևորելուց, ինչպես նաեւ նման տպավորություն ստեղծելուց:
3. Դատավորը պարտավոր է թույլ չտալ, որ իր ընտանեկան, սոցիալական կամ այլ բնույթի հարաբերությունները որեւէ կերպ ներազդեն դատարանում իր լիազորությունների իրականացման վրա:
4. Դատավորը պարտավոր է թույլ չտալ, որ ստեղծվի այնպիսի տպավորություն, կարծես այլ անձը, իր ընտանեկան, սոցիալական, պաշտոնական կամ այլ դիրքից ելնելով, կարող է ազդել դատավորի վրա:
5. Դատավորը պարտավոր է չօգտագործել դատավորի պաշտոնի հեղինակությունը ի շահ իրեն կամ այլ անձի:
6. Դատավորն իրավունք չունի Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված անձնական երաշխավորություն տալու հոգուտ որեւէ անձի:
7. Դատավորն իրավունք չունի քաղաքացիական, վարչական կամ քրեական վարույթի շրջանակներում բնութագիր տալու որեւէ անձի հատկանիշներին այլ կերպ, քան դատական ակտով:
8. Դատավորը չպետք է անդամակցի այնպիսի կազմակերպությունների, որոնք սերմանում են թշնամանք եւ խտրականություն՝ կախված ռասայից, սեռից, ազգային պատկանելությունից, դավանանքից կամ այլ հատկանիշներից, ինչպես նաեւ այն կազմակերպություններին, որոնք իրականացնում են օրենքով արգելված գործունեություն: Անդամությունը կրոնական կազմակերպություններին կամ հայրենակցական միություններին ինքնին չի համարվում սույն դրույթի խախտում:
9. Դատավորն իրավունք չունի որեւէ կերպ մասնակցելու սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ հետապնդող ծրագրերի համար միջոցների ներգրավման գործընթացին, ինչպես նաեւ թույլ տալու, որ այդ նպատակով օգտագործվի իր պաշտոնի հեղինակությունը: Այս դրույթը չի սահմանափակում դատավորի կողմից այդ ծրագրերի համար նվիրատվություն կամ նվիրաբերություն տալը:
10. Դատավորն իրավունք ունի առաջարկներ ներկայացնելու դրամաշնորհներ տվող կազմակերպություններին՝ իրավունքին, օրենսդրությանը, ինչպես նաեւ արդարադատության իրականացմանը վերաբերող ծրագրերի հետ կապված միջոցներ հատկացնելու վերաբերյալ, եթե այդ դատարանում չի քննվում կամ ողջամտորեն չի ակնկալվում գործ, որը կապված է այդ կազմակերպության շահերի հետ:

ըստ հոդված 90-ի Դատավորի պատշաճ վարքագիծը ի պաշտոնե գործելիս

1. Դատական իշխանությունն իրականացնելու հետ կապված դատավորի պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող այլ գործունեության նկատմամբ:

2. Դատական իշխանություն իրականացնելիս դատավորը պարտավոր է՝

1) քննել եւ լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են ինքնաբացարկ հայտարարելու հիմքեր.

2) գործը քննելիս եւ լուծելիս ապահովել պատշաճ մասնագիտական պատրաստվածություն.

3) թույլ չտալ, որ իր վրա ներազդեն թաքնված շահերը, հասարակական դժգոհությունը կամ քննադատված լինելու վախը.

4) դատական միստի բոլոր ներկաներից պահանջել կարգուկանոնի եւ էթիկայի

կանոնների պահպանում.

5) համբերատար, արժանապատիվ եւ կիրթ վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ դատավորը շփվում է ի պաշտոնէ: Դատավորը պարտավոր է նմանատիպ վերաբերմունք պահանջել դատարանի աշխատակազմից եւ այլ անձանցից, որոնք գտնվում են դատավորի ղեկավարության կամ վերահսկողության ներքո.

6) իր պարտականություններն իրականացնել անկողմնակալ: Դատավորն ի պաշտոնէ գործելիս պարտավոր է զերծ մնալ խոսքով կամ վարքով կողմնակալություն ցուցաբերելուց, ինչպես նաեւ նման տպավորություն ստեղծելուց: Նման կողմնակալությունն ընդգրկում է ինչպես որոշակի անձանց նկատմամբ կողմնակալությունը, այդպես էլ կողմնակալությունը՝ հիմնված ռասայի, սեռի, դավանանքի, ազգային պատկանելության, ֆիզիկական արատների, տարիքի, սոցիալական դրության եւ այլ նմանատիպ հատկանիշների վրա: Սույն կետը չի խոչընդոտում դատարանին անդրադառնալ ռասայի, սեռի, դավանանքի, ազգային պատկանելության, ֆիզիկական արատների, տարիքի, սոցիալական դրության, ինչպես նաեւ այլ նմանատիպ հատկանիշներին, եթե վերջիններս հանդիսանում են դատական քննության առարկա.

7) վերահսկել եւ թույլ չտալ դատարանի աշխատակազմին եւ այլ անձանց, որոնք գտնվում են դատավորի ղեկավարության կամ վերահսկողության ներքո, դրսեւորել կողմնակալություն.

8) քննությունն իրականացնել ողջամիտ ժամկետներում՝ խուսափելով անհարկի ձգձգումներից.

9) դատարանի միջոցները տնօրինել արդյունավետ՝ խուսափելով անհարկի ծախսերից.

10) չհաստատել այն դատական ծախսերը, որոնց չափը չի համապատասխանում դրանց ողջամիտ արժեքին.

11) զերծ մնալ որեւէ դատարանում քննվող կամ ակնկալվող գործի վերաբերյալ հրապարակայնորեն կարծիք հայտնելուց: Դատավորը պարտավոր է զերծ մնալ նաեւ իր կարծիքը ոչ հրապարակային հայտնելուց, եթե դա կարող է միջամտել գործի քննությանը: Դատավորը պարտավոր է նմանատիպ վարքագիծ պահանջել նաեւ դատարանի աշխատակազմից եւ այլ անձանցից, որոնք գտնվում են դատավորի ղեկավարության կամ վերահսկողության ներքո: Սույն կետը չի արգելում դատավորի կողմից իր պաշտոնեական պարտականությունների հետ կապված հրապարակային հայտարարություններ անելը կամ հասարակությանը դատարանում գործերի քննության ընթացակարգին իրազեկելը: Սույն կետը չի կիրառվում այն դեպքում, երբ դատավորը գործով հանդես է գալիս որպես կողմ.

12) դատական իշխանությունն իրականացնելուց դուրս չհրապարակել եւ չօգտագործել իր պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկությունները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

3. Դատավորը պարտավոր է գործի ելքով շահագրգռված յուրաքանչյուր անձի կամ նրա փաստաբանին հնարավորություն տալ իրականացնելու դատարանի կողմից լսվելու՝ օրենքով նախատեսված իրավունքը:

4. Դատավորն իրավունք չունի դատաքննությունից դուրս ինքնուրույն որոնելու ապացույցներ կամ հետախուզելու փաստեր՝ իր վարույթում գտնվող գործով:

5. Դատավորը պարտավոր է չնախաձեռնել, թույլ չտալ եւ հաշվի չառնել առանց դատավարության հակառակ կողմի կամ նրա փաստաբանի մասնակցության ("ex parte",

այսուհետ՝ ընդդիմազերծ) դատավարության մյուս կողմի կամ նրա փաստաբանի հետ շփումները, ինչպես նաև պարտավոր է հաշվի չառնել առանց դատավարության կողմերի մասնակցության որևէ այլ անձի հետ իր շփումները, որոնք վերաբերում են դատավորի կողմից քննվող գործին:

1) երբ հանգամանքների բերումով ընդդիմազերծ շփումներն անհրաժեշտ են կազմակերպական նպատակներով, ինչպես օրինակ նիստի անսաթիվը եւ ժամը համաձայնեցնելու կամ նմանատիպ այլ անհետաձգելի դեպքերում, եւ այն պայմանով, որ շփումները չեն վերաբերում գործի էությանը, դրանց արդյունքում դատավարության կողմերից մեկը չի ստանում դատավարական կամ այլ առավելություն մյուս կողմի նկատմամբ, եւ դատավորը անհապաղ հայտնում է այդ շփումների բովանդակությունը մյուս կողմին՝ նրան հնարավորություն տալով արձագանքելու:

2) երբ դատավորը կիրառման ենթակա իրավունքի վերաբերյալ հարցերով դիմում է գործի ելքում չչափազորված մասնագետի, պայմանով, որ կողմերը կտեղեկացվեն մասնագետի ինքնության եւ նրա տեսակետի վերաբերյալ, ինչպես նաև հնարավորություն կունենան այդ տեսակետի վերաբերյալ իրենց կարծիքը ներկայացնելու:

3) երբ դատավորը խորհրդակցում է այլ դատավորների կամ դատարանի աշխատակազմի այն աշխատակիցների հետ, որոնց գործառույթը դատավորին դատական իշխանություն իրականացնելիս օժանդակելն է: Եթե շփումը իրականացվում է գործը լսող տարբեր դատական ատյանների դատավորների միջև, ապա դրա բովանդակությունը հայտնվում է կողմերին:

4) երբ դատավորի կողմից ընդդիմազերծ շփումներ իրականացնելն ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

6. Եթե դատավորի կամքից անկախ տեղի են ունեցել անթույլատրելի ընդդիմազերծ շփումներ, ապա դատավորը պարտավոր է անհապաղ հայտնել դրանց բովանդակությունը այն կողմին, որը մասնակից չի եղել այդ շփումներին:

7. Դատավորը պետք է վերահսկի, որպեսզի նախատեսված սահմանափակումները պահպանվեն նաև դատարանի աշխատակազմի եւ այլ անձանց կողմից, որոնք գտնվում են դատավորի ղեկավարության կամ վերահսկողության ներքո:

8. Կազմակերպական լիազորություններ իրականացնելիս դատարանի նախագահը եւ յուրաքանչյուր դատավոր պարտավոր են առանց կողմնակալության իրականացնել իրենց կազմակերպական պարտականությունները՝ ապահովելով կազմակերպական ունակությունների պատշաճ մակարդակ: Նրանք պարտավոր են անհրաժեշտության դեպքում համագործակցել այլ դատավորների եւ դատարանի աշխատակազմի հետ: Դատարանի նախագահը եւ դատավորը պետք է նմանատիպ վերաբերմունք պահանջեն դատարանի աշխատակազմից եւ այլ անձանց կողմից, որոնք գտնվում են նրանց ղեկավարության կամ վերահսկողության ներքո:

#### Դատավորի ինքնաբացարկը

1. Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը ներառում են ի թիվս այլոց այն դեպքերը, երբ՝

1) դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ:

2) դատավորը՝ որպես մասնավոր անձ, ականատես է այն փաստերին, որոնք

վիճարկվում են դատաքննության ընթացքում.

3) դատավորը կամ նրա անուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) գործին մասնակցող անձ կամ մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ: Սույն օրենքի իմաստով անձի հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը եւ եղբայրները: Անձի հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաեւ վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Անձի հետ արյունակցական կապի մինչև 3-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաեւ վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք.

4) դատավորը գիտի, որ նա անձամբ կամ նրա անուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձինք տնտեսական շահ ունեն՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ: Չողված 91.

2. Դատավորը, որը ինքնաբացարկ է հայտնել, պարտավոր է կողմերին բացահայտել ինքնաբացարկի հիմքերը, ինչը ենթակա է բառացի արձանագրման: Ինքնաբացարկ հայտնած դատավորը, եթե համարում է, որ ինքը կարող է տվյալ գործով լինել անկողմնակալ, կարող է դիմել կողմերին՝ առաջարկելով իր բացակայությամբ քննարկելու ինքնաբացարկի անտեսման հարցը: Եթե կողմերը դատավորի բացակայությամբ որոշում են կայացնում դատավորի ինքնաբացարկը անտեսելու մասին, ապա այդ որոշումն արձանագրելուց հետո դատավորն իրականացնում է գործի դատաքննությունը:

Չողված 92-ում սահմանված է Դատավորի ոչ դատական գործունեություն իրականացնելու սահմանափակումները

1. Դատավորը չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առետրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից:

2. Դատավորի ոչ դատական գործունեության իրականացումը չպետք է՝

1) ողջամիտ կասկածներ առաջացնի որպես դատավոր անկողմնակալ գործելու նրա ունակության վերաբերյալ.

2) նսենացնի դատավորի պաշտոնի հեղինակությունը, կամ

3) խոչընդոտի դատական պարտականությունների պատշաճ իրականացմանը:

3. Դատավորը չպետք է զբաղվի փաստաբանական գործունեությամբ, այդ թվում՝ անհատույց հիմունքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ նա իր ընտանիքի անդամներին կամ իր խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձանց առանց հատուցման իրավաբանական խորհրդատվություն է մատուցում:

4. Դատավորը չի կարող գործել որպես գույքի հավատարմագրային կառավարիչ կամ կտակակատար, բացառությամբ, երբ նա առանց հատուցման գործում է իր ընտանիքի անդամի կամ իր խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձի գույքի կապակցությամբ:

5. Դատավորը կարող է զբաղեցնել ոչ առետրային կազմակերպությունում պաշտոն, եթե՝

1) իր գործունեությունը այդ պաշտոնում իրականացվում է անհատույց.



2) Եթե համապատասխան դատարանում կամ ստորադաս դատարանում չի քննվում կամ ողջամտորեն չի ակնկալվում գործ, որը կապված է այդ կազմակերպության շահերի հետ.

3) Եթե այդ պաշտոնը չի ենթադրում ֆինանսական միջոցների տնօրինում, կազմակերպության անունից քաղաքացիաիրավական գործարքների կնքում կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կազմակերպության գույքային շահերի ներկայացուցչության իրականացում:

6. Դատավորը պարտավոր է իր կողմից իրականացվող ոչ դատական գործունեության մասին հնարավոր սեղմ ժամկետում հայտնել Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովին՝ նշելով վերաբերելի մանրամասներ:

Հոդված 93-ում սահմանված են Դատավորի ոչ դատական գործունեությունից ստացվող հատուցումների վերաբերյալ դեպքերը

1. Դատավորին գիտական, մանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքի համար վճարումը չի կարող գերազանցել ողջամիտ չափը, այսինքն՝ այն չափը, որին նույնպիսի գործունեության համար համանման որակներ ունեցող, բայց դատավոր չհանդիսացող անձը կարող էր հավակնել:

2. ոչ դատական գործունեության համար դատավորը կարող է ստանալ ծախսերի հատուցում, եթե նման հատուցումների աղբյուրը ողջամտորեն չի կարող ընկալվել որպես դատական պարտականությունների կատարման հարցում դատավորի վրա ներգործություն, եւ ծախսերի հատուցումը սահմանափակվում է դատավորի (իրադարձությանը համապատասխան դեպքերում՝ նաեւ նրա ամուսնու) ճանապարհածախսի, սննդի եւ բնակության ողջամիտ ծախսերի իրական արժեքով:

Հոդված 94-ում սահմանված են Դատավորի՝ ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու արգելքը և սահմանափակումները

1. Դատավորն իրավունք չունի լինելու անհատ ձեռնարկատեր:

2. Դատավորն իրավունք չունի լինելու տնտեսական ընկերությունների մասնակից կամ վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատու, եթե՝

1) դա ողջամտորեն ենթադրում է դատավորի պաշտոնական դիրքի օգտագործում, կամ

2) բացի ընկերության ընդհանուր ժողովին մասնակցելուց, դատավորը ներգրավվում է նաեւ այդ կազմակերպության կարգադրիչ կամ կառավարման այլ գործառնությունների իրականացմանը, կամ

3) ողջամտորեն ենթադրվում է, որ առեւտրային կազմակերպությունը համապատասխան դատարանում հաճախ հանդես է գալու որպես գործին մասնակցող անձ:

3. Դատավորը պետք է ձգտի կառավարել իր ներդրումներն այնպես, որ նվազագույնի հասցնի այն գործերի քանակը, որոնցով նա պետք է ինքնաբացարկ հայտնի:

Հոդված 95. մանրամասն կանոնակարգում է Դատավորի կողմից նվերներ ընդունելու արգելքը եվ սահմանափակումները: Մասնավորապես

1. Դատավորը չպետք է որեւէ մեկից նվեր ընդունի կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տա: Դատավորը պետք է ձգտի զերծ պահել իր հետ բնակվող ընտանիքի անդամներին այդպիսի գործողություններից: Սույն օրենքի իմաստով «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի դատավոր չհանդիսացող այլ անձի: Սույն օրենքի իմաստով «նվեր» հասկացությունն ընդգրկում է նաեւ ներված պահանջը, անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը կամ մատուցված ծառայությունը, փոխառությունը, ուրիշի գույքի

անհատույց օգտագործումը եւ այլն:

2. Սույն մասով սահմանված սահմանափակումները չեն տարածվում՝

- 1) հրապարակային միջոցառումների ժամանակ սովորաբար տրվող նվերների եւ պարգեւների վրա.
- 2) ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող գրքերի, համակարգչային ծրագրերի եւ նմանատիպ այլ նյութերի վրա.
- 3) պաշտոնական արարողության ժամանակ կազմակերպվող հյուրասիրության վրա.
- 4) դատավորի հետ բնակվող ընտանիքի այլ անդամի կողմից իր ձեռնարկատիրական, մասնագիտական կամ այլ բնույթի գործունեության հետ կապված նվերի վրա, այդ թվում՝ այն նվերի, որը կարող է համատեղ օգտագործվել ընտանիքի այլ անդամների, այդ թվում՝ դատավորի կողմից, սակայն պայմանով, որ նման նվերը չի կարող ողջամտորեն ընկալվել որպես դատավորի վրա ներգործելուն նպատակաուղղված.
- 5) կենցաղային հյուրընկալության դեպքում տրվող նվերների վրա.
- 6) հատուկ իրադարձությունների, մասնավորապես՝ ամուսնության, հոբելյանի կամ ծննդյան կապակցությամբ ազգականից, բարեկամից կամ ընկերոջից ստացած նվերի վրա, եթե նվերն էությամբ եւ չափով ողջամտորեն համապատասխանում է իրադարձությանը եւ միմյանց միջեւ հարաբերությունների բնույթին.
- 7) ազգականից, բարեկամից կամ ընկերոջից ստացած նվերի վրա, եթե նվերը էությամբ եւ չափով ողջամտորեն համապատասխանում է միմյանց միջեւ հարաբերությունների բնույթին.
- 8) կրթաթոշակի, դրամաշնորհի կամ նպաստի վրա, որը տրվել է հրապարակային մրցույթի արդյունքում՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով եւ նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքում.
- 9) ֆինանսական ինստիտուտներից սովորական կամ ընդհանուր պայմաններով ստացած փոխառության վրա:

3. Եթե սույն հոդվածով թույլատրելի համարվող նվերները, որոնք օրացուցային տարվա ընթացքում ստացվել են նույն անձից, իրենց արժեքով գերազանցում են 250. 000 Հայաստանի Հանրապետության դրամը, կամ օրացուցային տարում ստացված թույլատրելի համարվող նվերները բոլոր նվերների ընդհանուր արժեքը գերազանցում է մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը, ապա դատավորը պարտավոր է դրա մասին հնարավոր սեղմ ժամկետում հայտնել Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովին:

4. Եթե դատավորին հայտնի է դառնում, որ իր հետ համատեղ չբնակվող արյունակցական կապի մինչեւ 3-րդ աստիճանի մեջ գտնվող անձին տրվել է նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես դատավորի վրա ներգործելուն նպատակաուղղված, ապա նա պարտավոր է դրա մասին տեղեկություն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, հայտնել Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովին:

5. Եթե դատավորին տրվել է սույն հոդվածով թույլատրելի չհամարվող նվեր, որը վերադարձնելը ողջամիտ ջանքերով հնարավոր չէ, ապա նա պարտավոր է այն հանձնել Հայաստանի Հանրապետությանը:

## Ներդիր 7. Դատական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Դատական ծառայողն իրավունք չունի՝

1) կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

2) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.

3) լինելու ներկայացուցիչ դատարանում, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու.

4) թույլ տալու դատարանների նախագահների խորհրդի հաստատած դատական ծառայողի վարքագծի կանոնների խախտումներ, իր ծառայողական դիրքն օգտագործելու անձնական կամ ծառայության շահերի հետ չառնչվող այլ նպատակներով.

5) հոնորար ստանալու ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.

6) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, դատական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.

7) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8) լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատական ծառայողը ցանկացած հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն.

9) համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիրությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

**ՆԵՐԴԻՐ 8: ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ**

ՍԱԿ-ի Կոռուպցիայի Դեմ կոնվենցիայի կանխարգելման միջոցներ բաժնի հոդվածը	ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականություն և ինստիտուցիոնալ մարմիններ	Պրոֆեսիոնալ պետական ծառայություն, պետական մարմինների թափանցիկ և հրապարակային գործունեություն	Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթաց և տեղեկատվության մատչելիություն
1.	2.	3.	4.
<p><b>Հոդված 5. Կանխարգելիչ հակակոռուպցիոն քաղաքականություն և պրակտիկան</b></p>	<p>ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության նոր ծրագրի մշակման հիմքում դնել հակակոռուպցիոն քաղաքականության այնպիսի հիմնադրույթները, որոնք հաշվի կառնեն կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման, օրենսդրության կիրառման և արդյունք ապահովող միջոցառումները:</p>	<p>ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարության մեջ արդյունքային՝ Թրանսպերենսի Ինթերնեյշնլ-ի «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը», «Ֆրիդոմ Հաուզ»-ի Տրանզիտ կոռուպցիայի գործակիցը, Համաշխարհային բանկի Ինստիտուցիոնալ կառավարման ցացանիշներից Կոռուպցիայի հսկողության ցուցանիշների շարքում ամրագրել և մշակել Հայաստանին բնորոշ կոռուպցիայի գնահատման համար անհարժեշտ սեփական ցուցանիշների համակարգը:</p>	

	<p>ՀՀ հակակոռուպցիոն նոր ռազմավարության, մշակման ժամանակ հաշվի առնել Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի, անցումային տնտեսության երկրների հակակոռուպցիոն ցանցին (OECD) և GRECO-ին անդամակցության երաշխավորություններ- հանձնարարականները:</p>		
<p><b>Հոդված 6. Կանխարգելիչ հակակոռուպցիոն մարմին</b></p>	<p>Հզորացնել Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի, Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կարողությունները՝ դրանք համալրելով մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանումներով, որոնք միաժամանակ քարտուղարական և մասնագիտական խորհրդատվություն և ծառայություններ կմատուցեն կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին ու մոնիտորինգի հանձնաժողովին:</p>	<p>Քննարկել քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքով, ինչպես նաև պետական ծառայության մյուս տեսակների մասին օրենքներով սահմանված շահերի բախման սահմանափակումների լիարժեք կիրառման, դրանք գործուն մեխանիզմների վերածման, օրենքի 24-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև վարչական կամ այլ պատժամիջոցներ կիրառելու լիազորությունները կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված կառույցին վերապահելու հարցը:</p>	

	<p>Որպես տարբերակ քննարկման առարկա կարող է դառնալ նաև կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և մոնիտորինգի հանձնաժողովի հիման վրա ՀՀ կառավարության կազմում կամ առանձին օրենքով կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված կառույցի ստեղծումը, որը իր վրա կվերցնի կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության և քաղաքականության իրականացումն ու կոռուպցիայի դեմ պայքարի իրավապահ մարմինների մասնագիտացված կառույցների գործունեության համակարգումը, կոռուպցիայի կանխարգելման հարցերով գիտելիքների ընդլայնման և տարածման գործառույթները</p>		
<p><b>Հոդված 7. Հանրային հատված</b></p>	<p>ներդնել քաղաքացիական ծառայողների աշխատանքի կատարողականի գնահատման համակարգը և դա շաղկապել քաղաքացիական ծառայողների վարձատրության և պարգևատրման համակարգերին:</p>	<p>«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծում հաշվի առնել հանրային ծառայողների կարգավիճակի, շահերի բախման, էթիկայի կանոնների, վերապատրաստման, ըստ արժանիքների ծառայողների ընտրության, վարձատրության, և կոռուպցիայի կանխարգելման դրույթները: Առավել կարևորվում է նախագծում արտացոլել նաև քաղաքական և հայեցողական պաշտոնյաների համար էթիկայի կանոնների, շահերի բախման վերաբերյալ սահմանափակումները:</p>	<p>Վերապատրաստման նոր հայեցակարգի ընդունմամբ ազատականացնել և վարչական կանոնակարգումներից ձերբազատել վերապատրաստման գործընթացները՝, հնարավորություն տալով վերապատրաստման գործող թեմատիկայում ընդգրկելու քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնների պահպանման, աշխատանքային կանոնակարգերի, հակակոռուպցիոն սահմանափակումների մեխանիզմների և քաղաքացիական ծառայողների դերին ու նրանց ունակությունների բարձրացմանը ուղղված դասընթացներ:</p>

<p><b>Հոդված 8. Պաշտոնատար անձանց վարքագծի կանոնագրքերը</b></p>	<p>օրենսդրորեն սահմանել էֆիկայի հանձնաժողովների կարգավիճակը, դրանց օժտել համապատասխան լիազորություններով և կայացնել այդ կառույցները պետական ծառայության համակարգում:</p> <p>ի դեմս հակակոռուպցիոն մասնագիտացված կառույցի ձևավորել պետական ծառայողների էֆիկայի կանոնների, շահերի բախման, ֆինանսական հաշվետվություններն /այդ թվում եկամուտների և գույքի հայտարարագրերը/ վերահսկող պատասխանատու մարմին:</p>	<p>ապահովել պետական ծառայողների համար եվրոպական միասնական ստանդարտներին համապատասխան էֆիկայի կանոնների կիրառումը, որոշ մասնագիտական ծառայությունների համար էֆիկայի առանձին կանոնակարգերի ընդունումը: սահմանել պետական ծառայողների համար էֆիկայի կանոնների խախտումների համար կարգապահական պատիժներ</p>	<p>կոռուպցիայի հարցերով պետական ծառայողների համար պրակտիկ ուղեցույցերի, շահերի բախման, էֆիկայի նորմերի, կոռուպցիոն դեպքերի ու փաստերի մասին տեղեկացման միջոցառումների իրականացումը և պատժամիջոցների կիրառումը զսպաշապիկ կղառնա կոռուպցիայի առաջարկի համար:</p>
		<p>խստացնել պետական ծառայողների պատասխանատվությունը եկամուտների, գույքի հայտարարագրման պարտավորությունների չկատարման համար:</p>	
<p><b>Հոդված 9. Հանրային զնուները և պետական ֆինանսների կառավարումը</b></p>	<p>հստակեցնել աուդիտորների կարգավիճակը, նրանց ներկայացվող էֆիկայի կանոնակարգերը և պահանջները, առավելապես խիստ պատժամիջոցներ կիրառել նրանց կողմից ցուցաբերվող խախտումների նկատմամբ</p>	<p>նպատակահարմար է վերանայել պետական զնուների գործակալության կարգավիճակը, ծառայության աշխատակիցների համար սահմանել ծառայողական կանոնակարգեր, էֆիկայի կանոններ, խիստ վերահսկողություն սահմանել զնուների գործընթացում սահմանված կանոնների պահպանման նկատմամբ</p>	<p>էլեկտրոնային զնուների համակարգի ներդրման, գործակալության էլեկտրոնային կայքի ստեղծման միջոցով պետական զնուների գործընթացները դարձնել, մատչելի, թափանցիկ և հրապարակային օգտվողների համար</p>

	ավարտին հասցնել հաշվապահական հաշվառման նոր ստանդարտների անցման գործընթացը:		
<b>Հոդված 10. Հրապարակային հաշվետվություն</b>	Ձևավորել կառավարության / պետական կառավարման մարմինների/ կողմից քաղաքացիական հասարակությանը հաշվետվողականության համակարգը, որը կներառի պետական կառավարման մարմիններում կոռուպցիայի վտանգների մասին տեղեկատվություն	Պետական կառավարման մարմնի ղեկավարների գործունեության թափանցիկության ապահովման տեսանկյունից, նրանց կողմից տարվող քաղաքականության վերաբերյալ հրապարակային հաշվետվությունները դարձնել պարտադիր նորմ	հզորացնել պետական կառավարման մարմիններում հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների, տեղեկատվական կենտրոնների կարողությունները՝ բնակչությանը պետական վարչակազմի կազմակերպման, գործունեության և որոշումների ընդունման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, քաղաքացիական հասարակության հետ աշխատանքի կազմակերպման և հետ հետադարձ կապի պահպանման գործում
<b>Հոդված 11. Ղատական և դատախազական մարմիններին վերաբերող միջոցներ</b>	ՀՀ սահմանադրության բարեփոխումների լույսի ներքո դատախազության և ղատական նոր համակարգերի կայացման գործընթացում գործնականում փորձարկել դատախազության մասին և ղատական օրենսգրքում ամրագրված հակակոռուպցիոն դրույթները, քաղած դասերի հիման վրա վերանայել և համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին:		



<p><b>Հոդված 12. Մասնավոր հատված</b></p>	<p>Հզորացնել ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատը, այն հաշվով, որ այն ունակություններ ունենա ձևավորելու մասնավոր կազմակերպությունների աշխատանքում բարեխղճության ապահովման համար ստանդարտներ և ընթացակարգեր, մասնավոր կազմակերպություններում ներդնելու բարեխիղճ վարքագծի կանոնակարգեր և սահմանելու շահերի բախման կանխարգելման կանոններ: Այս գործում օգտակար է ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի կողմից Առևտրի միջազգային պալատի ( ԱՄՊ) կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի կանոնակարգերի և էթիկայի նորմերի<sup>31</sup> կիրառումը: ԱՄՊ-ի հետ հետ համագործակցության զարգացումը մասնավոր հատվածում կոռուպցիայի դեմ պայքարի գործում հնարավորություն կտա Հայաստանի մասնավոր հատվածում կրճատել կոռուպցիայի առաջարկը:</p>	<p>«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում հստակեցնել բաժնետերերի՝ սեփականատեր-գործադիր տնօրեն հարաբերություններն ու դրանց տարանջատման սահմանները, տնօրենների խորհրդի պաշտոնական պարտականությունների ու հաշվետվողականության սահմանում, ձեռնարկատերերի և մյուս համապատասխան աշխատակիցների վարքագծի կանոնակարգերի, շահերի բախումների առաջացմանը կանխարգելող սահմանափակումների ներդրում:</p>	
<p><b>Հոդված 13. Հասարակության մասնակցությունը</b></p>	<p>ԵԱՀԿ-ի Հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ հակակոռուպցիոն հանրային ընդունարանների օրինակով հանրապետության բոլոր մարզերում հիմնել համանման ընդունարաններ</p>		<p>Սկզբունքորեն պետք է վերանայվեն ՀՀ հակակոռուպցիան ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովում հասարակական կազմակերպությունների ընդգրկվածության մեխանիզմները, այն հաշվով որպեսզի հասարակական կազմակերպությունները իրենց համատեղ ժողովի կազմից ընտրեն ու առաջադրեն ներկայացուցիչներ մասնակցելու հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի հանձնաժողովի աշխատանքներին:</p>

<sup>31</sup> մանրամասն տես <http://www.iccwbo.org/policy/anticorruption/id870/index.html>

	<p>ՀՀ պետական կառավարման մարմինների, տվյալ բնագավառում տարվող ռազմավարության մշակման և իրականացման նպատակով մարմնի ղեկավարին կից քաղաքականության հարցերով խորհուրդներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավման հնարավորությունների ստեղծում</p>		<p>Կոռուպցիայի դեմ պայքարում կրթա-լուսավորչական քաղաքականության իրականացումը, բնակչության կրթումը կամ մասնագիտական վերապատրաստումները: Կոռուպցիա երևույթի պատճառների, հետևանքների էության վերաբերյալ թեմաների ընդգրկումը կրթության պետական ծրագրերում:</p>
	<p>հակակոռուպցիոն բոլոր մարմիններին կից հիմնել անանուն «տաք գիծ» հեռախոսա-լեկտրոնային կապի միջոցներ,</p>		<p>Կոռուպցիայի թեմայով լուսաբանող ժուռնալիստների վերապատրաստումը և կրթության կազմակերպումը, տեղեկատվության ազատության մասին օրենսդրության պահանջների պահպանումը կարևոր քայլեր կլինեն կոռուպցիայի դեմ պայքարի լուսաբանման և բնակչության ընկալման վրա ազդելու գործում:</p>
<p><b>Հոդված 14. Փողերի լվացման կանխարգելման միջոցներ</b></p>	<p>փողերի լվացման կանխարգելման օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային օրենսդրության ստանդարտներին</p>	<p>բարելավել կենտրոնի կողմից մշակվող հաշվետվությունների և վերլուծությունների իրականացման մասնագիտական մակարդակը</p>	<p>սերտացնել համագործակցությունը ՀՀ իրավապահ մարմինների հետ, մասնավորապես բարելավել ներկայացվող կասկածելի գործարքների վերաբերյալ վերլուծությունների ու հաշվետվությունների որակը՝ նպատակ ունենալով մեծացնել կոռուպցիայի բացահայտման դեպքերը</p>
	<p>հզորացնել Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կարողությունները, մասնավորապես հազեցնել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով</p>		

